

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ

ՄԻՈՆ



2019

ԱՊՐԻԼ – ՄԱՅԻՍ – ՅՈՒՆԻՍ – ՅՈՒԼԻՍ ԹԻՒ 4-5-6-7
ՂԱ. 91 ՏԱՐԻ – ՆՈՐ ՇՐՋԱՆ



ՄԻՈՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ

ՂԱ. 91 ՏԱՐԻ – ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

2019	ԱՊՐԻԼ – ՄԱՅԻՍ – ՅՈՒՆԻՍ – ՅՈՒԼԻՍ	ԹԻԻ 4-5-6-7
2019	APRIL – MAY – JUNE – JULY	№ 4-5-6-7

SION

A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE
ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

VOL. 91



ST. JAMES PRESS
JERUSALEM

Իրաւատէր՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան,
Հայ Պատրիարք Երուսաղէմի

*Proprietor: His Beatitude Archbishop Nourhan Manougian
Armenian Patriarch of Jerusalem*

Գլխաւոր խմբագիր՝ Տ. Ներսէճ Աբեղայ Ալոյեան
Editor in Chief: Father Nerseh Aloyan

Խմբագրի օգնական՝ Յովհաննէս Սարկաւազ Պետրոսեան
Assistant Editor: Deacon Hovhannes Petrosyan



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

...Եւ մտեալ ի ներքս տեսին երիտասարդ մի, զի նստէր ընդ աջմէ կողմանէ եւ զարիւրեցան. եւ նա ասէ ցնոսա, «Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք, զՆազովրեցի զԽաչելեալն. չէ աստ այլ յարեալ. տեսէք զտեղին ուր եղին զնա»:

(Մարկոս ԺԶ:5-6)

Հրեաներու Պասեքի տօնի շաբթուան ընթացքին պատահած դէպքերը այնքան գլխապտոյտ արագութեամբ իրար յաջորդած էին, որ նոյնիսկ իրենց Տիրոջ թաղումէն ետք աշակերտները տակաւին կը փորձէին ըմբռնել պատահածը եւ չէին յաջողէր եզրակացութեան մը յանգիլ: Հաւանաբար անոնց մէջ գտնուեցան ոմանք որոնք սկսան խորհիլ ծաղկազարդի օրը թափօր կազմած ամբոխին նման. «փրկիչ» մը, «արքայ» մը կ'ակնկալէին, սակայն այդ կարծեցեալ արքան հասարակ աւազակներու հետ խաչի անարգ մահուան դատապարտուած էր ու թաղուած փոխ առնուած գերեզմանի մը մէջ:

Ահա ա՛յս է պատկերը որ կու տան մեզի այսօրուան Սուրբ Գրական ընթերցումները: Խումբ մը յուսահատ եւ յուսախաբ մարդիկ. այլեւս չկար իրենց Տէրն ու Վարդապետը: Իրենց երազները անգութօրէն փշրուած էին եւ հաւանաբար սկսած էին խորհիլ վերադառնալ իրենց ուռկաններուն կամ մաքսաւորի սեղաններուն, եւ փորձել մոռնալ պատահածը, կարծելով թէ դառն ու քաղցր տեսիլք մըն էր միանգամայն զոր ապրած էին հաւաքաբար: Թերեւս ալ անոնք սկսան երազի պէս վերապրիլ այն հին օրերը երբ հետեւած էին Գալիլիացի Վարդապետին՝ որ խօսած էր բարձր ու առաւել կեանքի մասին ու հիմա... ան մեռած էր:

Նազովրեցին խոստացած էր նոր թագաւորութիւն մը եւ երկա՛ր խօսած անոր մասին, բայց թագաւորներ հասարակ ոճրագործներու նման չէին մեռնել ոճրագործներու սահմանուած խաչերու վրայ: Ան խօսած էր Երկնաւոր Հայր Աստուծոյ մը մասին, բայց երբ ամէն ժամանակէ աւելի կարիքը զգացուած էր այդ Աստուծոյն,

Ան չէր երեւցած: Բնութեան ծոցին մէջ մեծցած այդ աշակերտներն ու մանց արժանապատուութիւնը վիրաւորուած էր, որովհետեւ կը կարծէին թէ իրենք հետեւած էին սովորական բախտախնդիրի մը ու կորսնցուցած իրենց ընտանիքներն ու քանդած ապագան: Անոնք կը խորհէին թէ քանի Յիսուս մեռած էր ուրեմն անոր վարդապետած սկզբունքները եւս կը դադրէին ըլլալէ ի զօրու: Ահա ասոնք էին զգացումներն ու տպաւորութիւնները մեր Տիրոջ աշակերտներուն եւ հետեւորդներուն Զատկական այդ առաջին առաւօտուն, այլեւս անիմաստ էր հաւատալ, ամէն ինչ վերջացած էր խայտառակ կերպով: Սակայն այս բոլորը տեղի ունեցան նախքան գերեզմանի քարին գլորիլը, որ պիտի գար դառնալու ամենահամոզիչ պատասխանը բոլոր անոնց՝ որոնք առաջնորդուած էին ու տակաւին կ'առաջնորդուին աւելի կասկածներով՝ քան թէ հաւատքով, կարելիին հաւանականութեամբ՝ քան թէ անկարելիին:

Հրէական սովորութեան համաձայն խումբ մը կիներ, թաղումէն երեք օրեր ետք, գլխաւորութեամբ Յիսուսի մօր՝ Մարիամի, գերեզման գացին օծելու անոր մարմինը, ու այդ ծանր խոհերու մէջ կը մտածէին նաեւ թէ ո՞վ պիտի գլորէր գերեզմանին ծանր քարը, որ իբր դուռ կը ծառայէր: Մագդաղենացի Մարիամ - որ մեծագոյն բարերարեալը եղած էր Քրիստոսի, քանի անոր ներուած էր իր անբարոյութեամբ հարուստ անցեալը - առաջինն էր որ հասած էր գերեզման եւ հսկայ քարը գտած մէկդի դրուած, ու ներսը գտնուող լուսազգեստ անծանօթ երիտասարդ մը կու տար անոր անհաւատալի ու անսպասելի աւետիսը. «Զէ աստ, այլ յարեաւ որպէս ասացն»:

Կրնա՞ք երեւակայել իւզաբեր կիներուն եւ ապա անոնցմէ վերջ դէպի իրենց Տիրոջ գերեզմանը վազող աշակերտներուն ուրախութիւնը, ուրեմն ան տակաւին կ'ապրէր ինչպէս որ ըսած էր, ուրեմն մահը այլեւս վախճանը չէր ամէն ինչի: Եւ այդ վայրկեանէն սկսեալ, Քրիստոսի հետեւորդներուն համար մահը այլեւս կը դադրէր սարսափելի եւ տգեղ իրականութիւն մը ըլլալէ ու կ'առնէր նոր իմաստ մը, մահով էր որ իրա՛ւ հաւատացեալին համար կը սկսէր նոր ու աւելի փառաւորեալ կեանք մը:

Զատկական առաւօտեան այդ գլորած քարը կու գար հիմնովին յեղաշրջելու մարդուն դիրքաւորումը մահուան հանդէպ: Այդ քարին գլորելէն ի վեր աշխարհ այլեւս նոյնը չմնաց: Ժամանակին, հին աշխարհի մարդիկ կը խորհէին թէ երկրագունդը հարթ ու տափարակ գետին մըն էր, սակայն Քոլոմպոսի դէպի Նոր Աշխարհ ուղեւորութեամբ գիտութեան եւ մարդոց միտքերուն վրայէն քար մը գլորեցաւ եւ մարդոց մտայնութիւնները հիմնովին փոխուեցան: Հին գիտնականներ ու աստուածաբաններ կը հաւատային թէ մեր երկրագունդը կեղդոնն էր տիեզերքին, բայց Կալիլէո գլորեց այդ սխալ կարծիքի քարը եւ աշխարհ փոխուեցաւ:

Այնպէս ինչպէս իւրաքանչիւր գիւտ քար մը գլորած է աշխարհի ու մարդոց միտքերէն եւ նոր մօտեցում տուած մարդուն դէպի բնութիւնն ունեցած իր հայեցակէտին, նոյնպէս եւ աւելիով, Քրիստոսի գերեզմանի քարին գլորումը կու գար մարդուն Կեանքի եւ Մահուան հանդէպ ունեցած գաղափարները հիմնովին յեղաշրջելու, եւ նոր ու աւելի դրական մօտեցում մը տալու մեզի ՄԱՀ եւ ԿԵԱՆՔ եզրերուն նկատմամբ:

Աստուածորդին խաչուեցաւ, թաղուեցաւ ու կ'ապրի շատերու սրտին մէջ, ինչպէս մենք կը սիրենք հերոսները ապրեցնել մեր սիրտերուն մէջ: Սակայն եւ այնպէս այս չէ Զատկուան իրա՛ւ պատգամը: Ճիշդ է որ աւետարանները կը նկարագրեն այս բոլորը հոգեխռով ձեւով, բայց ամենակարեւորը այն է որ աշակերտները գտան ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆ մը միայն, ու այդ նոյն թափուր գերեզմանի խորհուրդին է որ հաւատացած է Քրիստոսեան ամբողջ դարեր: Ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Եթէ մենք չենք հաւատար Քրիստոսի Յարութեան - որ է թափուր գերեզմանին - այն ժամանակ մեր հաւատքը անիմաստ է եւ մենք կը դառնանք մարդիկ առանց Աստուծոյ եւ առանց յոյսի»:

Այս է Զատիկական պատմութիւնն ու իրա՛ւ իմաստը անոր:

ԺԹ դարու Անգլիացի քարոզիչ մը, հետեւեալ ազդու եւ տպաւորիչ պատմութեամբ կու տայ Քրիստոսի մեղքին ու մահուան վրայ տարած յաղթանակին իսկական իմաստը: Ան կը պատմէ թէ ինչպէս օր մը շուկայէն անցած ատեն կը տեսնէ տղեկ մը, ձեռքին ժանգոտած ու հին վանդակ մը, եւ մէջը սովորական ճնճղուկ մը: Երբ քարոզիչը տղեկին կը հարցնէ թէ ի՞նչ կը մտադրէր ընել այդ ճնճղուկին, տղեկը անհոգօրէն եւ շփացած ձեւով կը պատասխանէ, «Քիչ մը խաղալէ ետք անոր հետ, պիտի սպաննեմ զայն»: Բարի քարոզիչը մտահոգ ճնճղուկին ճակատագրով, կը հարցնէ տղեկին եթէ կ'ուզէր ծախել թռչնակը եւ քանիի՞:

- Երկու ոսկի, կ'ըսէ տղեկը, որ ահաբեկօրէն մեծ գումար մըն էր պարզ ճնճղուկի մը համար:

Սակայն եւ այնպէս, քարոզիչը առանց առարկելու, վճարելով երկու ոսկիի գումարը, կ'առնէ վանդակը ու տղեկին ներկայութեան ազատ արձակելէ ետք թռչնակը, վանդակը հետը առնելով, կը բերէ եկեղեցի եւ կը դնէ խորանին վրայ:

Յաջորդ օրը Զատիկ ըլլալով, երբ հաւատացեալները կը սկսին հասնիլ եկեղեցի, խորանին վրայ կը տեսնեն ծռմռած, ժանգոտած ճաղերով, պարապ, հին վանդակ մը: Քարոզի ժամանակ, բարի կրօնականը կ'ընէ տղեկին ու ճնճղուկին պատմութիւնը եւ կ'աւելցնէ. «Ճիշդ նոյն բանն էր որ մեր Տէրը՝ Քրիստոս ըրաւ մեզի համար: Մեղք կոչուող ախտը մեզ առած էր իր վանդակին մէջ ու մենք կը տուայտէինք մահուան երկիւղէն բռնուած, բայց Քրիստոս գալով հարցուց մեղքին թէ ան ի՞նչ կը մտադրէր ընել մեզի՝ Մարդոց: Մեղքը կը պատասխանէ ըսելով.

- Նախ իրենց պիտի սորվեցնեմ իրար ատել եւ երբ ձանձրանամ իրենցմէ, պիտի սպաննեմ զիրենք:

Քրիստոս դարձեալ հարց կու տայ Մեղքին թէ ի՞նչ կը պահանջէր մեզ ազատ արձակելու համար. որուն ան կը պատասխանէ ըսելով.

- Սակայն ի՞նչ պէտք ունիս ասոնց. ասոնք քեզ պիտի ատեն, պիտի թքնեն վրադ ու ապա պիտի խաչեն քեզ: Սակայն եթէ անպայման կ'ուզես ունենալ զիրենք, ասոնք քեզի պիտի արժեն քու ամբողջ արցունքներդ ու երականերդ մէջ հոսող արիւնը. մէկ խօսքով քու ամբողջ կեանքդ»: Ու պատմութեան մնացած մասը ծանօթ է բոլորիս:

Ահա ա՛յս է Սուրբ Զատիկուան պատգամն ու իմաստը. մահը պարտուած է ու կեանքը՝ յաղթական: Մենք, պատմութեան ճնճղուկին նման, այլեւս ազատ ենք մեղքի ու մահուան վանդակներու պարփակումէն: Մենք այլեւս կրնանք քալել հըպարտ, բարձրագլուխ եւ արժանապատուութեամբ. կրնանք քալել լեցուած յոյսով եւ ուրախութեամբ մեր աչքերուն եւ սիրտերուն մէջ: Բայց մանաւանդ, մենք այլեւս կըրնանք մենք զմեզ զգալ զօրաւոր, քանի Քրիստոս աւելի զօրաւոր է քան աշխարհի բոլոր մեղքերն ու գերեզմանները: Զատիկը այսօր եւ յաւիտեան մեր Փրկչին հրաշափառ Յարութեամբ մեզի տրուած Նոր Կեանքն է:

Թերահաւատին կամ անհաւատին համար մահը վախճանն է ամէն ինչի, մեր կեանքերուն, մեր երազներուն, մեր բարեկամութիւններուն եւ մեր սէրերուն, որ իր հետ կը բերէ միայն վերջալոյսեր, տխրութիւն ու սուգ: Սակայն բոլոր անոնք, որոնց սիրտերը լեցուն են Աստուծոյ եւ Անոր Որդւոյն՝ Քրիստոսի հաւատքով, անոնց համար մահը կը դառնայ նոր արշալոյս մը, նոր սկիզբ մը եւ նոր կեանք մը լայնատարած հորիզոններով: Թող այս խոհերով, զգացումներով եւ սիրով ողջունենք իրար, ըսելով.

«ՁԵՁ ԵՒ ՄԵՁ ՄԵԾ ԱԻԵՏԻՍ, ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ»

ԿՐՕՆԱԿԱՆ

ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ԿԱՆԹԵՂԸ

Աւանդավէպի մը համաձայն Հայաստանի վրայ երկինքէն կախուած էր անշէջ կանթեղ մը, որ լոյս կու տայ դարերով: Մարդկային ձեռքեր չէին հասնէր այդ կանթեղին, որուն մէջ փոխանակ իւղի՝ կը վառէին սուրբին մաքուր արցունքները եւ որ չէր մարեր ահեղ վիշապ քամիէն: Երբ մութ խաւարը պատէր մեր շնաշխարհիկ երկիրը, երբ սոսկում եւ ահ կը տիրէր թոյլ, կասկածոտ սիրտերու, ով որ անմեղ էր, սիրով առլցուն եւ հաւատքով անսասան, ով որ կը նայէր, վառ յոյսերով դէպի Հայոց ապագան, ան կը տեսնէր մշտավառ ջահը, երկինքէն կախուած իբրեւ պայծառ աչքը Աստուծոյ, որ կը հսկէր երկինքէն:

Ամերիկացի հայագէտ միսիոնար մը քանի մը տարի առաջ կ'երթայ Հայաստան տեսնելու շատ հին վանք մը. երբ եկեղեցիին մէջ կանգնած հիացումով կը դիտէ տխուր գմբէթները եւ լռիկ դասերը, որոնց մէջ երբեմն կեանքի եռուզեռը կար եւ որոնք կը թնդային խանդավառ հաւատացեալներուն երգած հոգեգմայլ շարականներուն արձագանքներով, սակայն այժմ մեռելական լուսթիւն մը կը տիրէր: Ան կը մերձենայ սեղանին, եւ ի՛նչ մեծ զարմանք, կը տեսնէ վառ կանթեղ մը սեղանին առջեւ, կը զարմանայ, որովհետեւ գիտէր թէ ոչ մէկ հայ կ'ապրէր շրջակայքը. վերջապէս հարցաքննութենէ ետք կը հասկնայ թէ հայ ծերունիի մը թոյլ տրուած էր բնակելու վանքին մէկ անկիւնը: Այս ծերունին էր որ սովորութիւն ըրած էր ամէն առաւօտ այդ հին եկեղեցիին կանթեղին մէջ քիչ մը իւղ լեցնելու, անշէջ պահելու համար սեղանին կանթեղը: Այս կանթեղն էր տեսանելի նշանը, միւս՝ անտեսանելի կանթեղին:

Մեր նպատակն էր փորձ մընել ուրուագծելու բարոյական պատկերը մեր ժողովուրդին, հիմնուելով իր ժողովրդագիտութեան վրայ: Կը խոստովանինք թէ բոլորովին անեղծ չէ այս պատկերը, քանի մը մասեր աւրուած են. բայց պատկերը որչափ ալ խաթարուած ըլլայ մինչեւ որոշ աստիճան, ենթարկուելով շրջակայ ցեղերու ստորնացուցիչ ազդեցութեանց, կը յուսանք որ դարձեալ օր մը պիտի երեւի խորհրդաւոր կանթեղին մոգական լոյսին տակ, իր նախկին, սկզբնական մաքրութեան եւ գեղեցկութեան մէջ:

Այս առակի եզրակացութիւնն ու թելադրութիւնը մեր ժողովուրդին եւ մանաւանդ երիտասարդ սերունդին այն է, որ եկեղեցի երթան եւ իրենց աղօթքները յարատեւօրէն եւ հաւատքով լեցուն մատուցեն առ Աստուած, որոնք պարտին բղխիլ խոնարհ ու համեստ հոգիներէ, մեղքերէ բոլորովին պարպուած սիրտերէ, որովհետեւ մենք Աստուածային շնորհներու կ'արժանանանք ո՛չ թէ մեր կարծեցեալ բարեգործութիւններով, այլ միայն Իր գութին շնորհիւ: Եւ ով որ անմեղ է, սիրով առլցուն եւ հաւատքով անսասան, ով որ կը նայի, վառ յոյսերով դէպի Հայոց ապագան, միայն ան կը տեսէ Լուսաւորչի մշտավառ ջահը, երկինքէն կախուած իբրեւ պայծառ աչքը Աստուծոյ, որ կը հսկէ երկինքէն:

Մ. Գ. ԾԱԼԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՎԱՍԱՐԵԱՆ

ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ

Հայերը Երուսաղէմում մի շարք արուեստների ու տեխնոլոգիական գիւտերի, այդ թւում՝ լուսանկարչութեան առաջին ներմուծողներն են: Սուրբ Երկրի Հրեայ եւ Մահմետական համայնքների հակապատկերապաշտ վերաբերմունքը թոյլ չէր տալիս նրանց զբաղուել լուսանկարչութեան արուեստով, որի պատճառով էլ Սուրբ Երկրում տասնամեակներ շարունակ լուսանկարչութիւնը Հայերի մենաշնորհն էր¹:

Երուսաղէմի առաջին լուսանկարիչը՝ Եսայի Պատրիարք Կարապետեանը (1865-1885), վաղ տարիքից հետաքրքրուել է արհեստներով եւ արուեստներով: Տակաւին պատանի՝ իր ծննդավայր Թալասից տեղափոխուել է Կ. Պոլիս, որտեղ սովորել է ատաղձագործութեան արհեստը: 1844 թ. նա դարձել է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ եւ մեծ հետաքրքրութիւն ցուցաբերել լուսանկարչութեան հանդէպ²:

Եսայի Պատրիարքն իր «Կենսագրական Նոթեր»-ում գրում է, որ բազում աղաչանքներից յետոյ 1859 թ. Յովհաննէս Զմիւռնացի Պատրիարքից (1850-1860) հինգ-վեց ամսով Կ. Պոլիս մեկնելու թոյլտուութիւն է ստացել՝ Հայ լուսանկարիչներից նրանց արուեստը սովորելու նպատակով:

Կ. Պոլսում նախ տասնհինգ օր հիւրընկալուել է Հայրապետ Սաւալանեանի տանը, որն էլ իր ընկերների հետ միջնորդել է Պօղոս Թաթիկեան անունով մի Հայ լուսանկարչի, որպէսզի վերջինս Երուսաղէմից ժամանած հոգեւորականին սովորեցնի արեւանկարի գաղտնիքները: Սակայն Թաթիկեանը, իր օրապահիկը կորցնելու մտավախութեամբ, նրան ոչինչ չի սովորեցրել:

Զյուսահատուելով՝ Եսայի Վարդապետը հանդիպում է Կ. Պոլսում Երուսաղէմի Պատրիարքի փոխանորդ Իսահակ Վարդապետ Բայբուրդցուն, որը, հաւանաբար, միջնորդում է, որ վերջինս աւելի հմտանայ Ներսէս պէյ Դադեանի եւ ուստայ Գալուստի որդու՝ Որդիք աղայի մօտ: Վեց ամիս անց, արդէն բաւական հմտացած, նա վերադառնում է Երուսաղէմ եւ սկսում զբաղուել լուսանկարչութեամբ³:

1863 թ. Ապրիլի 25-ին Զմիւռնացի Մահմետի Յովհաննէս Սպարթալեանի եւ նոյն թուականին Սուրբ Երկիր ուխտի եկած Զմիւռնացի այլ ուխտատւորների ֆինանսական աջակցութեամբ Եսայի Վարդապետը մեկնում է Անգլիա՝ Մանչեսթր քաղաքում

¹ Ըստ Վիկտոր-Համելի՝ Օսմանեան կայսրութեան հայերը եւ առհասարակ քրիստոնէաները ոգեւորութեամբ են ընդունել լուսանկարչութեան գիւտը, որովհետեւ նրանք ունէին անհրաժեշտ հմտութիւն՝ այն վարպետօրէն սովորելու, ինչպէս նաեւ լուսանկարչութեան տեխնոլոգիայի համար պահանջուած ֆիւիական ու այլ տարրեր ձեռք բերելու հնարատրութիւն:

Լուսանկարչութեան արուեստը զարգացնելու եւ դրանից տնտեսական շահ ստանալու նպատակով քրիստոնէաները ֆաշայեւում էին նաեւ իրենց առաջնորդների կողմից (Victor-Hummel Ruth, Culture and Image: Christians and the Beginnings of Local Photography in 19th Century Ottoman Palestine, in The Christian Heritage in the Holy Land, edited by Anthony O'Mahony with Göran Gunner and Kevork Hintlian, London, England: Scorpion Cavendish, 1995, p. 183):

² Krikorian A. Haig, Lives and Times of the Armenian Patriarchs of Jerusalem: Chronological Succession of Tenures, 2009, p. 416.

³ Կարապետեան Պատրիարք Եսայի, Կենսագրական Նոթեր, «Սիոն», 1938, թիւ 2, էջ 46:

կատարելագործելու լուսանկարչութեան արուեստի իր վարպետութիւնը: Նա գրում է, որ քսանմէկ օր «սաստիկ ալեկոծութիւն եւ մեծ վտանգ մի անցուցանելոյ» եւ մահից «մազապուրծ պրծեալ»՝ Մայիսի 24-ին հասնում է Լիվերպուլ, որտեղից էլ շոգենաւով՝ Մանչեսթր: Այստեղ նրան ընդունում են ջերմօրէն:

Մանչեսթրում Հայ լուսանկարիչների մօտ նա մնում է մինչեւ Յուլիսի 12-ը, որտեղ սովորում է յատկապէս գալուստանաձուլման եւ լուսանկարչութեան վերարտադրման տեխնոլոգիական գործընթացները: Ապա, Անգլիական 80 ոսկի նուէր ստանալով, մեկնում է Փարիզ⁴:

Ֆրանսիայի մայրաքաղաքում Եսայի Վարդապետը դարձեալ Հայ լուսանկարիչներից սովորում է լուսանկարչութեանը վերաբերող նորութիւններ, յատկապէս՝ ծաւալադիտակ (stereoscope) պատրաստելու տեխնիկան: Երկու ամիս անց իր բարերար Սպարթալեանի ֆինանսական աջակցութեամբ ձեռք է բերում լուսանկարչութեան համար անհրաժեշտ բոլոր գործիքներն ու տեխնիկական սարքաւորումները եւ վերադառնում Երուսաղէմ⁵:

Եսայի Վարդապետը 1864 թ., հակառակ իր ցանկութեան, ընտրւում է Երուսաղէմի Հայ Պատրիարք, եւ էջմիածնում Եպիսկոպոս օծուելուց յետոյ վերադառնում է Կ. Պոլիս⁶: Պատրիարքութեան գործերը կարգաւորելու նպատակով նա, ստիպուած, մի քանի ամիս մնում է Կ. Պոլսում: Այդ ընթացքում ծանօթանում է Աբդուլլահեան եղբայրների հետ, որոնք 1863 թ. դարձել էին արքունիքի պաշտօնական լուսանկարիչներ: Պատրիարքը նրանցից նոյնպէս սովորում է լուսանկարչութեան արուեստին վերաբերող նորարարութիւններ, մանաւանդ՝ բորակ պատրաստելու տեխնիկան⁷:

Տիգրան Սաւալանեանցը գրում է, որ թէեւ Եսայի Վարդապետն ընտրւում է Երուսաղէմի Պատրիարք, սակայն չի հրաժարւում լուսանկարչութեամբ զբաղուելուց. նա ամէն օր կատարելագործւում էր այդ արուեստում: Աւելին՝ վանքում հիմնադրած լուսանկարչատունը յանձնում է իր աշակերտներից մէկին, իսկ պատրիարքարանում մէկ սենեակ վերածում գալուստանաձուլման արհեստանոցի ու շարունակում զբաղուել իր սիրած արուեստով⁸:

Իր գահակալութեան տարիներին Եսայի Պատրիարքը բազմաթիւ հայորդիների՝ թէ՛ Երուսաղէմից եւ թէ՛ տարբեր բնակավայրերից, սովորեցնում է իր արուեստը: Նրա սաներից, օրինակ, Կարապետ Սարկաւազ Գրիգորեանը, Երուսաղէմում հիմնադրում է իր լուսանկարչատունը եւ այնքան է հմտանում այս գործում ու այնպիսի համբաւ է ձեռք բերում, որ երբ Գերմանիայի Վիլհելմ II Կայսրը (1888-1918) 1898 թ. այցելում է Երուսաղէմ, Գրիգորեանը՝ որպէս քաղաքի լաւագոյն լուսանկարիչ, լուսանկարում է նրա այցը:

Անկասկած, Եսայի Պատրիարքը, Սուրբ Երկիր ներմուծելով լուսանկարչութեան արուեստը, նպաստել է տարածաշրջանում նրա տարածմանն ու զարգացմանը: Հայերի՝ Սուրբ Երկիր լուսանկարչութեան արուեստի ներմուծումը բազում օրինակներից մէկն է, որը փաստում է, թէ ինչպէս է Հայն իր հայրենիքից հեռու նշանակալի ներդրում անում իրեն հիւրընկալած երկրում՝ նպաստելով նրա հասարակական, կրթական, կրօնական, տնտեսական եւ այլ բնագաւառների զարգացմանը:

⁴ Krikorian A. Haig, *Lives and Times...*, 2009, p. 418.

⁵ Viktor-Hummel Ruth, *Culture and Image...*, pp. 186-187.

⁶ Իր «Կենսագրական Նօթեր»-ում Եսայի Պատրիարքը գրում է, որ լուսանկարչութեան արուեստը սովորելու նպատակով Անգլիա մեկնելն իրականում պատրուակ էր՝ Պատրիարք ընտրուելուց խուսափելու համար («Սիոն», 1938, թիւ 2, էջ 46):

⁷ Viktor-Hummel Ruth, *Culture and Image*, p. 188.

⁸ Սաւալանեանց Տ. Հ. Թ., Պատմութիւն Երուսաղէմի, հ. Բ, 2000, էջ 1141:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ԱՇՈՏ ԳԱԼՍՏԵԱՆ**

*Խաչատուր Աբովեանի անուան ՀՊՄՀ
բանասիրական բաժնի ղեկան, բ. գ. թ.,
դոցենտ*

**ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՎԱԻԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՆՐԻ ՀԻՄՆԱԳԾԵՐԸ**

Հայ գեղարուեստական վաերագրութեան¹ արմատները ձգուում են դարերի խորքը: Հնագույն ժամանակներից գեղարուեստական գրականութեանը եւ մանաւանդ բանահիւսութեանը յայտնի է ճանապարհորդութիւնն իբրեւ գրական հնարանք: Ճամբորդական նօթերն առաւելապէս գրառուել են պատմողական բնոյթի աշխատութիւններում եւ նամակներում: Ալեքսանտր Մեծը նամակների ձեւով էր պատմում իր ճամբորդութեան մասին:

Միջնադարեան, վերածնութեան եւ յաջորդ ժամանակների հեղինակները, օգտուելով ընձեռած հնարաւորութիւններից, գրել են գեղարուեստական վաերագրութեան բազմաթիւ էջեր:

Դեռեւս վաղ միջնադարում ստեղծուել է Յիշատակարանային գրականութիւն, որի հեղինակները մի կողմից՝ եղել են իրադարձութիւնների ականատես, միւս կողմից՝ ըստ կարելւոյն գրի են առել այդ ամէնը: Մեզանում յուշագրութեան սկիզբը համարւում է Նղիշէի պատմութիւնը: Վարդանանց պատերազմի տարեգրութիւնը գրական նոր ժանրի՝ պատմական յուշագրութեան նախօրինակ է՝ իբրեւ ականատեսի գրառում²:

Առանձնանալով պատմագրութիւնից՝ գեղարուեստական վաերագրութիւնը՝ իբրեւ ինքնուրոյն ժանր, անցել է զարգացման երկար ճանապարհ՝ անընդհատ հարըստանալով եւ ծաւալուելով:

15-17-րդ դարերում որպէս յուշագրութեան տեսակներ՝ մեծ տարածում ստացան ուղեգրութիւնները եւ օրագրութիւնները³: Ընդ որում՝ հայ միջնադարեան ուղեգրութիւններն ունեցել են ճանաչողական նշանակութիւն, աչքի են ընկել հեղինակների պատմելաոճի որոշակի իւրայատկութիւններով՝ կապուած պատումի հաւաստիութեան, երեւոյթի իրական գնահատման հետ:

Այս ժանրի բուն պատմութիւնը՝ լեզուա-կառուցման ինքնատիպութեամբ, ձեւա-

¹ Գեղարուեստական վաերագրութիւն տերմինը գործածուել է արուեստի այլ ճիւղերում եւս: Այն՝ իբրեւ կարգախօս, անցեալ դարի սկզբներին առաջ է քաշուել Ռուսաստանի նկարիչների միութեան կողմից, որի անդամները, հետեւելով շրջիկ նկարիչների ասանդոյթներին, ձգտել են ստեղծել իրականութիւնը ճշմարտացիօրէն արտացոլող եւ ժողովրդին հասկանալի արուեստ:

² **Գանիէլեան Կ.**, Հայ մեմուարային գրականութեան պատմութիւնից, Երեւան, 1961, էջ 42-43:

³ Նկատի ունենմ Մարտիրոս Երզնկացու, Սարգիս Աբեղայի, Սիմէոն Դպիր Լեհացու ընդհանուր՝ «Ուղեգրութիւն» վերնագրով գործերը եւ Զաքարիա Ագուլեցու «Օրագրութիւն» երկը:

ւորում եւ արմատանում է 17-18-րդ դդ., երբ երեւան են գալիս Զաքարիա Ագուլեցու, Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի, Մինաս Պատրիարք Ամդեցու օրագրութիւնները, յետագայում բուն պատմագրութիւնից առանձնացած՝ գրում են Սիմէոն Կաթողիկոս Երեւանցու եւ Գրիգոր Պատրիարք Պասմաճեանի յիշատակարանները, որոնցում տեղ են գտել թէ՛ եկեղեցական վաւերագրերը, թէ՛ հոգեւոր հայրերի թղթերը, կոնդակները, նամակները:

19-րդ դարում յիշատակարանն արդէն ունենում է հիմնաւոր եւ հետեւողական առաջընթաց եւ ըստ այդմ՝ ըմբռնում է որպէս առանձին՝ յուշագրութեան նմուշ (օրինակ՝ Գաբրիէլ Պատկանեանի «Յիշատակարան», Գէորգ Չմշկեանի «Իմ յիշատակարանը» գործերը): Նոյն ժամանակում արեւելահայ գեղարուեստական վաւերագրութեան լաւագոյն յուշարձաններից է Խ. Աբովեանի «Դորպատեան օրագրերը», որը գրուել է 1830-1835 թթ.: Անմահ Աբովեանի գրական գործունէութեան առաջին քայլերում իսկ նկատուում են յիշատակի արժանի իրադարձութիւնների ներկայացման համարձակ ու յաղթական շեշտեր, որպիսով հեղինակն այս բնագաւառում բերում է գրական ուղղութեան նորութիւն, վաւերագրման նոր ոճ:

Զգալի փոփոխութիւններ են արձանագրում նաեւ ժանրի լեզուաոճական եւ պատկերային համակարգում: Ինչպէս նկատում է Կ. Դանիէլեանը, «Դորպատեան օրագրերում է Աբովեանն առաջին անգամ ստեղծել կեանքի գեղարուեստական մեծ արժէք ունեցող պատկերներ, տուել բնութեան տպաւորիչ նկարագրութիւններ եւ հոգեբանական սքանչելի վաւերացումներ»⁴:

Միանգամայն իւրօրինակ ձեւով են կառուցուած Խ. Աբովեանի ճամբորդական խորհրդածութիւնները (նօթերը) «Ուղեւորութիւն դէպի Անիի աւերակները» գրքում (գրուած ուսերէն), որտեղ հեղինակը վաւերագրման նոր՝ փիլիսոփայական դիտանկիւնից է մօտենում հայ ժողովրդի պատմութեան հիմնահարցերին: Անին եղել է հայութեան հոգեւոր եւ մշակութային զարգացման նշանաւոր օրրաններից: Խ. Աբովեանը նկարագրում է Անի տանող ճանապարհին ընկած բնակավայրերը, աշխարհագրական տարածքները՝ ներկայացուած ծաւալուն մեկնաբանութիւններով: Վաւերագրողը զուգահեռներ է անցկացնում Անիի եւ հին աշխարհի նշանաւոր քաղաքների միջեւ, նրա շքեղութիւնը համեմատում է նաեւ Շահբազադէի «Հազար ու մի գիշերներ»-ի հրաշալիքների հետ: Բացառիկ են նաեւ այն արժեւորումները, որոնք մեծ լուսաւորիչը տալիս է Սուրբ Էջմիածնին, որը «հրաշքի նման փրկեց ու պահպանեց հայ ժողովրդին»:

Հայ դասական գրողներից Մ. Թադիադեանը, Մ. Նալպանտեանը, Պ. Պոռեանը, Ղ. Աղայեանը, Բաֆֆին, Ալ. Շիրվանզադէն շարունակեցին արեւելահայ գեղարուեստական վաւերագրութեան ուղին՝ իրենց յուշագրական երկերում եւ օրագրութիւններում ներկայացնելով նաեւ ժամանակի ամբողջական համապատկերը: Յետագայ տարիներին Յովհ. Թումանեանը, Աւ. Իսահակեանը, Ստ. Զօրեանը, Գ. Մահարին եւ ուրիշներ արուեստագէտի լայն չափանիշներով, հեղինակային ինքնօրինակ մօտեցումներով ընդլայնեցին ժանրի սահմանները, հանդէս եկան դէպքերի, վճռորոշ անցքերի ու իրադարձութիւնների ոչ միայն ականատես-վկայողներ, այլեւ գնահատողներ ու մեկնաբանողներ: Վաւերագրումը դառնում է փաստ ժամանակի իրականութեան՝ անձնական օրագրութեան օրինակով արտայայտման: Դասական հեղինակների այդ ժանրի ստեղծագործութիւնները լաւագոյն վկայութիւն են նրանց ապրած ժամանակաշրջանի, որովհետեւ ամէն մի ճշմարիտ ստեղծագործութիւն իր ժամանակի համարժէք արտացոլանքն է: Վ. Պետրոսեանն իրաւամբ նկատում է, որ

⁴ Դանիէլեան Կ., նշում աշխ., էջ 205:

համաշխարհային գրականութեան «ամենակենսական երակներից մէկը վաւերական ուղղութիւնն է, եւ թող ոչ ոք չկարծի, թէ սա երկրորդ կարգի գրականութիւն է»⁵:

Գիտական գրականութեան մէջ գեղարուեստական վաւերագրութեան, ինչպէս ընդունուած է ասել, մետաժանրը⁶ (բառացի՝ «անդրսեռ»՝ ժանր, հմմտ. անդրլեզու) յաճախ անուանում են մեմուարային գրականութիւն, որի մէջ մտնում են յիշատակարանը, յուշագրութիւնը, ուղեգրութիւնը եւ օրագրութիւնը: 20-րդ դարում արեւելահայ գեղարուեստական վաւերագրութեան մէջ բուռն զարգացում է ունենում նաեւ էսսէն⁷:

Յիշատակարանները ձեռագիր մատեանների վերջում կամ էջերի ազատ մասերում գրիչների թողած տեղեկութիւններ են: Իբրեւ բացառիկ կարեւորութիւն ունեցող պատմագրական եւ ազգագրական սկզբնաղբիւր՝ յիշատակարաններն ստեղծուել են վիմագիր արձանագրութիւնների օրինակով եւ տարածուել քրիստոնեայ ժողովուրդների շրջանում (հայեր, յոյներ, ասորիներ եւ այլն): Հեղինակները, պահպանելով յիշատակարանի կառուցուածքային կաղապարը, արձանագրում էին փաստեր մարդկանց կենցաղից, ընտանեկան յարաբերութիւններից, հոգեկան աշխարհից, որոնք տեղ էին գտնում տուեալ ժամանակաշրջանի գրական-պատմական երկերում: Յիշատակարանները գրաւոր մշակույթի իւրօրինակ արտայայտութիւն են, ըստ այդմ որակւում են իբրեւ հայ միջնադարեան գրականութեան ժանրերից:

Յուշագրութիւնը (ֆրանս. memoires), ըստ հեղինակի հայեցողութեան, անցեալի՝ հետաքրքրութիւն ներկայացնող դէպքերի ու դէմքերի մասին յիշողութիւն է, որ եւս ունի ժանրային առանձնայատկութիւն, առաջին հերթին գրաւոր խօսքի դրսեւորման առումով: Այդ ժանրը հանդէս է բերում տեսակային բազմազանութիւն՝ ժամանակակիցների յուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրութիւն, մեծ մարդկանց զաւակների, հարազատների պատմածներ, գրողի կեանքի գլխաւոր դէպքերի խաչաձեւում ժամանակի գրամշակութային, հասարակական իրադարձութիւններին եւ այլն: Թեմատիկ առումով եւս կայ տարբերութիւն, յայտնի են անձնական⁸, թատերական, քաղաքական, պատրիարքական յուշեր⁹ եւ այլն: Ժանրի բազմազանութիւնը նկատելի է արեւելահայ յուշագրութեան էջերում, որոնցից մի քանիսն ունեն աղբիւրագիտական նշանակութիւն¹⁰: Առաւել ընդգրկուն են յուշ-դիմանկարները (օրինակ՝ Աւ. Իսահակեանի «Իմ յուշերից» գիրքը, Ստ. Զօրեանի «Յուշերի գիրքը», Ռ. Զարեանի «Յուշապատում» ակնարկները եւ այլն): Սրանք յուշեր են գրողների, արուեստագէտների մասին, որոնց հեղինակները հանդիպել են տարիներ շարունակ եւ մօտիկից ճանաչել նրանց:

⁵ **Պետրոսեան Վ.**, Հաւասարում բազմաթիւ անյայտներով: Հրապարակախօսութիւն, վաւերագրական արձակ, Երեւան, 1977, էջ 412:

⁶ *Մետա* (յուն. meta-յետոյ, համար, միջոցով) տերմինը նշանակում է կառուցուածքային որոշակի ամբողջութիւն, որը կարող է այլ կառուցուածքների նկարագրութեան հիմք դառնալ, օրինակ՝ *մետալեզու*, *մետատեքստ*, *մետատեսութիւն* եւ այլն: Այս ժանրի անգլիագիր տերմինաբանութեան մէջ յուշագրութեան, օրագրութեան համար իբրեւ ընդհանրական հասկացութիւն կիրառում է non fiction տերմինը:

⁷ Էսսէի ժանրն իր անուանումով առաջացել է, երբ ֆրանսիացի գրող-փիլիսոփայ Միշլէ դը Մոնտէյնը 1580 թ. լոյս ընծայեց իր երկը, որը կոչեց “Essais” («Փորձեր»), եւ որի վրայ աշխատեց շուրջ քսան տարի:

⁸ Տե՛ս **Զապէլ Եսայեանի** «Անձնական յուշեր Յովհաննէս Թումանեանի մասին» (Թումանեանը ժամանակակիցների յուշերում, Երեւան, 1969, էջ 150-169):

⁹ Տե՛ս **Զաւէն Արքեպս.**, Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:

¹⁰ Հայ յուշագրական արձակի դասական նմուշներ են Պ. Պոռեանի «Յուշիկներ», Ղ. Աղայեանի «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը» գրքերը: Նորագոյն շրջանում նման բնոյթի են Աւ. Ահարոնեանի «Իմ գիրքը» յուշապատումը, Ն. Թումանեանի «Յուշեր եւ գրոյցները», Վ. Փափագեանի «Յետադարձ հայեացք», «Մոտիս պարտքը» երկերը, Գ. Բեաի «Յուշանովէները», Պ. Սեւակի «Անցեալը ներկայացած» ինքնակենսագրականը եւ այլն:

Ուղեգրությունը հեղինակի՝ ճամբորդությունից ստացած անմիջական տպաւորութեան գրառումն է. նպատակն է ընթերցողին ծանօթացնել՝ պատմել ուղեւորութեան ընթացքում տեսածն ու զգացածը, ներկայացնել հանդիպած մարդկանց կեանքն ու կենցաղը, որոշ չափով հարստացնել ընթերցողի գիտելիքները: Յաճախ ուղեգրությունը համարում է յուշագրութեան ենթատեսակ՝ ունենալով նաեւ վերջինիս լեզուին բնորոշ կառուցուածքային բաղադրիչներ: Ժանրի առումով «անսովոր» ուղեգրություն է Կ. Զարեանի «Սպանիա» վէպը, որը մի համագրություն է ճամբորդական նօթերի կամ գրողի օրագրի, գեղարուեստական արձակի կամ փրկասփայլական-մշակութաբանական վերլուծությունների:

Ս. Կապուտիկեանի ուղեգրությունները, օրինակ, պատկերում են սփիւռքահայութեան կեանքն ու ամենօրեայ պայքարը՝ հեռաւոր ասիւրում պահպանելու ոչ միայն ֆիզիքական գոյութիւնը, այլեւ հայրենի մշակոյթն ու լեզուն: Դրանք գրուած են անուանի բանաստեղծուհու գրաւոր խօսքին բնորոշ իւրայատուկ խոհականութեամբ, իրականութեան փրկասփայլական ընկալման խորքով, որոնք արտայայտւում են ինքնատիպ ձեւակերպումներով, այլեւ դատողական-մտայնագումային նախադասութիւններով:

Օրագրությունը (գեղարուեստական օրագիրը) հեղինակի կեանքի մանրամասն նկարագրութիւնն է՝ վաւերական պատմութիւններով յագեցած: Դրանցում են փաստեր, որոնք կարող են ձեւաւորուել նաեւ թերի նախադասութիւններով եւ համառօտագրութիւններով: Այս դէպքում խօսքը մեծ չափով մենախօսութիւն է, թէեւ կարող են տեղ գտնել նաեւ երկխօսութեան ամբողջական հատուածներ¹¹:

Ինչպէս նշում է Գ. Զօհրապը, «Ճամարիտ օրագրութիւնը համոզումի պէս անկեղծ, հաւատքի պէս հաստատ ու կրօնքի պէս սուրբ է, այնքան, որ ներելի չէ ամէնուն ձեռք երկնցնել անոր»¹²: Օրագրերը թեմատիկայով նման են յուշերին, սակայն ծաւալով եւ բնոյթով տարբեր են՝ ճամբորդական, ռազմաճակատային, բանակային, կրօնական¹³ եւ այլն:

Ինչպէս նշեցինք, գեղարուեստական վաւերագրութեան տեսակներից է նաեւ **էսսէն** (խոհագրութիւն. ֆրանս. essai - «ակնարկ»), որը իւրայատուկ յիշատակարան-օրագիր է՝ տարաբնոյթ բովանդակութեամբ: Այն որեւէ բնապատկերի, հանդիպման տպաւորութիւնից ծնուած գեղարուեստական արձակ ստեղծագործութիւն է՝ ուրոյն բառապաշարով, խօսքի կառուցման հակիրճութեամբ:

Որոշ հեղինակներ էսսէն անուանում են գրական ուրուագիծ, փոքր ծաւալի եւ ազատ կառուցուածքի արձակ ստեղծագործութիւն, որն արտայայտում է հեղինակի անհատական տպաւորութիւններն ու նկատառումները ինչ-որ կոնկրետ հարցի մասին եւ «չի յաւակնում քննութեան առարկայի սպառիչ ու վերջնական մեկնաբանութեան»¹⁴:

¹¹ Արեւելահայ օրագրութեան յայտնի նմուշներ են Մ. Նալպանտեանի «Յիշատակարանը», Յովհ. Թումանեանի «Պատերազմի տարիների օրագրերը», Ա. Խանակեանի «Յիշատակարանը», Լեո Կամսարի «Սոցիալիզմի Սահարա» օրագրութիւնը, Ս. Խանգադեանի «Երեւ տարի 291 օր» ռազմականատային օրագիրը, Մ. Սարգսեանի «Կեանքը կրակի տակ» վէպ-օրագրութիւնը, Կ. Սուրէնեանի «Օրագիր. 1943-2001» երկատորեակը եւ այլն:

2018 թ. Փարիզում ֆրանսերէնով լոյս է տեսել Ա. Գրիգորեանի «Ձիւնուորակի օրագիրը» (“Journal d’un militant”) խորագրով գիրքը: Հեղինակը բառասուն տարի շարունակ գրառել է իր յուշերը, որոնցում ընդգրկուած են հայ եւ մասնաւորաբար ֆրանսահայ իրականութեան դէպքերն ու դէմքերը: Կիներով հայ դատի բեղուն պայքարի մարտիկ՝ հեղինակը զրքի նախաբանում նշել է, որ իմը յաջորդ սերնդին է փոխանցել իր փորձառութիւնը (տե՛ս «Նոր Յառաջ», երկօրեայ թերթ, 2018, Դեկտեմբեր 20, էջ 3):

¹² Զօհրապ Գ., Երկերի ժողովածու, հ. Գ, Երեւան, 2002, էջ 277:

¹³ Կրօնական օրագրութեան տեսակի մասին շեշտադրել է Զ. Սուրմանիձէն, որը հետազօտել է 18-րդ դարի անգլիական օրագրութիւնը:

¹⁴ Սանթրոյեան Մ., Գրականագիտական բառարան, Երեւան, 2009, էջ 80:

Առանձնացնելով գեղարուեստական վաերագրութեան ժանրատեսակները՝ ներկատում ենք, որ դրանք կառուցուած են լեզուա-ոճական բազմապիսի առանձնայատկութիւններով՝ չնայած լեզուա-կառուցուածքային որոշակի ընդհանրութիւններ ունենալուն:

Ժամանակն ամէն մի ինքնակենսագրական երկի «գլխաւոր կերպարն» է: Ընդհանրապէս իրականութեան եւ յուշերը շարադրելու միջեւ տարածա-ժամանակային զգալի ընդգրկում է անհրաժեշտ: Նախօրէին կատարուածը յաջորդ իսկ օրը չի կարող յայտնուել յուշագրութեան էջերում: Տարածա-ժամանակային որոշակի կտրուածքից յետոյ է յուշափաստը դառնում վաերագրութեան պատումային հոսքերից: Հարկ է յիշատակել Հայկ Խաչատրեանի «Քերթողահայրը» պատմավէպի դրոյթներից մէկը, որը պատմա-վիպասանը քաղել է Մ. Խորենացու «Հայոց պատմութիւն»-ից: Պատուիրատու Սահակ Բագրատունու յորդորին՝ «Պատմութեան» սահմանները հասցնել մինչեւ իրենց օրերը, Քերթողահայրը պատասխանել է. «Ես չեմ կարող վարուել այնպէս, ինչպէս յուշում ես դու: Անկարելի է մեր ժամանակի կեանքը դրուագել որպէս պատմութիւն: Իւրաքանչիւր իրադարձութիւն պիտի նայել առնուազն քառասուն տարուայ հեռաւորութիւնից... Պիտի սպասել այնքան ժամանակ, մինչեւ հասարակութեան կեանքի որեւէ փուլ թանձրանայ եւ դառնայ յուշ»¹⁵:

Կարելի է փաստել, որ եթէ գեղարուեստական ստեղծագործութեան մէջ հեղինակը դէպքերի ընթացքն ինքն է ձեւաւորում՝ նախապէս ուրուագծուած դիպաշարով, ապա յուշագիրը եղած յուշափաստերից է խօսք կառուցում: Գլխաւորը, որին ձգտում է հեղինակը, անցեալի իրականութեան, դէպքերի ու դէմքերի եւ նրանց ունեցած փոխարաբերութիւնների ճշմարիտ եւ համարժէք արտացոլումն է, որը կարող է ներկայացուել նաեւ գեղարուեստական հանդերձաւորմամբ: Վ. Ալազանը յուշեր գրելիս առաջնորդուել է էական սկզբունքով՝ լինել անկեղծ եւ ճշմարիտ, բնաւ «չգեղեցկացնել» յիշողութիւնների նիւթ հանդիսացող անձանց, այլ գրել ճշմարտութիւնը¹⁶:

Թէեւ գեղարուեստական վաերագրութեան հեղինակը գեղարուեստական իմաստով կերպար չի ստեղծում, բայց կերտում է դիմանկարներ, որոնք տարբեր երեւոյթների, իրողութիւնների կենդանի կրողներ են: Բայց եթէ գրող-գեղագէտը ազատ է կերպարների ընտրութեան մէջ, այսինքն՝ նա կարող է անհրաժեշտութեան դէպքում իր ստեղծագործութեան մէջ գծագրել հերոսներ՝ ստեղծելով իրականութեան առանձին պատկերներ, ապա գեղարուեստական վաերագրութեան հեղինակը ազատ չէ այդ ընտրութեան մէջ: Նա հնարաւորութիւն ունի կերպարագծելու միայն իր հետ առնչութիւն ունեցած մարդկանց դիմանկարները:

Հարկ է շեշտել, որ գեղարուեստական վաերագրութեան հեղինակը վերջնարդիւնքում ենթակայական դիրքորոշում կարող է ունենալ: Այդ է վկայում Ստ. Զօրեանի հետեւեալ միտքը. «Յուշերի մէջ հնարաւոր չէ բացարձակ օբյեկտիւութիւն, եւ սուբյեկտիւ մօտեցումը զգալի տեղ է բռնում անկասկած»¹⁷: Այս դէպքում հեղինակը բնորդին ընկալում է իր պատկերացումներով: Վերջիվերջոյ գեղարուեստական վաերագրութիւնը կեանքը լուսանկարչական ճշգրտութեամբ չի ներկայացնում: Ինչպէս նշում է Ալ. Շիրվանզադէն, չկան եւ չեն կարող լինել ֆոտոգրաֆիական ճշգրտութիւն ունեցող պատկերներ ներկայացնող ստեղծագործութիւններ¹⁸:

Ժամանակակից լեզուաբանութեան ուղղութիւնների մէջ առաջնային նշանակու-

¹⁵ Խաչատրեան Հ., Քերթողահայր, Երեւան, 1985, էջ 294:

¹⁶ Ալազան Վ., Յուշեր, Երեւան, 1967, էջ 4:

¹⁷ Զօրեան Ստ., Յուշերի գիրք, Երեւան, 1991, էջ 7:

¹⁸ «Ռաֆֆին ժամանակակիցների յուշում», Երեւան, 1986, էջ 228:

Թիւն ունի գեղարուեստական վաւերագրութեան բնագրերի հոգե-լեզուաբանական հիմքերի ուսումնասիրումը, որովհետեւ հետազոտութեան կիզակէտում մարդ-ան-հատականութեան լեզուական իրացումն է: Լեզուաբանական գրականութեան մէջ առաջադիր խնդրի որոշ տեսակներ (յուշագրական եւ ինքնակենսագրական արձակ) երբեմն անուանում են լեզուաբանական անձնաբանութիւն¹⁹: Այստեղ հեղինակը դիտ-ւում է անհատական եւ սոցիալական գծերի համադրութեամբ մի անհատականու-թիւն, որը լիովին կարող է երեւալ սեփական նախաձեռնութեամբ ստեղծուած երկում, իսկ երկը պէտք է ունենայ անցեալի յիշողութեան յստակ ու ճշգրիտ հիմքեր:

Մտապահման եւ վերարտադրութեան գործընթացում յիշողութեան մէջ ամրա-գրուած նիւթը հեղինակը սովորաբար որոշակի որակական փոփոխութիւնների է են-թարկում՝ աներկբայ ներառելով իր հեղինակային ես-ի քարտէսը: Ժամանակակից մարդու համար անցեալը, ներկան եւ ապագան կապող գլխաւոր օղակը սեփական ես-ն է: Գեղարուեստա-վաւերագրական արձակից ներկայացնենք բնորոշ օրինակներ, որոնք առաւել դիպուկ են արտայայտում հեղինակային ես-ի ազդեցութիւնը:

Յատկանշական է Ս. Կապուտիկեանի «Քարաւանները դեռ քայլում են» երկից մէջբերումը. «Թող ների ինձ ընթերցողը, եթէ գրքում յաճախ հանդիպի անձնական դերանունան առաջին դէմքի հոլովումներին՝ ես, ինձ, ինձնից, ինձնով եւ այլն: Գիտեմ, որ ինչքան էլ ջանամ խուսափել դրանցից ու եղածի աննշան մասը նկարագրեմ, դարձեալ պատմելիքիս այս կամ այն կտորը կը ստանայ ինքնագովութեան շեշտեր... Այսպէս կը լինի, որովհետեւ հանգամանքների բերումով դէպքերն ու հանդիպումները զարգացել են իմ՝ հայրենիքից եկած հրաւիրեալիս շուրջը»²⁰:

Այս առումով հետաքրքրական է նաեւ Ա. Իսահակեանի դիտարկումը. «Յուշեր գրելը մի սայթաքուն ուղի է, որ սկսւում է համեստութեամբ ու վերջանում ինքնա-գովութեամբ»²¹:

Ինչպէս նշում է գրականագէտ Ս. Դանիէլեանը, այս դէպքում գրողի ես-ը խիստ որոշիչ է դառնում, եւ առաջնային դիրք է գրաւում ժանրի բնածին յատկանիշը՝ անց-եալը ներկայացնել կարօտի թելադրութեամբ²²:

Գեղարուեստական վաւերագրութեան ժանրի հիմնագծերից մէկը խօսքային կաղապարների եւ իւրայատուկ կառուցների առկայութիւնն է: Յուշագրութեան ստուար մասի սկզբում առկայ են «առաջին (վերջին) անգամ տեսայ.../լսեցի... կամ հանդիպել եմ», «ծանօթացայ, ծանօթացել էի, ծանօթութիւնն սկսուեց... կամ տեղի ունեցաւ», «հանդիպեցի կամ հանդիպեցիմք...» արտայայտութիւնները:

Բնական է, որ գեղարուեստական վաւերագրութեան հեղինակը հանդիպում կամ այցելում է բնորդին: Հստ աչդմ՝ յուշագրութեան լեզւում գործածութեան յաճախակա-նութիւն ունեն առաջին հանդիպում, առաջին ծանօթութիւն, յաջորդ այցելութիւն բա-ռակապակցութիւնները:

Գեղարուեստական վաւերագրութեան ժանրում դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերեւս յուշագրի առաջին տպաւորութիւնն է: Այս առումով նկատելի են ուշագրաւ փաստեր. յուշագիրների մեծ մասն իբրեւ

¹⁹ Нерознак В. П., Лингвистическая персоналогия: определению статуса Дисциплины//Язык, Поэтика, Перевод, Москва, 1996, с. 112-116.

²⁰ Կապուտիկեան Ս., Քարաւանները դեռ քայլում են, Երեւան, 1973, էջ 12:

²¹ Ղանալանեան Հ., Գիտութեան երախտաւորներ, Երեւան, 1982, էջ 3:

²² Դանիէլեան Ս., Սփիտֆահայ վէպը, Գիրք Ա, Ժամրը, աւանդոյթներ, պատմութեան փիլիսոփայութիւնը, Անթիլիաս, 1992, էջ 118:

սկիզբ արձանագրում է բնորդի հետ իրենց առաջին հանդիպումը, ինչն անմոռանալի տպավորություն է թողնում²³։ Հեղինակների յիշողութեան հոսքերում բնորդը նախեառաջ ուրուագծում է իր արտաքին նկարագրով։ «Թումանեանին ես առաջին անգամ տեսայ հեռուից, Սոլովակի Սերգեևսկայա փողոցում,- յիշում է Դ. Տէմիրճեանը, ապա անմիջապես անցնում բանաստեղծի արտաքին նկարագրութեանը։ - Արագ, մեծ քայլերով գնում էր նա...։ Մուգ դեղնագույն վերարկու ունէր հագին, նոյն կտորի հաստ յետնագօտիով, ահագին մի ձեռնափայտ՝ առանց գլխի։ Սեւ շլեպան հովանի էր անում կիսաժպտուն, երազալից դէմքին»²⁴։

Կառուցուածքային նոյն սկզբունքն առկայ է նաեւ Վ. Թոթովենցի յուշերում։ «Առաջին անգամ ես պօէտին տեսայ էջմիածնի վանքի բակում,- այսպէս է սկսում իր յուշապատումը Վ. Թոթովենցը, որին անմիջապէս յաջորդում է բնորդի արտաքին նկարագրութիւնը,- երկարահասակ էր, նիհար, սպիտակ մորթով եւ սպիտակ մագերով. ունէր լայն ճակատ, ժպտուն, ոչ խորը, բայց իմաստուն աչքեր։ Հագել էր ռուսական ճերմակ բլուզ՝ ծոպաւոր գօտկով։ Խօսելիս թեւերը լա՛յն-լա՛յն տարածում էր՝ մեծ շրջանակներ կազմելով օդում, մերթ ընդ մերթ ձեռքը դնելով դիմացինի ուսին»²⁵։

Կառուցուածքային նոր հնար է նամակի՝ որպէս երկխօսութեան իւրայատուկ տեսակի գործածութիւնը գեղարուեստական վաւերագրութեան բնագրում (օրինակ՝ նամակը օրագրութեան մէջ)։ Նամակը լրացնում, ամբողջացնում է խօսքաշարը, ի յայտ է բերում նամակագրի լեզուա-մտածողութիւնը, ցուցադրում խօսքի կառուցուածքը։ Ինչպէս նշում է Յու. Աւետիսեանը, պատկերաւորման ու արտայայտչական միջոցները, որոնք ինքնաբերաբար եւ անկեղծ մղումով յայտնւում են նամակներում, լեզուն դարձնում են տպաւորիչ ու բանաստեղծական²⁶։ Յուշ-դիմանկարներում ծաւալային առումով նամակից ներկայացւում են հատուածներ, որոշ փաստեր մէջբերւում են անուղղակի ձեւով։

Բնագրային այս դրսեւորումները տեքստի ոճաբանութեան մէջ անուանում են տեքստը տեքստում, որի դէպքում գործ ենք ունենում միջտեքստային աղբյուրիւնների հետ²⁷։ Տուեալ դէպքում նամակը գեղարուեստական վաւերագրութեան մէջ ունի գեղարուեստական ամբողջական համակարգի նշանակութիւն եւ որպէս լեզուական որակ՝ ընկալւում է բնագրի լեզուա-ոճական յատկանիշներով։

Գեղարուեստական վաւերագրութեան հեղինակները երբեմն ընթերցողին հաղորդում են յաւելեալ փաստեր, որոնք քաղել են ականատեսի պատմութիւնից կամ այլ աղբիւրից։ Օրինակ՝ Մ. Ղուկասեանի «Անվերնագիր... 1915» փաստագրութեան մէջ քաղաբերւում է Սիմէոն Դպիր Լեհացու «Ուղեգրութիւն»-ից մի հատուած, որտեղ ներկայացւում է Փոքր Հայքի Մարագում լերան փեշին կառուցուած Ս. Նշան եկեղեցին։ Փաստագրութեան հեղինակը հետաքրքիր ակնարկ է ներկայացնում Սուրբի մասին։

Փաստագրութիւնն ունի **միջանկեալ** խորագրով հատուածներ, որոնք աւելի ամբողջական են դարձնում պատումը։ Այսպիսի հատուածներում նկատելի են նաեւ

²³ Ա. Ծառուկեանը «Հին երազներ, հին համբաներ» յուշագրութեան մէջ այսպէս է բանաձեւում առաջին հանդիպման տպաւորութիւնը. «Առաջին հանդիպումը կը նմանի նկարիչի մը առաջին գիծերուն։ Գոյները, երանգները, արտայայտութեան նրբութիւնները եւ յատկանշական բոլոր մանրամասնութիւնները կու գան յետոյ, ամբողջացնելու համար դէմք մը, բայց հիմնականը, էականը՝ մատիտի առաջին հարուածներն են, որով կ'ուրուագծուի պատկերը» (Ծառուկեան Ա., Հին երազներ, նոր համբաներ, Պէյրութ, 1960, էջ 56)։

²⁴ «Թումանեանը ժամանակակիցների յուշերում», Երեւան, 1969, էջ 22։

²⁵ Նոյն տեղում, էջ 136։

²⁶ Աւետիսեան Եու., Արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն, Երեւան, 2002, էջ 211։

²⁷ Горшков А. И., Русская стилистика. Стилистика текста и функциональная стилистика, М., 2006, с. 85.

ժամանակային հերթականութեան խախտումներ, միջանկեալ յիշատակութիւններ.

«(Միջանկեալ՝ թերեւս կարող էր նաեւ չգրուել: Ո՞վ տեղեակ չէ այս ամէնին: Բայց չգտաւ ինձ: Նախորդ էջերում ես էլ անցայ Տէր Զօրի դաժան ճամբաներով... Ալմաստի հետ: Դժուար է վերապրելը այդ ամէնը, թէեւ անցել է մօտ մէկ դար: Մանաւանդ որ լուսանկարը սեղանիս է:»)»²⁸:

Կառուցուածքային հետաքրքրական ձեւ ունի Ն. Թումանեանի «Յուշերը...»: Երբեմն հեղինակային խօսքն ընդմիջւում է «Աշխէն Թումանեանի յուշերից» կամ «Մայրս է պատմել» խորագրերով: Նման մէջբերում-հոսքերը աւելի բազմաբովանդակ եւ հետաքրքրական են դարձնում պատումի ընդհանուր շղթան, այն յաւելւում լրացուցիչ փաստերով ու մեկնաբանութիւններով:

Գեղարուեստական վաւերագրութեան կառուցուածքային էստարրերից է երկխօսութիւնը: Բնագրերում յաճախ ստեղծւում է զրոյցի միջավայր՝ հարցուպատասխանական կաղապարով: Գործածւում են երկխօսութիւնների տարատեսակ դրսեւորումներ՝ զրոյց, հեռախօսազրոյց, միակողմանի երկխօսութիւն, անպատասխան երկխօսութիւն, ինքնահարցադրում եւ այլն:

Գեղարուեստական վաւերագրութիւնը դարձուածքների, շրջասական կապակցութիւնների եւ թեւաւոր խօսքերի շտեմարան է: Ժանրի լեզուական տիրոջ ամբողջացնում են նաեւ շրջասական արտայայտութիւնները: Այսպէս՝ Պարոյր Սեւակը բնութագրում է նոր Մանուկ Աբեղեան, Մոնթէ Մելքոնեանը՝ Արցախի առժիւ, նոր Նրժդեմ շրջասութիւններով: Յուշագրութեան լեզւում գործածական են երեք անձանց բնութագրող շրջասութեան օրինակներ. այսպէս՝ Ուիլեամ Սարոյեան, Վիկտոր Համբարձումեան, Վազգէն Առաքին՝ XX դարի երեք մեծ հասակակիցներ, Մարտիրոս Սարեան, Յարութիւն Կալենց, Մինաս՝ Աստուածներ գոյների եւ այլն:

Ընդհանրապէս բառաքնական դիտարկումների ժամանակ կարելի է տեղ է տրուում բառապաշարի իմաստային-ոճական տարբեր խմբերի դասակարգմանը: Սովորաբար յուշային դիմանկարներում աչքի են զարնում տուեալ ոլորտը եւ այդտեղ գործող ու աշխատող անհատին ներկայացնող բառաշարեր, որոնք ըստ էութեան հարստացնում են յուշագրութեան լեզուն: Օրինակ՝ եկեղեցական առաջնորդներին ներկայացնող յուշերում մեծապէս գործածւում են՝

ա. վանքերի, եկեղեցիների, տաճարների, ուսումնական հաստատութիւնների անուններ՝ Ս. Գեղարդ վանք, Խոր Վիրապի վանք, Մեյդանի Ս. Գեորգ եկեղեցի, Անթիլիասի Մայրավանք, Հանկատարի վանք, Սուրբ Շողակաթ եկեղեցի, Էջմիածնի Մայր տաճար, Միածնաէջ տաճար, Վատիկան. Ս. Պետրոսի տաճար, Փարիզի Աստուածամօր տաճար, Պիֆայայի դպրեւանք, Սուրբ Հովսիսիմէ գիմնազիա եւ այլն:

բ. եկեղեցական զգեստների անուններ՝ ժամաշապիկ, քասակ, վեղար, կնգուղ, սրբեմ, պարեգօտ (կապա), փարաջայ, սեւ գլխարկ (թասակ), եկեղեցական վերարկու, դրուագազարդ գաւազան, հայրապետական ֆող:

գ. նուիրական առարկաների անուններ. որպէս պատուոյ նշան՝ քահանայական կարգ ունեցողներին շնորհուած իրեր՝ լանջախաչ, պանակէ, եպիսկոպոսական մատանի, ձեռաց խաչ:

դ. Կրօնական գրքերի անուանումներ՝ Սուրբ Գիրք, Աստուածաշունչ, Աւետարան, Նոր Կտակարան, Յայսմաւուրք, «Վեհամօր Աւետարան», Ճաշու գիրք կամ «Ճաշոց», Մաշոց, Ժամագիրք եւ այլն:

²⁸ Դուկասեան Մ., Անվերնագիր... 1915, Երեւան, 2011, էջ 33:

ե. Կրօնապետերի կացարան-նստավայրերի անուանումներ՝ տեղի իմաստ արտայայտող -արան վերջածանցով՝ կաթողիկոսարան, վեհարան, պատրիարքարան, առաքնորդարան, նաեւ եպիսկոպոսանիստ:

Հայաստանի ազգային հերոս Մոնթէ Մելքոնեանին նուիրուած յուշերում գործածւում են ռազմական ոլորտի բառամիաւորներ՝ արկ, ակամ, ականապատել, ականանետ, ախառումբ, փամփուշտ, փամփշտատուփ, ինֆնաձիգ, հրետանի, տանկ, տանկիստ, հրասայլ, հրանօթ, թնդանօթ, գնդացի, նոնականետ, խրամատ, զրահաբանկոն, զրահամեքենայ, զօրագուն, զօրամիատրում, գումարտակ, մարտադաշտ, զօրահամանատար, զօրաշարժել, ազատամարտիկ, դիրքեր, դիպուկահար, նշանառու, գնդակոծել, ուժակոծել, զրահահար, զրահատանկային եւ այլն:

Կառուցուածքային առումով ժանրի լեզուում նկատելի է բառա-կաղապարների բազմերանգութիւն: Դ. Տէմիրճեանի «Յուշեր եւ խոհեր հայ դրամատուրգիայի եւ թատրոնի մասին», Վ. Վաղարշեանի «Ընկերներս, բարեկամներս եւ ես», Վ. Փափազեանի «Յետադարձ հայեացք» եւ Գ. Զանիբեկեանի «Թատրոնի հետ» յուշագրութիւններում արդարացուած է թատրոն, արուեստ, հանդէս, բեմ, դեր, խաղ, փորձ միաւորներով բառաձեւերի գործածութիւնը՝ թատերախաղ, թատերախումբ, թատերագիր, թատերգութիւն, թատերասէր, թատերաշրջան, թատերարուեստ, թատերախօս, թատրոնախաղ, թատերասրահ, թատերաբեմ, թատերանկարիչ, պետքատրոն, արուեստասէր, արուեստագէտ, արուեստակից, գեղարուեստ, բարձրարուեստ, հանդիսատես, հանդիսասրահ, բեմադրութիւն, բեմահարթակ, բեմայարդար, բեմարուեստ, բեմավիճակ, նախաբեմ, խաղացանկ, խաղընկեր, խաղաոն, խաղարուեստ, դերացանկ, դերաբաշխում, դերակատար, մնջախաղ, դերախաղ, հիւրախաղ, դիմախաղ, փորձասենեակ, փորձասրահ եւ այլն:

Հանդէս վերջնաբաղադրիչով բառեր (գործածական են յուշ-դիմանկարներում), երգահանդէս, նուագահանդէս, սգահանդէս, տօնահանդէս, զօրահանդէս, դիմականհանդէս, պատկերահանդէս, պարահանդէս, ցուցահանդէս, յաղթահանդէս, պատուահանդէս եւ այլն:

Առատ են նկար բաղադրիչով բառամիաւորներ՝ ինֆնանկար, դիմանկար, ինֆնադիմանկար, գրչանկար, գծանկար, մատիտանկար, նկայանկար, բնանկար, լուսանկար, դաշտանկար, գեղանկար ուրուանկար, մանրանկար, խտանկար, զարդանկար, որմնանկար, հայանկար եւ այլն:

Յուշագրութեան լեզուում ակտիւ գործածական են նաեւ պետ, տուն, սէր վերջնաբաղադրիչներով բառակաղապարներ:

Գեղարուեստական վաւերագրութեան պատումներում հեղինակները յաճախ են մեկնում այս կամ այն բառը, տալիս բառիմաստի յաւելեալ բացատրութիւններ: Այս երեւոյթը գեղարուեստական վաւերագրութեան կառուցուածքային էական յատկանիշներից է: Կարելի է ընդգծել՝ առաջադիր ժանրը ձեռք է բերում բառարանային գործաբանական արժէք: Հր. Աճառեանի «Կեանքիս յուշերից» երկում թուրքերէն մի շարք անունների դիմաց տրուում են հայերէն բացատրութիւններ. «Քաղաքի Թաքիրդաղ թուրքերէն անունն առաջացել է հայոց Սուրբ Թագաւոր եկեղեցու անունից»²⁹:

Մեր դիտարկումները փաստում են, որ արեւելահայ գեղարուեստական վաւերագրութեան լեզուի բառապաշարը ամբողջանում է նաեւ արեւմտահայերէն բառամիաւորներով: Այս ժանրում կան այնպիսի ստեղծագործութիւններ, որոնց ենթապատումներում ցայտուն երեւում են գրական արեւմտահայերէնի զգալի ներթա-

²⁹ Աճառեան Հր., Կեանքիս յուշերից, Երևան, 1967, էջ 9:

փանցումներ: Այս տեսանկիւնից յիշեալ ժամանակաշրջանի արեւելահայ յուշագրութեան մէջ կարելի է առանձնացնել հոգեւոր հայրերի հեղինակած կամ նրանց նուիրուած գեղարուեստական վաւերագիր յուշերը, որոնք ունեն գրական-պատմական արժէք: Ուշագրաւ են Կ. Սուրէնեանի օրագրերը Վազգէն Վեհափառի մասին, որտեղ յաճախ են ներթափանցում արեւմտահայերէնի տարրեր: Դերասանուհի Վ. Վարդերեսեանի յուշերը նոյնպէս հիւսուած են արեւմտահայերէնի ներթափանցումներով:

Այս երեւոյթը ռաբանական գրականութեան մէջ կոչուում է տեղական ռեալիզմ, որն իրականացում է նաեւ գրական արեւմտահայերէնն օգտագործելու միջոցով, երբ խօսողը կամ լեզուական անհատը արեւմտահայ է:

Արեւմտահայերէն բառերի եւ լեզուական կառոյցների ներթափանցումը առաւելաբար նկատելի է Հր. Աճառեանի «Կեանքիս յուշերից» յուշագրութեան մէջ, Կ. Զարեանի «Միացեալ Նահանգներ» երկում, Վ. Փափագեանի «Յետադարձ հայեացք» գրքում, Ս. Կապուտիկեանի ուղեգրութիւններում եւ այլն:

Ժամանակակից ճանաչողական լեզուաբանութեան հիմնահարցերից մէկը տիպաբանական հասկացոյթների իրացումն է: Հասկացոյթը մտքի կառուցուածքային միակոր է, որը կողաւորուած է ուսումնասիրուող յուշագրութեան լեզուատիրոյթում:

Վ. Կարասիկը դիտարկում է որոշակի ընկերային խմբի ներսում լեզուական մըշակոյթ կրող անձի հասկացոյթներ, որոնք ըստ էութեան դառնում են անհատի վարքի եւ արժեհամակարգի բնութագրիչներ³⁰: Հասկացոյթի կարեւոր բաղադրիչներից մէկը բառի իմացական յիշողութիւնն է, լեզուական այդ նշանի իմաստային բնութագրութիւնը: Այս առումով յուշերում եւ ուղեգրութիւններում ուշագրաւ է մանկութիւն, յուշ, յիշողութիւն, ճանապարհորդութիւն (ճամբորդութիւն), ուղեւորութիւն, ճանդիպում հասկացոյթների տարածական դաշտը:

Յուշ-դիմանկարներում արդարացում է նաեւ յիշում եմ, վերյիշում եմ բայաձեւերի յաճախադէպ գործածութիւնը:

Յուշագրութեան լեզուի գլխաւոր շերտերից է նկարագրական խօսքը: Առաջնային են նախ բնակավայրերի (քաղաք, թաղամաս, բակ), ապա տարբեր կառոյցների (տուն, սենեակ, կամուրջ եւ այլն) նկարագրութիւնները, որոնք ընդելուզում են պատումի ընդհանուր շղթային՝ ամբողջացնելով պատմողի ասելիքը:

Յատկանշական են Հր. Աճառեանի «Կեանքիս յուշերից» երկի Ռոդոսթօ քաղաքի նկարագրութիւնը, Ե. Զարենցին նուիրուած յուշերում՝ Կարսի նկարագրութիւնը, Վ. Վաղարշեանի յուշագրութեան շղթայում՝ Շուշիի նկարագրութիւնը, Ն. Թումանեանի յուշերում՝ Վերնատան նկարագրութիւնը:

Նկարագրական այս հատուածներում նկատելի են լեզուաբանական տարբեր կարգերի դրսեւորումների միջեւ եղած հիմնագծեր: Միեւնոյն կամ նման գաղափարները յաճախ հանդէս են գալիս տարբեր կարգերի պատկանող իմաստներն արտայայտելու համար: Այսպէս՝ տեղի կարգին յատուկ առջեւ, տակ, կողքին, հետեւում (պատերի տակ, եկեղեցու կողքին) իմաստներին յարաբերակից են ժամանակի կարգին յատուկ այժմ, յետոյ (այժմ նկարագրեմ, յետոյ նետիր) իմաստները, թուի կարգին յատուկ մէկ, երկու, շատ, բիշ (մէկ օր, երկու սենեակ, շատ ձիւք, քիչ ժամուոր) իմաստներին՝ յաճախականութեան կարգին յատուկ շատ անգամ, շաւունակ իմաստները: Նկատելի է, որ այս կարգերի միջեւ կան ներքին կապեր:

Ֆրանսիացի տեսաբան Ժան-Մարի Շեֆէրը յամառօրէն հանդէս է գալիս յանուն

³⁰ Карасик В. И., Языковой круг: личность, концепты, дискурс, Волгоград, 2002, с 36.

գեղարուեստական վաւերագրութեան ժանրի անորոշութեան եւ սահմանների շարժունակութեան³¹: Նա նկատում է, որ ժամանակ առ ժամանակ խախտում են նաեւ այս ժանրի սահմանները: Սա նշանակում է, որ այդ սահմանները կարող են լինել յարաբերական, ժանրային դրսեւորման ձեւերը՝ բազմազան: Նկատելի է, որ յուշագրութիւնը դրսեւորում է ներժանրային հարուստ բազմազանութիւն: Այսպէս՝ յուշերում կարող են օգտագործուել օրագրութեան կառուցուածքային միաւորներ:

Հայ գեղարուեստական վաւերագրութեան ժանրը շարունակում է զարգանալ՝ էապէս փոփոխուելով ու հարստանալով ոչ միայն ներքին բովանդակութեամբ, այլեւ լեզուական բազմազան բնութագրիչներով: Ուշագրաւ է այն հանգամանքը, որ գրական շատ ստեղծագործութիւններ հիւսւում են վաւերականի եւ գեղարուեստականի համադրութեամբ: Գրողը գեղարուեստական տարածութեան մէջ մուծում է իրական կերպարներ եւ վաւերականի հետ առաջ է մղում գրական-գեղագիտական տարրը (նման հնարանքներ ենք տեսնում Ու. Սարոյեանի «Յառաջ» դրամայում): Իրական հիմքերով է հիւսուած նաեւ, օրինակ, Փիթեր Բալաքեանի «Ճակատարի սեւ շունը» վէպ-յուշագրութիւնը, որտեղ հեղինակին յաջողուել է իրար կամրջել երկու աշխարհներ եւ գեղարուեստական ուրոյն հնարանքի միջոցով ստեղծել նոր տիպի վաւերագրութիւն:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Մեռածի մը համար եօթ օր կու լան, սխալի մը համար՝ ամբողջ կեանքի ընթացքին:

Տաքն ինչ իմանայ, թէ պաղը ինչ է,
Վերքը կ'իմանայ, թէ աղը ինչ է,
Ան ով շատերուն կսկիծ տուած է,
Ինչպէս իմանայ, թէ ցաւը ինչ է:

Մարդ մը ցմրուր անկեղծ չի կրնար ըլլալ նոյնիսկ ինքզինքին հետ, որովհետեւ հոգին չի սիրեր մերկութիւն: Հոգին միշտ զգեստներու պէտք ունի:

Ամենէն կարեւոր բաները կը սորվինք ստացած վերքերէն, իսկ վերքերէն սպիներ կը մնան:

Երբ կը սկսինք յիշել մանկութիւնը, այդ կը նշանակէ՝ կը ծերանանք:

Կեանքը մահէն առաջ մարդուն տրուած կարճատեւ արձակուրդ մըն է:

Երանի՛ր քսան տարեկան ըլլայինք, երանի՛ր... Իսկ ձիերը քսան տարեկանին արդէն ծեր են:

Հագուստները եւ կօշիկները եւս կը յոգնին: Միայն անոնց յոգնութիւնը կը կոշուի մաշիլ, իսկ մեր յոգնութիւնը՝ մահ:

³¹ Шеффер Ж.-М., Что такое литературный жанр, Москва, 2010, 192 с.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ՌՈՒՋԱՆՆԱ ԳԱՐԳԱԼՈՅԵԱՆ**

Երեւանի Պետական Համալսարանի
բ. գ. թ., դոցենտ

ՎԱՆՏԵՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
ուսանող

**ԺՈՂՈՎՐԴԱ-ԽՕՍԱԿՅԱԿԱՆ ԴԱՐՁՈՒԱԾՔՆԵՐԸ
ՀԱՅԵՐԷՆՈՒՄ ԵՒ ԱՆԳԼԵՐԷՆՈՒՄ**

Դարձուածաբանութիւնը (անգլերէն phraseology բառի պատճենումն է, որը կազմըւած է յունարէն phrasis դարձուածք եւ logos ուսմունք բառերից) բառագիտութեան բաժիններից մէկն է: Այն ուսումնասիրում է լեզուի դարձուածքները, դրանց ծագումը, կառուցուածքը, տեսակները եւ այլն: Կայ տեսակէտ, որ դարձուածաբանութիւնը լեզուաբանական առանձին գիտակարգ է եւ սխալ է նրա՝ բառագիտութեան կազմում ընդգրկելը: Պէտք է նշել, որ չկայ նաեւ մէկ միասնական սահմանում դարձուածքի, դարձուածաբանութեան ընդգրկման սահմանների վերաբերեալ: Սահմանումները տարբերում են իրարից զանազան մանրամասնութիւններով, տարբեր տեսանկիւններով: Հայ նշանաւոր լեզուաբան Պետիրեանը իր «Ժամանակակից հայերէնի դարձուածաբանութիւնը» գրքում տալիս է դարձուածքի հետեւեալ սահմանումը. «Դարձուածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերա-իմաստաւորուած կապակցութիւն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրոյնութիւնը ձեւական է, շարահիւսական կապը՝ մթագնած»¹: Փորձենք ամբողջականացել այս եզրոյթի սահմանումը՝ օգտուելով Հայերէնագիտական բառարանից: Բառարանում տրուած է այս լեզուական իրողութեան հետեւեալ ընդգրկուն բնորոշումը.

ա) ինքնին բառակապակցութիւն է. առանձին բառը հազուադէպ կարող է դարձուածքի արժէք ունենալ,

բ) պատկանում է կայուն բառակապակցութիւնների խմբին, բնորոշ է բաղադրիչների ուժեղ կամ պակաս սերտաճումով. ընդ որում՝ իմաստաբանական (բովանդակային) պլանում անտրոհելի է, իսկ կառուցուածքային (արտայայտութեան) պլանում բաղադրիչները (կամ դրանցից որեւէ մէկը) անփոխարինելի են,

գ) իբրեւ բաղադրութիւն, ի տարբերութիւն ազատ (շարահիւսական) բառակապակցութեան, ամէն անգամ չի ստեղծում տուեալ իրադրութեան համար, այլ պատրաստի վերարտադրում է (գործածութեան մէջ է դրւում) միեւնոյն բառա-քերականական կազմով,

դ) ունի փոխաբերական իմաստաւորում, որը նրան տալիս է պատկերաւորութիւն.

¹ Պետիրեան Պ., Ժամանակակից հայերէնի դարձուածաբանութիւն, Եր., 1973, էջ 5:

մեծ մասն արտայայտում է խօսողի յուզա-զգացական վերաբերմունքը, եւ որն էլ նրան դարձնում է լեզուական ոճաւորման միջոց,

ե) կարող է ձեւականօրէն համընկնել ազատ բառակապակցութեանը, բայց էապէս տարբերում է նրանից,

զ) կարող է սերել ազատ բառակապակցութիւնից, բայց կարող է եւ ինքնուրոյն կազմաւորում ունենալ,

է) որոշ դարձուածքներ հանդէս են գալիս նախադասութեան տեսքով,

ը) իմաստաբանական պլանում կարող է յարաբերակցութիւն ունենալ առանձին բառի հետ,

թ) ձեւականօրէն նմանում է յարադիր բարդութիւններին, մինչդեռ յարադրութեան բաղադրիչը կարող է անկախ բառային արժէք ունենալ կամ չունենալ, իսկ դարձուածքի բաղադրիչը սովորաբար անկախ գործածուող բառաձեւ է. յարադրական բարդութեան բովանդակութիւնը բխում է բաղադրիչների իմաստից, պայմանաւորուած է նրանով, մինչդեռ դարձուածքի բովանդակութիւնը հիմնականում կարող է անուանողական արժէք ունենալ, նրա յուզա-արտայայտչականութիւնը թոյլ է, դարձուածքինը՝ ուժեղ,

ժ) իբրեւ բառագիտական միաւորներ պատկանում են բառապաշարի որոշակի շերտերի, ունեն գործառական իրենց ոլորտները²:

Յաւելենք, որ դարձուածքները մեծ աղերսներ ունեն ասոյթների, թեւաւոր խօսքերի, առածների ու ասացուածքների հետ: Շատ յաճախ իսկապէս, դժուար է լինում գատել իրարից լեզուական այս տարբեր իրողութիւնները: Մի շարք բառարաններում, գրքերում, ձեռնարկներում յստակ տարբերակուած չեն լեզուական այս իրողութիւնները եւ այդ լուրջ բացթողումը, մեր կարծիքով, առկայ շփոթի պատճառներից մէկն է: Նշենք, որ դարձուածքները կարող են անշատուել նաեւ իրենց առածներից ու ասացուածքներից՝ դրանց կրճատման ճանապարհով³: Այսպէս՝ **գայլի (զելի) աչքն էլի սարին է*** (132) - գլխին աւետարան կարդալ, իր նախկին մտադրութիւններից չհրաժարուել դարձուածքի բացատրութիւնը ծագում է «Գայլի գլխին աւետարան կարդացին, ասաց, թողէք ոչխարները սարն անցան» առածից: Անգլ.՝ *the wolf may lose his teeth, but never his nature*:

Մեր այս աշխատանքի նպատակն է ներկայացնել Հայոց լեզուի դարձուածաբանական բառարանում առկայ ժողովրդա-խօսակցական դարձուածքները եւ դրանց անգլերէն տարբերակները: Աշխատանքը կարող է ուսանողների համար աղբիւր հանդիսանալ ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ գրելիս:

Նախ՝ դարձուածքների թարգմանութեան մասին: Ամէնից առաջ դարձուածքները, այսպէս ասած, թարգմանում են նոյն լեզուում: Խօսքը բառային հոմանիշներ ունեցող դարձուածքների մասին է: Դրանք լեզուի մէջ ոճական արժէք են ստանում եւ կիրառում են պատկերաւորման, իմաստի սաստկացման համար: Ինչպէս՝

1. **ալիւր-աղցան անել կամ շինել** (3) - ծեծել, ջարդել, անգլ.՝ *beat the living daylight out of sb*,

2. **անծամել կամ անծամ կուլ տալ** (21) - հեշտութեամբ ընկճել, գերազանցել, ամ-

² Տե՛ս Պետրոսեան Հ., Հայերէնագիտական բառարան, Եր., 1987, էջ 175:

³ Գեորգեան Ե., Հայերէնի դարձուածքները, Եր., 1969, էջ 71:

* Այսուհետեւ «Հայոց լեզուի դարձուածաբանական բառարան»-ից (Երեւան, 1975) մէջբերումների էջերը կը տրուեն շարադրանքով՝ օրինակից անմիջապէս յետոյ՝ փակագծերի մէջ:

բողջովին յաղթահարել, անգլ.՝ win hands down,

3. անոսկոր լեզու (23) - բամբասող, շաղակրատ, վայրիվերոյ խօսող, անգլ.՝ loose tongue,

4. ավստը գալ (97) - ավստսել, խնայել, անգլ.՝ feel sorry (for); pity/take a pity,

5. բանն ականջի ետևը (քամակը) գցել (108) - որեւէ մէկի խօսքին չսեւ, անուշադրութեան մատնել, անուշադիր թողնել, անգլ.՝ disregard/take no heed of; ignore; shrug off,

6. բկից(ը) բռնել (128) - 1. աներեսաբար, հարկադրանքով, համառօրէն մէկին ստիպել մի բան անելու, 2. նեղել, ազատ գործելու հնարաւորութիւնից զրկել, անգլ.՝ seize/take by the throat,

7. երեսը գոմշի կաշի անել (դարձնել, շինել) (208) - երեսը պնդացնել, շամաշել, ամօթի զգացում չունենալ, անգլ.՝ to set one's face like a flint,

8. ծալ(ք)ը կամ ծալը պակաս (299) - պակասամիտ, յիմար, տխմար, թեթեւոլիկ, ծանծաղամիտ, խենթ, անգլ.՝ have rocks/wheels in the head; have a slate loose/missing; be crazy as a bed-bug; have water in the brain,

9. հալումաշ լինել (340) - վշտից, մտատանջուելուց, հիւանդութիւնից եւ այլնից նիհարել, մաշուել, հիւծուել, անգլ.՝ get as thin as a rake,

10. հախից գալ (340) - պատժել, զսպել (յաճախ որպէս սպառնալիք), անգլ.՝ teach sb a good lesson,

11. ճամփին քար գցել (քցել) (398) - մէկին խանգարել, խոչընդոտել, արգելք լինել մի բանի յաջողուելուն, անգլ.՝ throw obstacles in sb's way,

12. մազերը բիզ-բիզ անել (405) - սաստիկ վախեցնել, զարմացնել, անգլ.՝ (one's) hair stand on end,

13. մեխի գլուխ (417) - անզօր, անգործունեայ, աւելորդ, կողմնակի, գործին չօգնող, անգլ.՝ his fingers are all thumbs; as idle as a painted ship upon a painted ocean,

14. մեռելի գոյն (դառնալ, ստանալ եւ այլն) (426) - գունատ, սփրթնած (դառնալ, լինել եւ այլն), անգլ.՝ become cadaverous; deadly pale,

15. նազ ու տուզ անել կամ ծախել (451) - կոտրատուել, չեմ ու չում անել, ձեւացնել, անգլ.՝ show off; be affected. finical/finicking:

Մենք համակարծիք ենք այն տեսակէտին, որ լեզուի համար աւելի արժէքաւոր են այն դարձուածքները, որոնք թարգմանելի չեն եւ բացատրուում են նկարագրական եղանակով: Չթարգմանուող դարձուածքները, որ, ի տարբերութիւն նախորդների, անհամեմատ քիչ են, նոր հասկացութիւններ են բերում, առանձնապէս հարստացնելով լեզուի բառապաշարը⁴: Բերենք ժողովրդա-խօսակցական դարձուածքների նման օրինակներ.

1. բերանի ծամօն (ծամոց) կամ մաստակ անել՝ դարձնել կամ շինել (122) - բոլորի խօսակցութեան առարկան, նիւթը դարձնել, անգլ.՝ make sb the talk of the town,

2. գիշերը պառաւել է (140) - գիշերուայ մեծ մասը անցել է, լուսանալու մօտ է, անգլ.՝ the small night,

3. դարդ դարդի տալ (184) - միասին վշտանալ՝ վշտակցել, իրար հետ մտերմական զրոյց ունենալ, անգլ.՝ share one's grief/sorrow with sb,

⁴ Պէտրոսեան Ե., Հայերէնի դարձուածքները, Եր., 1969, էջ 39:

4. լեղաճաք կամ լեղապատառ անել (269) - սաստիկ վախեցնել, սրտապատառ անել, անգլ.՝ scare to death; have one's heart in one's mouth; one's heart sank into one's boots,

5. խաթրին դիպչել կամ կաչել (մէկի) (275) - 1. մէկին նեղութիւն տալ, նեղացնել, անհանգիստ անել, 2. մէկին անպատուել, վիրաւորանք հասցնել, անգլ.՝ rub/stroke someone the wrong way,

6. ճամբու դնել (399) - 1. ճանապարհել, 2. ծառայութիւնից արձակել, վճռել, անգլ.՝ see off,

7. մտքով անցնել (445) - մտածել մի բանի մասին, գլխում միտք ծագել, անգլ.՝ cross one's memory; slip one's mind,

8. չուլ ու չափուտ կամ փալաս (492) - հին ու մին զգեստեղէն, անկողին եւ այլն, անգլ.՝ old rags,

9. ուռ անել (510) - 1. հեռացնել, վճռել, 2. փխբ. ոչնչացնել փճացնել, անգլ.՝ throw away; to get rid of; drive out (away),

10. քէֆ չունենալ (594) - 1. վատ տրամադրութեան մէջ լինել, ցանկութիւն, տրամադրութիւն չունենալ, 2. հիւանդ լինել, անգլ.՝ be in low spirits; be in a bad mood; sulk; feel blue; mope:

Կան նաեւ միջազգային գործածութիւն ունեցող դարձուածքներ: Դրանք տարածուել եւ ընդհանուր ճանաչում են ստացել աշխարհի բազմաթիւ լեզուներում: Յաւելենք, որ դրանք մի լեզուից միւսին են անցնում գրականութեան, մամուլի միջոցով՝ պատճէնումների ձեւով: Բերենք միջազգային գործածութիւն ունեցող մի դարձուածքի օրինակ, այն է՝

փառք Ալլահին կամ փառք Աստծոյ(-ծու) (577) - գոհունակութեան, բաւարարուածութեան արտայայտութիւն, անգլ.՝ God be thanked:

Անդրադառնանք նաեւ յաճախ օգտագործուող դարձուածքներին: Մենք կարծում ենք, որ այսօր բարձր կիրառա-յաճախականութիւն ունեն հետեւեալ ժողովրդա-խօսակցական դարձուածքները.

1. անպոչ գդալ (23) - ամէն (իրեն չվերաբերող) բանի մէջ մտնող, անգլ.՝ nosey parker; a ladle without a handle,

2. աշխարհի դարդը մէկին տալ (28) - անտեղի տարուել մեծ վշտով, հոգսերով (մասամբ նաեւ իրեն չվերաբերող), անգլ.՝ have all the sorrow of the world,

3. աստառը շուռ տուած (66) - իր համոզմունքը՝ դաւանանքը փոխած (մարդու մասին), անգլ.՝ be a turn-coat,

4. բմբուլները քամուն տալ (մէկի) (128) - 1. հողմացրիւ անել, ջախջախել, ոչնչացնել, պատժել, 2. յաղթել, անգլ.՝ give sb a sound scolding,

5. էլի իր էլը (կամ ձիւն) քշել (224) - իր ասածը կամ արածը շարունակել՝ ուշադրութիւն չդարձնելով ուրիշի դիտողութիւններին, իր խօսքը առաջ տանել, անգլ.՝ harp on one string,

6. էլի ականջում քնած (225) - ապուշ, տխմար, անտեղեակ (մարդ), շրջապատի իրադարձութիւններից անտեղեակ՝ անիրազեկ (մարդու մասին), անգլ.՝ he that knows nothing doubts nothing,

7. թանկից էժան չկայ (230) - աւելի լաւ է թանկ, բայց լաւորակ ու դիմացկուն

բան առնել, քան էժան, բայց վատորակ ու շուտ փճացող, անգլ.՝ the dearest is the cheapest; I am not rich enough to buy cheap things,

8. հո աշխարհի վերջը չի (360) - 1. մտահոգություն, տխրելու կարիք չկայ, 2. շտապելու անհրաժեշտություն չկայ, ինչո՞ւ էք շտապում, անգլ.՝ it isn't the end of the world, is it?,

9. շան մսի գին (458) - չափազանց էժան, անգլ.՝ a drug in the market,

10. շառի մէջ ընկնել (460) - անմեղ լինելով, անհիմն, անտեղի մեղադրուել որեւէ բանի մէջ, անգլ.՝ get into trouble:

Յաճախ դարձուածքի համարժէքը տարբեր լեզուներում՝ կապուած տարբեր պատկերացումների ու այլաբանությունների հետ, արտայայտուում է միանգամայն այլ բաղադրիչներով⁵: Այդպիսի դարձուածքների համարժէքները գտնելը համեմատաբար դժուար է եւ պահանջում է թարգմանչական մտքի թռիչք եւ լաւատեղեակություն:

Աներկբայ է, որ մեծ դժուարություն է ներկայացնում գտնել մի լեզուի դարձուածքի, ասացուածքի դիմաց մէկ ուրիշ լեզուի դարձուածքի, ասացուածքի համարժէքը, որը լիովին արտայայտի այդ իմաստը: Նման թարգմանությունը բարդ եւ պատասխանատու գործ է: Իրենց իմաստը, ոճական զանազան երանգների ճշգրիտ փոխանցումը սկզբնաղբիւր լեզուից թիրախ լեզու դժուարացնում է անգլերէն ուսումնասիրողի եւ թարգմանչի աշխատանքը:



⁵ Նոյն տեղում, էջ 42-43:

ԳՐԱԿԱՆ**ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԱՏԵՅՈՒ
«ԾԱՆՈՒՅՈՒՄՆ Ի ՎԵՐԱՅ ԳԼԽԱԴՐԻՆ» ԵՐԿԸ**

Բազմաթիւ հայ մատենագիրներ, հոգեւորականներ, Երուսաղէմի Սուրբ տեղերը այցի գալով, սրտի պարտք են համարել այս կամ այլ կերպ գրաւոր յիշատակ թողնել իրենց ուխտագնացութեան, սրբավայրերի նկարագրութեան մասին: Այսպիսի շատ յիշատակարաններ, համառօտ պատմութիւններ, ծանուցումներ, ներբողներ եւ տարաբնոյթ այլ երկեր են պահպանուել աղբիւրներում: Առիթ ունեցել ենք նշելու, որ հայագիտութեան ներկայիս կարեւոր առաջադրանքներից է Երուսաղէմի մասին եղած ձեռագիր եւ տպագիր այդ գրականութիւնը լիարժէք դարձնելն ու ամբողջական մատենագիտութիւն ստեղծելը: Այսինքն՝ մի առանձին գիրք, որում արտացոլուած կը լինեն հայ Երուսաղէմի մասին պատմող բոլոր տեսակի նիւթերը՝ հրատարակութիւններով, համառօտ նկարագրութիւններով եւ այլն¹:

Գրաւոր աղբիւրներ շաքը համալրում է եւս մէկ ստեղծագործութիւն՝ Կ. Պոլսի պատրիարք Կարապետ Արք. Պալատեցու «Ծանուցումն Սուրբ Տեղեաց» երկը: Այն մեր ձեռքն է անցել Հայ եկեղեցու ԱՄՆ Արեւմտեան թեմի պահոցներում: Թեմիս առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի յանձնարարութեամբ առաջնորդարանի գրաւոր որոշ պատառիկներ դիտարկելիս ի յայտ եկաւ մեծադիր էջերով մի գիրք, ըստ տիտղոսաթերթի ծանուցման՝ ընդօրինակուած 1891 թ. Երուսաղէմում: Ձեռագիրը պարունակում է Կարապետ Պատրիարք Պալատեցու «Տարեկան Քարոզք» ժողովածուն ամբողջութեամբ, որ մեր եկեղեցու տօներին համապատասխան ուշագրաւ եւ ընդարձակ՝ թուով 122 քարոզների շարք է: Պիտի ասել, որ Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում պահուում են Կարապետ Արք. Պալատեցու այդ «Քարոզգրքի» 4 այլ ձեռագրեր՝ ընդօրինակուած 19-րդ դարի կէսերին: Եւ ահա Ամբրիկեան եզերքում ի յայտ է գալիս Կարապետ Պալատեցու «Քարոզգրքի» մէկ այլ ձեռագիր, որ հազարաւոր մղոնների ճանապարհ է կտրել ու անցել ու հանգրուանել Արեւմտեան կիսագնդում²:

Կ. Պոլսի պատրիարք Կարապետ Պալատեցին ծնուել է 1783 թ., աշակերտել է Պօղոս պատրիարք Ալեքսանդրեցուն, ուսանել է Արմաշի Բարթողիմեան ուսումնական կենտրոնում, որի սերունդից էին իր ժամանակի յայտնի հոգեւորականներ Գէորգ Փոխանորդը, Պօղոս Չէնկիլէրցին, Յովհաննէս Գասպարեանը եւ ուրիշներ: Տարբեր տարիների եղել է նուիրակ Վանում, առաջնորդ Ամասիայի, Մարզուանի: 1823 թ. ըն-

¹ Երուսաղէմի մասին միջնադարեան ձեռագիր եւ տպագիր աղբիւրների մատենագիտական ցանկ կարելի է գտնել մեր «Գրիգոր Պատրիարք Շրթայակիր» գրքում, որ տպագրուեց Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի հոգածութեամբ 2017 թ. Երուսաղէմում: Տե՛ս այդ գրքի «Գրականութեան ցանկը», էջ 333-341:

² Կարապետ Արք. Պալատեցու Քարոզգրքի մասին առաւել մանրամասն տե՛ս մեր յօդուածը՝ **Նորայր Պօղոսեան**, Կարապետ Արք. Պալատեցու Տարեկան Քարոզգրքը, «Էջմիածին», 2018, թիւ Թ, էջ 72-80:

տրուել եւ մօտ մէկ տասնամեակ պաշտօնավարել է որպէս Կ. Պոլսի պատրիարք:

Պատմութեանը յայտնի է Կարապետ Պալատեցու պատրիարքութեան շրջանի յատկապէս շինարարական մի քանի նախաձեռնումներ: Դրանց թուում են 1826-ին Կ. Պոլսում պատահած հրդեհից ամբողջովին հրոյ ճարակ դարձած Ս. Աստուածածին աթոռանիստ Մայր եկեղեցին ու պատրիարքարանը, որ նոր յատակագծով կառուցուել եւ վերաբացուել է 1828-ին: Կարապետ Պալատեցին վախճանուել է 1850-ին եւ թաղուել Սկիւտարի գերեզմանատանը:

Կ. Պոլսի ստեղծագործող մեր այս պատրիարքից յայտնի է «Վապտեր հոգւոյ» խորագրով տպագիր երկասիրութիւնը, որ քրիստոնէական պարզ ուսուցում է հարց ու պատասխանի ձեւով³: Հեղինակի մէկ այլ երկ՝ աշխարհաբարի փոխադրուած, «Ծանուցում քահանաներին՝ ապաշխարութեան խորհրդի վերաբերեալ» խորագրով տպագրուել է վերջերս⁴:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Արեւմտեան թեմի Առաջնորդարանում պահպանւած ձեռագիրը, որից օգտուել ենք մենք: Այն հաստ կազմով թղթեայ գիրք է, 323 համարակալած եւ 33 չհամարակալած էջերով, չափսը՝ 32x25 սմ: Ընդօրինակուել է 1891 թ. Երուսաղէմում, ինչպէս 318-րդ էջի յիշատակարանից ենք իմանում՝ Սարկաւագ Պօղոս վարդապետ Դամասկոսցու կողմից:

«Յաջողութեամբն Աջոյն անեղին Աստուծոյ եւ օգնականութեամբ նորին Սբ. Հոգւոյն ամենալրացուցչի, ձեռնամուխ եղէ յայս Գիրք տարեկան քարոզութեանց, եւ ի միջոցի տասն հինգ ամսուր **աւարտեցաւ յԵրուսաղէմ 1891, փետրուարի 2: Ծառայ Տեառն Սարկաւագ Պօղոս վարդապետն Դամասկոսցի...**»:

Առանց էջահամարի վերջին թերթերին ընդօրինակուած են Կարապետ Պալատեցու այլ երկեր՝ «Քարոզ մասնաւոր իշխանութեան: Գաւազան վարդապետի» (6 էջ), «Առաջաբանութիւն առ նրբանկատ ընթերցասէր արամազնէից» ճառը (15 էջ), «Ծանուցումն ի վերայ Գլխադրի» (12 էջ) ոչ ընդարձակ երկերը: Այս վերջինը նուիրուած է Երուսաղէմի Սուրբ տեղերից մի քանիսի նկարագրութեանը:

Նշենք, որ «Ծանուցում...»-ի ներածական մասերը գրուած են գրաբարով, իսկ ընդհանրապէս շարադրանքը իր ժամանակի արեւմտահայ աշխարհաբարով է, գրաբարեան որոշ արատայայտութիւններով, յատկապէս երբ խօսքը աստուածաբանական թեմաներին է վերաբերում, տեղ-տեղ՝ անցում կատարելով հայատառ թուրքերէնին, որ անշուշտ ուղղուած է Օսմանեան Թուրքիայի ոչ հայախօս հայերին ու քրիստոնէաներին:

«Ծանուցումն ի վերայ Գլխադրի» երկի գրաբարով գրուած փառաբանական հատուածներից յետոյ հեղինակը պարզաբանում է սրբավայրերի մասին ծանուցում գրելու իր նպատակը: Ինչպէս որեւէ թագաւորի մօտ ընդունելութեան արժանանալու համար որեւէ բարեխօսի կարիքը ունենք, նոյնպէս եւ երկնաւոր թագաւորի առաջ են անհրաժեշտ բարեխօսներ: «Ով որ երկնաւոր թագաւորին Աստուծոյ առաջը ելլայ ու խնդրուածք մը ընել կամի նէ՝ անոր սիրելի եղած սուրբերէն մէկը իրեն բարեկամ ու շիֆայէքնի պիտոր ընէ, եւ նորին բարեխօսութեամբը կարող ըլլայ համարձակ մըտնալ երկնաւոր թագաւորին քովը: Ուստի այսօր մեծափափագ հանդիսացեալքդ ներկայացեալ կայք ի դուռն մեծին Յակոբայ բաժակարբու Գլխադրի սրբազան առաքելոյն, որ եւ ինքն իւր անձը ամենեւին չխնայեց իւր երկնաւոր թագաւորէն,

³ Կարապետ Եպս., Լապտեր հոգւոյ, Կ. Պոլիս, 1826 թ., 57 էջ:

⁴ Կարապետ Արք. Պալատեցի, Ծանուցում քահանաներին՝ ապաշխարութեան խորհրդի վերաբերեալ, քարգմ. եւ ընդ. խմբ.՝ Ա. Դիւանեան, Ս. էջմիածին, 2012 թ.:

մինչև առաջին շարժարանաց բաժակը նախքան զամենայն փութացաւ խմել մեծաւ յօժարութեամբ, իւր պատուական գլուխը անգամ վասն սիրոյն Քրիստոսի կտրել տուաւ Կեսարիա քաղաքին մէջ»:

Այդ է հիմնական պատճառը, որ Սուրբ Յակոբի բարեխօսութեանն ենք դիմում, մեկնաբանում է հեղինակը, եւ նրա Ս. Գլխադիր մատուոյն ու եկեղեցուն ուխտի գնում. «Ուրեմն հիմա հրամայեմք Սրբոյն Յակովբայ պատուական գլխոյն ջերմեռանդական ուխտս եւ երկրպագութիւնս մատուցանել, որ այս տեղս Սուրբ Աստուածածնի մաքուր ձեռքը ամփոփուած կայ»:

Ապա Կարապետ Արք. Պալատեցին անցնում է Ս. Յակոբեանց տաճարի եւ համաքրիստոնէական այլ սրբավայրերի համառօտ նկարագրութիւններին: «Ծանուցումըն Ս. Գլխադիրն» երկի ամբողջական տպագրութիւնը թողնելով յետագային՝ ներկայացնում ենք մի քանի հատուածներ, որոնք կարող են պատկերացում տալ հեղինակի լեզուի, ոճի եւ ստեղծագործութեան մասին առհասարակ:

Ի ՎԵՐԱՅ ՍՔ. ԳԼԽԱԴՐԻ

Այս հոյակապ տաճարը սրբազան առաքելոյն Յակոբայ Տեառնեղբօր եւ առաջին պատրիարքին տունը ըլլալով՝ այդ տեղը կեցած կ'աղօթէին վասն գլխադիր Սրբոյն Յակոբայ, որո՞նք - Աստուածամայրը, Յովհաննէս Աւետարանիչը եւ այլ ազգականներ եւ սիրելիներ Յիսուսին, զիրա իմացած էին գլխադիրն բռնվելը Հերովդեսէն, այն տրտմութեամբ աղօթած ատենին յանկարծ երկու հրաշտակ Սուրբ Յակոբայ պատուական գլուխը սպիտակ շէլքէի մէջ դրած բերին Աստուածամօր առաջը, որ նա ալ արտասուաթոր աչօք համբուրեց այն արինաթաթախ պատուական գլուխը, որ իւր ամենօրհնեալ մաքուր ձեռքը այս տեղը ամփոփեց, զիրա շատ սիրելի էին սրբազան առաքեալները Քրիստոսի Տեառն մերոյ, որոց համար ինքն Տէրն մեր անսուտ բերանով կը վճռէ, թէ՛ «Յառաջ քան զիմեզ աշխարհի ընտրեցի զձեզ»⁵: Նամանաւանդ ընտրելագոյն եւ գերազանց եւս էին երեքն քան զայլս աշակերտսն Յիսուսի, որո՞նք - Պետրոսն, Յակովբոսն եւ Յովհաննէս Աստուածաբան Աւետարանիչը, զիրա ասոնց միայն իւր աստուածային անհաս եւ անճառելի խորհրդոցը խորհրդակից ըրաւ, ասոնք էին միայն Թաբորական լեռը, ուր աստուածեղէն փառաց գերազանց պայծառութիւնը տեսնալու արժանացան, ասոնք էին Յիսուսին մօտը ըմբռնման գիշերը պարտէզին մէջ առ Հայր աղօթած ատենը, եւ ասոնց բարեխօսութիւնը առ Քրիստոս անդառնալի է:

Անոր համար նախապէս այս տեղոյն համբոյր կը մատուցանէք ջերմեռանդ տէրունական ուխտաւորքդ, որով համարձակութիւն ունենաք դիմել առ աղբիւրն անմահութեան եւ առ աթոռն շնորհաց՝ կենարար տեղիսն Քրիստոսի, որ ի Սուրբ Յարութեան երկնահանգոյն տաճարն:

Նախ եւ առաջ սեղանի ներքեւն Տեառնեղբօր արդար Յակոբայ պատուական մարմինը, որ առաջին պատրիարքն էր սրբազան տեղեաց, դիմացի եկեղեցին Ս. Էջմիածին, ուր կանանց խոստովանահայրը կը նստի, անդ երեք երկրպագելի քարինք կան:

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ ԶՈՐՐՈՐԴ ԲԱՆՏԻ

Շնորհք ամենասուրբ շարժարանաց Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եկեացէ

⁵ Հմմտ. Յովն. ԺԵ.19:

եւ բնակեցցէ ի սիրտս եւ ի հոգիս ձեր տէրունական ջերմեռանդ ուխտաւորացդ, որ ձեր յատուկ բաղձանքը ըլլալով՝ եկաք յայս տնօրինական սրբազան տեղիքները, ձեր օրհնեալ աչօք տեսնելու արժանացաք, ուրեմն աչք ձեր ի լոյս եղիցի եւ ձեր հոգեւոր ուխտը եւ երկրպագութիւնը ընդունելի եղիցի ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ շնորհազարդեալ առաքինական բարեմասնութեամբ, ամէն:

Այս խաւարային տեղը, որ կը տեսնաք, կըսվի Չորրորդ բանտ, զիրա երեք սանաթի չափ այս մութ տեղը Տէրն մեր ոտքերը կոճեղի թոմարուսի մէջ պրկած կեցաւ, որ տանա խաչին գործիքները պատրաստ չըլլալուն համար, զիրա մարդկային բնութիւնը ընդդէմ Աստուծոյ մեղանշած ըլլալովը անելանելի մեղաց բանտին մէջ անլուծանելի կապանօք կապուած սատանային ձեռքը գերի եղած էր, եւ հեշ մէկ մը կարող չէր ձեզի այն մեղաց բանտէն ազատելու: Այնպէս որդին միաժին Բանն Աստուած յիւր մարդասիրութենէն ստիպուեցաւ յիւր ընտանի փառացը եւ հայրենի աթոռոյն խոնարհիլ յայս վայր հողեղէն, մեզ նման մարդ ըլլալով մեր փրկութեանը համար բանտարկեալ մնաց, մեր հոգին ի մեղաց բանտէն եւ ի գերութենէն սատանայի ազատեց եւ փրկեց: Այս այսպէս գիտնալով, քանի որ գալու ըլլաք նէ, ուխտ եւ երկրպագութիւն կը մատուցանէք այս Բանտ անուանեալ տեղոյն շարշարանաց, արտասուաթոր աչօք ձեր հոգւոյն փրկութիւն խնդրելով: Տէր Յիսուս իւր շարշարանաց շնորհին փրկեցցէ զհոգիս ձեր յամենայն մեղաց հանապազ, ամէն:

Ի ՎԵՐԱՅ ՀԱՆԴԵՐՁԻՑ ԲԱԺԱՆՄԱՆ

Այս Սուրբ տեղոյն ալ կըսվի Հանդերձ բաժանում, երբ որ Քրիստոսի Տեառն մերոյ մահացնելու վճիռ կտրեց Պիղատոս նէ՝ չորս զինուորի դահճի յանձն արար զՓրկիչն մեր, զոր տանեն շարշարեն եւ մահացնեն այնպէս ի վերայ խաչին: Ամէն շարշարանքը տալէն ետքը խաչափայտին վերայ բեւեռեցին եւ վրայի ունեցած հանդերձը բերին այս տեղը, զորս բաց ըրին այն չորս զինուորները ու այնպէս իրենց մէջ բաժանեցին, բայց պատմուճանը առանց կարածի ըլլալուն վիճակ ձգեցին, թէ որուն վերայ ելլայ նէ՝ անոր տրվի, ինչպէս որ մարգարէն ալ հարիւրաւոր տարեօք յառաջ մարգարէական հոգւով խօսեր էր, յասելն թէ՝ «Բաժանեցին զհանդերձս իմ է մէջ յիւրեանս եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին»⁶: Հանդերձիւս կիմացուի Քրիստոսի անապական մարմինը, որ ի խորհուրդ Սրբոյ Պատարագին անձախապէս միշտ կը բաշխի ամենայն հաւատացելոց, պատմուճանով ալ կիմացուի իւր անբաժանելի աստուածութիւնը ընդ մարդկեղէն մարմնով պարագրեալ, ուրեմն ո՛ր հատուցեալք անմեկնելի սիրով միացէ՛ք ի Քրիստոս՝ յաճախելով ուխտ եւ երկրպագութիւն այն տեղոյն եւս, որ Հանդերձ բաժանում կըսուի: Օրհնեալ էք եւ օրհնեալ եղերուք, ամէն:



⁶ Մատթ. ԻԷ. 35:

ԳՐԱԿԱՆ**ԱՐԹՈՒՐ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ**

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրութեան ֆակուլտետի
առկայ բակալավրիատի 1-ին կուրսի
ուսանող

**ԾՆՈՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽԳԻՐԸ՝
ԸՍՏ ԲԱՖՅՈՒ «ՍԱՄՈՒԷԼ» ՊԱՏՄԱՎԷՊԻ**

Այսօր, չգիտես ինչու, գնալով աւելի լսելի են դառնում չհիմնաւորուած ինչ-ինչ տրտունջներ՝ կապուած Բաֆֆու «Սամուէլ» պատմավէպում առկայ ծնողասպանութեան հետ՝ ի՞նչ մի վէպ է դա՝ կեղծ, անմարդկային, ինչպէ՞ս կարող է հայորդին սպանել սեփական ծնողներին, հեղինակը չհիմնաւորուած հայրենասիրութիւն է խաղացել, եւ նման անհեթեթ բաներ: Մեզ համար ամենացաւալին թէրեւս այն է, որ վերջնահաշուում յանկարծ պարզւում է այդ կեղծ «բարոյախօսների»՝ վէպի բնագրին բնաւ ծանօթ չլինելը: Խոստովանենք՝ շատ ափսոս... Այստեղից էլ՝ յանկարծ մի տեսակ յայտնւում ենք աբսուրդի թատրոնում:

Եւ ահա սոյն յօդուածի նպատակն ամէնից առաջ այն է, որ նախ՝ թոյլ չտալ դոյզն-ինչ վիրաւորել բացառիկ հայրենասէրի եւ տաղանդաշատ գրողի յիշատակը, եւ յետոյ՝ կոչ անել ուշադիր կարդալ կամ վերընթերցել արուեստի այդ գլուխ գործոցը՝ բացայայտելով ծնողասպանութեան հոգեբանական անցումները: Հնարաւորինս կը լինենք համառօտ:

Յայտնի է, որ ծնողասպանութեան հիմնախնդիրը հետաքրքրել է մարդկութեանը դեռեւս վաղ ժամանակներից: Դրա ապացոյցն է այս խնդրի դիտարկումը Հին Հռոմում, ուր նման արարքի դրդապատճառ համարւում էր ծնողի իշխանութիւնից ազատուելու ցանկութիւնը, որն էլ պայմանաւորում էր հօր աւելի յաճախադէպ սպանութիւնը, իսկ մօր սպանութիւնը մեծ մասամբ բացատրւում էր խելագարութեամբ: Հռոմէացիները նաեւ առանձնակի ուշադրութիւն էին դարձնում ծնողասպանութեան իրականացման տեղի եւ միջոցի խնդրին. դա կարող էր առաւելապէս լինել ննջասենեակն ու թոյնը: Սակայն նրանք առաջ էին քաշում մէկ այլ տարբերակ եւս. ծնողի, մասնաւորապէս հօր սպանութիւնը կարող է կատարուել տնից հեռու՝ ճամբորդութեան պահին, քանի որ այդ ժամանակ հայրը վերարժեւորւում է եւ դադարում է որդու համար անձեռնմխելի կամ անհասանելի մեծութիւն լինելուց:

Այս թեման արծարծուել է նաեւ Անգլիայում 1600-1760-ականներին: Թէպէտ ծնողասպանութեան հիմնական դրդապատճառ ընդունուած է համարել ծնողների խելագարութիւնն ու դաժանութիւնը, այն, ըստ որոշ գիտնականների, աւելի շուտ պայմանաւորուած է անհատի անառիթ դաժանութեամբ, որին խորթ է խղճմտանքը, եւ նա ծնողին դիտում է որպէս խոչընդոտ: Վերոյիշեալ ժամանակահատուածում ծնողասպա-

նութիւնն Անգլիայում դիտարկուում էր որպէս «ամենաբարբարոս, անբնական եւ նողկալի երեւոյթ»¹: Այս նոյն շրջանում ծնողասպանութիւնն այնտեղ ընկալուում էր որպէս մշակութային որոշակի հասկացութիւն, քանի որ, տուեալ ժամանակին բնորոշ պատկերացման համաձայն, հասարակական կարգը պայմանաւորուած էր ընտանեկան բնական հիերարխիայով. երեխաները ծնողների ենթականերն էին, պարտաւոր էին հնազանդ լինել եւ ունէին պարտականութիւններ նրանց հանդէպ: Այսպէս, երեխան դիտարկուում էր որպէս ծնողի ծառայ, եւ նա կարող էր ընդվզել ու սպանութիւն գործել միայն, երբ, ինչպէս նշում է անգլիացի օրէնսդիր Ֆերդինանդո Պուլտոն (1536-1618թթ.), խախտուած էին «ծառայական, այլ ոչ թէ բնական պարտականութիւնները»²: Աւելին՝ նա նման արարքը համարում էր երեխայի կողմից կատարուած դաւաճանութիւն բնութեան կողմից սահմանուած պարտականութեան հանդէպ:

Ժամանակակից դիտանկիւնից ծնողասպանութիւնը բաժանուում է երեք տեսակի. այդ արարքը գործում են մարդիկ, որոնք՝ ա/ ունեն հոգեկան հիւանդութիւններ, բ/ որպէսզի վերջ տան ֆիզիքական եւ զգացական շարունակական ստորացումներին, գ/ որպէսզի հեռացնեն ծնողին՝ իբրեւ խոչընդոտի՝ սեփական շահերին հասնելու ճանապարհին:

Ծնողասպանութեան պատճառների վերաբերեալ ներկայումս առաւել տարածւած մօտեցումը ծնողների կողմից երեխային ստորացնելն է եւ վերջինիս հանդէպ արհամարհական վերաբերմունքը: Դեռեւս 1616-ին անգլիացի հոգեւորական Ճոն Դաունեյմը (1571-1652թթ.) նշում է, որ զայրոյթն ու վրէժխնդրութիւնը կարող են պատճառաբանուած լինել, եթէ հիմնաւորուած են մեղքի զգացման վրայ: Ծնողասպանութեան պատճառ կարող է դառնալ նաեւ ծնողի հարկադրանքը՝ երեխային ամուսնացնել սեփական կամքին հակառակ:

Այժմ վերադառնանք հայկական իրականութիւն, մասնաւորապէս մեր խնդրոյ առարկայ վէպի ժամանակահատուածը՝ 4-րդ դարի երկրորդ կէսը:

Բաֆֆի վիպասանն արդիական խնդիրներ բարձրացնելու համար կամրջում է հայոց պատմութեան անցեալն ու ներկան՝ 4-րդ դարի երկրորդ կէսի դրամատիկ իրադարձութիւններն իր ապրած շրջանի՝ 19-րդ դարի 80-ականների ազգային եւ սոցիալ-տնտեսական ծայրայեղ վատ վիճակին զուգահեռելով՝ ցարիզմի վարած հայահալած, գաղութատիրական, ուրիշ խօսքով՝ սպիտակ ջարդի քաղաքականութիւն, հայկական դպրոցների արգելանք եւ այլն: Այսինքն՝ ազգակործան նման ծանրագոյն խնդրի հայ ժողովուրդն արդէն բախուել էր, սակայն կարողացել էր դիմակայել դրան ու յաղթահարել ժամանակի աննախադէպ արհաւիրքները:

Անտարակուսելի է, որ Բաֆֆին ռոմանթիկ գրող էր եւ իր պարագայում առաջնորդուել է «Խրաքանչիւր դէպքում հայրենիքի շահը վեր դասել անձնականից» գաղափարական սկզբունքով: Այդտեղից էլ՝ վէպի գլխաւոր հերոսը՝ Սամուէլը, դարձել է նրա գեղագիտական իտէալի հիմնական կրողը: «Ոչ մի այլ իրադարձութիւն չէր կարող այնքան գայթակղիչ լինել ռոմանթիզմի համար, որքան Սամուէլի անսովոր ու գերբնական արարքը,՝ գրում է հայկական ռոմանթիզմի նշանաւոր տեսաբանը: - Ահա թէ ինչու այն պիտի հանուէր պատմութեան յիշատակարանների թռուցիկ ակնարկութիւնից եւ դրուէր առաջին պլանի վրայ, իմաստ եւ ուղղութիւն տալով

¹ St^u Sir Roger L'Estrange, The Bloody Sons Warning-piece. Or, News from Reading in Berkshire (London, UK: Printed for Thomas Johnson, 1676).

² St^u Ferdinando Pulton, De Pace Regis et Regni, Viz. A Treatise Declaring Which Be the Great and General Offences of the Realme, and the Chiefe Impediments of the Peace of the King and Kingdome (London, UK: Printed... for the Companie of Stationers, 1609), fol. 111v.

վիպական սիւժէի ընթացքին: Եւ դա միանգամայն հասկանալի է, քանի որ այնտեղ անհատականութեան ընդգծում կայ, կամքի ուժեղ լարում եւ զգացմունքի արտակարգ բռնկում: Այս տեսակէտից Բաֆֆին իրօք որ ռոմանթիկական արուեստի փայլուն հմտութեամբ է կերտել թերեւս իր ամենահոյակապ գրական հերոսի՝ Սամուէլի կերպարը»³:

Յիրաւի, իրաւացի է ակադեմիկոս Ս. Սարինեանը: Ամբողջ խնդիրն այն է, որ Սամուէլի՝ սեփական հօրն ու մօրն սպանելու հոգեբանական անցումները ներկայացնելիս ռոմանթիկ արուեստագէտը դրսեւորել է հոգեվերլուծութեան բացառիկ ձիրք՝ խորապէս մարդկային ու բնական վիճակները համոզութեամբ ներհիւսելով ռոմանթիզմին այնքան բնորոշ արտասովորի բաղադրիչներին: Աւելի պարզ արտայայտուելու դէպքում ստացում է հետեւեալ պատկերը՝ Սամուէլը բնաւ էլ չէր սպանելու ծնողներին. նա ո՛չ մոլագար էր, ո՛չ խելագար եւ ո՛չ էլ կոյր հայրենասէր: Բաֆֆին պարզապէս այնպէս է զարգացնում դիպաշարը, որ առաջին դէպքում Մամիկոնեան սպարապետական տոհմի ազնուազարմ երիտասարդը վիպական հիւսուածքում ըստ էութեան կարծես ինքնապաշտպանուելու համար է սպանում հօրը (Վահան Մամիկոնեանը ձեռքն արդէն տարել էր դէպի սուրը), իսկ մօրն էլ սպանում է... ստիպուած: Այո՛, նրան լուեկայն ու հազիւ զսպուած զայրոյթով այդ քայլին են դրդում պարսկական ատրուշանի վերածուած նախկին եկեղեցու շուրջբոլորը խմբուած բազմաթիւ հայորդիները. դրա վկայութիւնն են նրանց շուրթերից ակամայ դուրս թռած «Արժանի՛ էր» ուրախաձայն աղաղակները: Իսկ երբեմն ճառախօսութեան վերածուող արտայայտութիւնները, հայրենասիրական սրտաճմլիկ յայտարարութիւնները՝ կարող են առարկել մեր ընդդիմախօսները: Դրա պատասխանը մէկն է. դա բխում է ռոմանթիզմի ընդհանուր տարերքից՝ պանծալի ոճ, վերամբարձ ու հռետորական շեշտեր՝ այնքան խորթ ռեալիզմին: Դա ըստ էութեան գեղագիտական ուրոյն ըմբռնում է՝ թելադրուած գեղարուեստական մեթոտի պահանջներից:

Այժմ հետեւենք գլխաւոր հերոսի հոգեբանական անցումներին:

Երբ Սամուէլն իմանում է հօր՝ Վահան Մամիկոնեանի եւ քեռու՝ Մերուժան Արծրունու դաւաճանութեան մասին, ընկնում է խոր անհուսութեան մէջ. ««Մոգետներով է գալիս իմ հայրը...»- մտածում էր նա խորին դառնութեամբ,- «եւ իւր հետ բերում է, որպէս օգնական, պարսից զօրութիւնը... գալիս է ոչնչացնելու մեր եկեղեցիները, մեր դպրոցները, մեր դպրութիւնը... գալիս է պարսկացնելու մեզ... Նա գալիս է ձեռք ձեռքի տուած Մերուժանի հետ... Թագաւորութիւնը սպանեցին, այժմ պէտք է սպանեն ազգութիւնը, կրօնը... Մենք այսուհետեւ պէտք է պարսկերէն խօսենք եւ պարսկերէն աղօթենք... Եւ իմ հայրը մի այդպիսի եղեռնագործութեան պէտք է մասնակից լինի, յաւիտենական նզովք դնելով Մամիկոնեանների տոհմի վրայ...»»⁴:

Սամուէլը, սակայն, բնաւ չի մտածում հօրն սպանելու մասին: Բնաւ: Բաֆֆին նուրբ հոգեբան է. հերոսի հայեացքի առջեւ յառնում է ոչ թէ ինչ-որ շարքային դաւաճան, այլ հարազատ հայրը, որին անհունօրէն սիրում է եւ սիրում նրա կողմից: Մի միտք, սակայն, մի հեռաւոր միտք, այնուամենայնիւ, առկայծում է երիտասարդի հոգում. «Մամիկոնեանը ծնում է դաւաճաններ... Մամիկոնեանը ծնում է եւ հերոսներ... Երբ իմ հօրեղբայր Վարդանը արքայազն Տիրիթի հետ ապստամբուեցան մեր Արշակ թագաւորի դէմ եւ դիմեցին պարսից Շապուհ արքային, - դարձեալ իմ հօրեղբայր Վասակն էր, որ գնաց նրանց ետեւից եւ, ճանապարհին բռնելով, սպանեց թէ Տիրիթին, եւ թէ

³ Սարինեան Ս., Բաֆֆի. գաղափարների եւ կերպարների համակարգը, Երեւան, 1985, էջ 256:

⁴ Բաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 7, Երեւան, 1956, էջ 32: Այս հատորից կատարուող մէջբերումների էջերը յետ այսու կը նշուեն միայն համապատասխան տեղում՝ փակագծի մէջ:

իւր եղբօրը... Նրա ձեռքը չդողաց թափել իւր հարազատի արիւնը, որ դաւաճանում էր իւր թագաւորին եւ իւր հայրենիքին... Իսկ ե՞ս...» (33): Սա մտքի շա՛տ հեռաւոր առկայծում էր, աղօտ մի յիշողութիւն, գուցէ եւ բարոյական արդարացման առաջին կասկածանք, որից անմիջապէս յետոյ սարսուռում է ծնողասէր զաւակը եւ դառնագին հեկեկում. «Վերջին խօսքը արտասանելու միջոցին, կարծես, նրա շրթունքները կրակով այրեցին, նա չկարողացաւ վերջացնել, կրկին ընկաւ գահաւորակի վրայ եւ, աչքերը բռնելով, սկսեց դառն կերպով հեկեկալ: - «Ա՛խ, հայր իմ... ա՛խ, հայր իմ...» - կրկնում էր նա եւ արտասուքը հեղեղի նման թափւում էր աչքերից» (33):

Ահա հոգեբանական ինչպիսի՜ համոզւութեամբ է արձակագիրը ներկայացնում իր սիրելի հերոսի ներաշխարհի փոթորկումները: Նա այնուհետեւ Սամուէլին ներկայացնում է հօրը տեսնելու, նրա հետ սրտառուչ զրոյց բացելու, գուցէ եւ հայրենադաւ ծնողին դարձի բերելու **ճանապարհներին**: Եւ հէնց այստեղ է, որ իմաստաբանօրէն ծանրաբեռնւում է «ճանապարհ» հասկացութիւնը, եւ ընդհանրապէս ճանապարհի արժէքաբանութիւնը Րաֆֆու գեղագիտական հայեցակարգում: Այս առիթով յիշատակելի է Պրօֆ. Վ. Սաֆարեանի մի կարեւոր դիտարկումն այդ ճանապարհների մասին. «...առաքելութիւնների իրագործման ընթացքի մէջ առանձնայատուկ իմաստ է ձեռք բերում ճանապարհի խորհուրդը՝ իր գաղափարական ու գեղագիտական վերացարկումների, ուղղակի-աշխարհագրական եւ մետաֆորային-խոհական ընկալումների մէջ»⁵: Գրականագէտը, ի թիւս վիպասանի այլ գործերի, այնուհետեւ մանրամասնում է ճանապարհի խորհուրդը մեր խնդրոյ առարկայ վէպում՝ գրելով. ««Սամուէլ» վէպի սիւժետային հիմքը եւս ճանապարհն է՝ սկսած «Երկու սուրհանդակի» ուղուց մինչեւ Ողական ամրոց եւ այնտեղից Իշխանաց կղզի ու կրկին Ողական, որի ընդգրկուն խորհուրդը կայ վերնագրերում եւս՝ «Մէկը-արեւմուտքում, միւսը-արեւելքում», «Ճանապարհները բաժանում են», որտեղ երկուստէք ցուցադրւում է մորթուող երկրի ողբերգութիւնը»⁶:

Հեղինակը Սամուէլին միտումով տանում է հէնց այն ճամբաներով, որտեղով արդէն անցել էին հայրն ու քեռին: Նա ամենուր տեսնում է աւերուած շէներ, կործանուած եկեղեցիներ, այրուած մագաղաթներ եւ խոշտանգուած մարդկանց... Ուրիշ խօսքով՝ Սամուէլի՝ իր ճանապարհին տեսած հոգեկան յօշոտումները պիտի համոզի դարձնէին ծնողասպանութեան մղձաւանջը, եւ այդտեղ հոգեբանական կարեւոր գործօն էին լինելու շարունակաբար կրկնուող հարցումների՝ սիրտ կեղեքող պատասխանները.

«Նա (Սամուէլը - Ա. Ս.) դարձեալ մնաց շփոթութեան մէջ:

- Ո՞վ ոչնչացրեց այդ բոլորը:

- Քո հայրը, տէր իմ:

- Իմ հայրը... - գոչեց որդին եւ, կարծես, կայծակով շանթեցին նրա ճակատը» (263-264):

Կամ՝ վերջիշենք մէկ այլ դրուագ. դարձեալ ճանապարհին, բայց այս անգամ Վանում. Սամուէլը ցնցւում է՝ տեսնելով բերդի պարիսպներից կախուած Համազասպուն՝ Աշխէնի մօր մերկ մարմինը.

« - Ո՞վ կախաղան հանեց:

- Վահան Մամիկոնեանը:

⁵ Սաֆարեան Վ., Գրականութեան բազմաձայնութիւնը («Ճանապարհի խորհուրդը Րաֆֆու արձակում»), Երեւան, 2012, էջ 94:

⁶ Նոյն տեղում, էջ 103-104:

- Կայե՛ն...- բացականչեց խեղճ երիտասարդը՝ աչքերը բռնելով: - Նա սպանեց եղբորը, իսկ դու՝ քո քրոջը» (308):

Առաջին հայեացքից թուում է՝ հայրասպանութեան «նախապատրաստութեան» հիմքերը դրուել են, մնում է միայն աւարտը: Ո՛չ: Բաֆֆին սթափ արուեստագետ է, նուրբ հոգեբան. մինչեւ պատումի ցաւալի աւարտը որդին ծնողասպանութեան վճիռ բնաւ չունէր, անգամ՝ մինչեւ վերջին վայրկեանները: Հեղինակը «Արաքսի որոգայթները» գլխում է ներկայացնում հօր ու որդու հանդիպումը: Այն մի կողմից պարուրուած է երկու հարազատների կարօտի անհուն ջերմութեամբ, բայց հոգեկան ինչ-որ զուսպ երանգներով, միւս կողմից՝ ուրախութեան ու ցաւի, դաւաճանութեան, սիրոյ եւ ատելութեան իրարամերժ զգացմունքներով: Որդու տրտմութիւնը չի մեղմում հօր նուիրած բացառիկ ընծան՝ «գեղեցիկ, ոսկեգոյն նժոյգը», հօրն էլ սարսափեցնում են սիրելի որդու՝ «մահուան համար կռուելու», որսի ժամանակ վագրերի, առիւծների կամ հրեշների հանդիպելու ցանկութիւնները: Նրանք մեղմ զրուցում են, թում է, անմեղ բաների մասին, յետոյ այդ զրոյցն աստիճանաբար վերածւում է քաղաքական վէճի. Սամուէլը հասկանում է, որ հայրը հայրենիքին դաւաճանել է՝ Արշակունի արքայական տան նկատմամբ ունեցած ատելութեան զգացումից. նրա յորդորները՝ ուղղուած հօրը, թէ «ընդունի՛ր տառապեալ որդուդ աղաչանքը, մի՛ արատաւորիր Մամիկոնեանների պայծառ անունը յաւիտենական ամօթով, դեռ ուշ չէ, դեռ կարելի է վնասի կէսից ետ դառնալ» (510-511), հանդիպում են «կուսակցական» ոգով կուրացած Վահան Մամիկոնեանի կատաղի դիմադրութեանը: Ուշադիր լինենք. Սամուէլը հօրն աղաչում է ճակատագրական արարքից բառացիօրէն ըրալէներ առաջ: Վահանը չի ընկրկում, աւելին՝ կատաղած հարցնում է, թէ որդին որ կուսակցութեանն է պատկանում, եւ երբ լսում է հայրենանուէր զաւակի վճռորոշ պատասխանը՝ «այն կուսակցութեանը, որ հաւատարիմ է մնացել հայրենի եկեղեցուն եւ սիրելի թագաւորին» (511), այլեւս հրաժարւում է Սամուէլին իր որդին համարելուց եւ սպառնում «անխնայ պատժել այնպիսիին»: Որդին էլ ստիպուած հօր երեսին է շարտում «դաւաճա՛ն» անունը, եւ Վահանը՝ իբրեւ այդ վիրաւորանքի պատասխան, անմիջապէս պատրաստւում է սպանել Սամուէլին: Վերջինս, սակայն, որսալով աղէտի չափազանց մօտ լինելը, արդէն վեր էր պարգել սուրը. «Հայրը ձեռքը տարաւ դէպի իւր սուրը: Բայց որդու սուրը արդէն մերկացած էր: Նա շողաց եւ կայծակի նման մխուեցաւ հօր սրտի մէջ» (511):

Հոգեբանական նոյն շիկացած անցումներին ենք ականատես լինում նաեւ մայրասպանութեան տեսարանում: Ակամայ հայրասպան դարձած որդին, արդէն տեւականօրէն տառապելով ընկճախտով ու ջլախտով, վերադառնում է հայրենի ոստան՝ Ողական ամրոց: Մօր՝ Տաճատուհու պարսկասիրութիւնը վաղուց էր քաջայայտ որդուն, եւ վերջինս էլ իր հերթին կարծես յարմարուել էր դրան ու քամահրանքով էր վերաբերւում այդ «թուլութիւններին»: Բայց այն, ինչ տեսնում է Սամուէլն իր բնօրրանում, արդէն վեր էր իր բոլոր երեւակայութիւններից. Տաճատուհու հրամանով քանդուել էր հայոց սրբազան եկեղեցին ու վերածուել պարսկական ատրուշանի, մայրն էլ, շրջապատուած բազմաթիւ մոգերով, կատարում էր մագդեզական ծիսակատարութիւն՝ «գարնանամուտի մեծահանդէս տօնախմբութիւնը»... Ի՞նչ էր սա՝ երա՞գ, խաբե՞կա՞նք, իրականութի՞ւն... Որդին խնդրում է հանգցնել պիղծ կրակը, բայց մայրը մնում է անդրդուելի՝ բարկութեամբ պատասխանելով, որ ինքն «աստուածասպան լինել չի կարող»: Դրան նորից հետեւում է որդու հաստատակամ պահանջը, սակայն վերստին ապարդիւն: Եւ այդժամ հայրենի եզերքի արժանաւոր զաւակը, հոգեկան անլուր խռովքի մէջ, բացականչում է.

« - Թող մարդիկ ինձ անիրաւ կոչեն, թո՛ղ մարդիկ ինձ եղեռնագործ կոչեն, ահա՛

այն սուրը, որ սպանեց դաւաճան հօրը, կը սպանէ եւ ուրացող մօրը...» (560): Իսկ այդ ամէնին հետեւում էին հայրենակիցները՝ վախւորած, զսպուած զայրոյթով, լի ատելութեամբ դէպի իրեն տիրակալուհի հռչակած շնչին ուրացողը, եւ լռելեայն ելքի էին սպասում: Մնացեալն արդէն հասկանալի է:

Ծնողասպանութեան այս հիմնախնդրի առիթով անենք նաեւ նշանագիտական մի դիտարկում. ուշագրաւ է, որ Սամուէլը հօրն սպանում է ճանապարհին, որն այս պարագայում խորհրդանշում է նրա ծնողի իսկ ձեռքով ստեղծուած արհաւիրքների քարքարոտ ուղին. հայ ժողովուրդն այն հարկադրուած էր անցնել, իսկ մօրը՝ քանդուած եկեղեցու վայրում՝ ուրիշ կրօնի խորհրդանիշի՝ ատրուշանի առջեւ. չէ՞ որ վերջինս, ըստ հայ քրիստոնեային բնորոշ մտածելակերպի, մարմնաւորում է ընտանիքի կայունութիւնն ու ամուր հաւատը: Մայրը ոչ միայն ինքն էր ուրացել իր սեփական կրօնը, այլեւ նման զազրելի արարքի էր դրդում անմեղ ժողովրդին: Ուստի նշանագիտութեան տեսակէտից Սամուէլին կարելի է համարել սեփական ժողովրդի իւրատեսակ փրկիչ:

Դէ՛, ինչ. Սամիկոնեանները պակասում են մի դաւաճանով եւ մի ուրացողով ու աւելանում... մի հերոսով: Բայց այդ հերոսութիւնը ձեռք է բերում անասելի ծանր գնով՝ ծնողասպանութեան զարհուրելի արարքով: Ծնողասպանը, հաւատացած եղէք, ինքը կ'ուզէր ողջակէզ լինել, բայց չգնար այդ քայլին. նա այդ մասին մի ժամանակ, գուցէ եւ ենթագիտակցաբար, բայց արդէն ակնարկել էր հօրը Իշխանաց կղզում որսի ժամանակ. «Երանի՛ թէ չար լինէի... երանի՛ թէ եղեռնագործ լինէի... Գուցէ ինձ եւս կը վիճակուէր նոյն օրհասը, որ վիճակուեցաւ բարի Արտաշէսի չար որդուն... Թշուառ շարագործը կորաւ, անհետացաւ Արաքսի անդունդների մէջ, բայց հանգստանալ չկարողացաւ... Մասիսի քաջքերը տարան, շղթայեցին նրան մի մթին այրի մէջ, ուր մինչեւ այսօր տանջւում է նա...» (505):

Յայտնի է, որ «Սամուէլ» պատմավէպն անաւարտ է: Բայց, ելնելով վերոբերեալից եւ ընդհանրապէս վիպական հիւստածքի տրամաբանութիւնից ու հեղինակի նուրբ դիտողականութիւնից եւ հոգեվերլուծական ձիրքից, կարող ենք հաստատապէս ասել, որ վէպի շարունակութեան կիզակէտում պիտի յայտնուէին ծնողասպան եղած որդու հոգեկան յօշոտումները: Ծանր արարքը, թէկուզ եւ յանուն հայրենիքի, պահանջում է շատ թանկ գին: Դա մօտաւորապէս այնպիսին կը լինէր, ինչն այսպէս է բնորոշել Աքոթ Ֆիցջերալդն իր «Գիշերն անոյշ է» հանրածանօթ վէպում՝ իհարկէ, հոգեբանական բոլորովին այլ իրադրութեան մէջ. «Ասում են, նման վէրքերը մասամբ բուժւում են. սա մի անխոհեմ համեմատութիւն է մաշկի սպիւնների բուժման հետ, բայց կեանքում այդպէս չի լինում: Այդ վէրքերը փոքրանում են, դառնում գնդասեղի գլխիկի չափ ու երբեք չեն փակւում: Կրած տառապանքի հետքը աւելի շուտ կարելի է համեմատել մատի կամ աչքի կորստի հետ: Գուցէ տարուայ մէջ մէկ անգամ յիշենք այդ, բայց եթէ յիշենք, միեւնույն է, փրկութիւն չկայ»⁷:

⁷ Ֆիցջերալդ Ս., Մեծն Գեթսբի, Գիշերն անոյշ է, Եր., 1981, էջ 322:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Փիլիսոփայութեան պատմութեան,
տեսութեան եւ տրամաբանութեան
ամպիոնի ասպիրանտ

ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱԿՈՏՆԵԱՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԳԵՐԸ ԻՐԱԿԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՕՍՈՅԹՈՒՄ

«Ճշմարտութիւն» հասկացութիւնը պատմականօրէն միշտ էլ առանցքային դեր է ունեցել իմացութեան տեսութեան հասկացութեային համակարգում: Սակայն XX դարի վերջերից սկսած իմացութեան հիմնախնդիրներով զբաղուող մասնագէտները յատուկ ուշադրութեան առարկայ են դարձրել «Ճշմարտութեան»-ը հակասող հասկացութիւններն ու դրանցից սերող հայեցակարգերը, որովհետեւ արձանագրուեց, որ «Մարդը ոչ միայն ճանաչող, բարոյական եւ գեղագիտական էակ է, այլ նաեւ՝ էակ, որն ունակ է անտեսել ճշմարիտը՝ որպէս այդպիսին, հէնց այն պատճառով, որ այն ճշմարիտ է»¹:

Այս իրողութիւնը, իրաւա-քաղաքական խօսույթի վերաբերեալ, շրջանառութեան մէջ դրեց այնպիսի հասկացութիւններ, ինչպիսիք են սուտը, կեղծիքը, սխալը, քաղաքական միջոց, պատմոյթը, հասարակական եւ անհատական գիտակցութեան մանկապոլիացիան, եւ այլն: Ներկայումս այս հասկացութիւնների ուսումնասիրութիւնն ու տարաբնոյթ իմաստաւորումը լայն տարածում է ստացել մասնագիտական գրականութեան շրջանակներում: Եւ քանի որ «ոչ-ճշմարտութեան» գործառնոյթներն ու տեղը տարբեր ոլորտներում դեռ լիովին ուսումնասիրուած չէ, ուստի կան մի շարք իրողութիւններ, որոնք դեռ չեն գտել իրենց հնարաւոր անուանումներն ու իմաստաւորումները: Հասկանալի է, որ անուանումն ու իմաստաւորումն անհրաժեշտաբար ենթադրում են միմեանց, իսկ սրանց առկայութիւնը հնարաւորութիւն է ընձեռում՝ իրողութիւնների եւ երեւոյթների տիրապետման ու կարգաւորման համար. «Աշխարհը կառավարելու համար՝ մենք բռների կարիք ունենք, որովհետեւ մենք բռների կարիք ունենք՝ տիրելու համար դատարկութեանը»²:

Այսպէս, «սխալ»-ն այնպիսի պնդումն է, որը չլինելով իրական, չիմացութեան կամ մոլորութեան պատճառով, ներկայացուում է՝ որպէս ճշմարիտ: «Սխալ»-ը, ինչպէս հասկացութեան վերաբերմունքային չեզոքութիւնից երեւում է, խիստ տարբեր է «ստից»: Իսկ «սուտ»-ն այնպիսի պնդում է, որը չհամապատասխանելով իրականութեանը, յաւակնում է ներկայանալ՝ որպէս ճշմարտութիւն:

Յայտնի է, որ քաղաքական միջոց գլխաւոր իւրացատկութիւնն այն է, որ վերջինս

¹ Ивахненко Е., Онтология Конфликта И Стратегия Посредничества, Век толерантности, Выпуск 6, 2001, e /http://www.tolerance.ru/VT-6-ontologiya.php?PrPage=VT/05. 21. 2019., п. 2.

² Bottici Ch., a Philosophy of Political Myth, New York, Cambridge University Press, 2007, p. 118.

ենթակայ չէ՝ ճշմարիտ/սխալ չափմանը: Միֆն՝ ընդհանրապէս, իսկ քաղաքականը՝ մասնաւորապէս, ո՛չ ճշմարիտ է, ո՛չ էլ սխալ, այն այլ է: Սա բղխում է միֆի պլիւրալ էութիւնից՝ ի հակադրութիւն լոգոսի բացարձակ մոնիստական յաւակնութեան³:

Մանիպուլիացիան, որը նաեւ կենսագործունէութիւն է (ոչ միայն՝ մտակառոյց), ի տարբերութիւն միֆի, անհրաժեշտաբար կապ ունի ստի եւ կեղծիքի, այն կիրառողի «խորամանկութեան վարպետութեան», «դերասանական խաղի», եւ այլնի հետ⁴: Այս տարբերութիւնները չեն բացառում, այլ ընդհակառակը, նպաստում են, որ «ոչ-ճշմարտի» տեսակները, հարկ եղած դէպքում, միմեանց լրացնեն՝ գործունէութիւնը դարձնելով առաւել արդիւնաւէտ:

«Ոչ-ճշմարիտ»՝ «ճշմարտութեան»-ը հակադիր հայեցակէտերի շարքն, անշուշտ, այսքանով չի եզրափակւում. «Եթէ սուտը (իմա՝ «ոչ-ճշմարիտը» - Գ. Յ.), ճշմարտութեան նման, լինէր միադէմ, մեր վիճակը զգալիօրէն թեթեւ կը լինէր: Այս դէպքում մենք հաւաստի կը համարէինք հակառակն այն բանի, ինչ ասում է ստախօսը, սակայն ճշմարտութեան հակոտնեան ունի հարիւր հազարաւոր կերպարանք եւ չունի սահմաններ»⁵:

Վերը թուարկեցինք եւ սեղմ բացատրութիւններ տուցինք, ինչ-որ հասկացութեամբ նշանակուող, իրողութիւններ, սակայն (մասնաւորապէս իրաւա-քաղաքական) խօսույթ(ներ)ում՝ վերը նշուածների կողքին, յաճախ, առկայ են այնպիսի տարրեր, որոնց ոչ-ճշմարիտ լինելն ակնյայտ է, բայց դրանք, գործնականում, քննարկման չեն ենթարկւում: Այսպիսի տարրերը ընդունւում են՝ որպէս սկզբունքներ, աքսիոմներ ու, երբեմն էլ, հանդիսանում են որպէս ելակէտային դրոյթներ: Եւ չի բացառւում, որ այն դէպքերում, երբ (հակամարտութիւնները կարգաւորող) երկխօսութիւնները մտնում են փակուղի, իրականում, դրա բուն պատճառը լինի հէնց այսպիսի ելակէտերի առկայութիւնը: Խօսույթային այսպիսի տարրը կարելի է անուանել «**ճշմարտութեան հակոտնեա(մեր)**»։ սա սերտ կապուած է ճշմարտութեանը, որովհետեւ, ճշմարտութեանը հակադրութելով հանդերձ, ընդունւում է՝ որպէս ճշմարիտ: Եւ հակոտնեայ է, որովհետեւ իր առկայութեամբ, դուրս է մղում ե՛լ «ճշմարտութիւնը», ե՛լ այն փնտռելու պահանջի գիտակցումը:

Արդ՝ սոյն վերլուծութեան մէջ մենք կը փորձենք կառուցարկել եւ յստակեցնել «ճշմարտութեան հակոտնեայ» հասկացութիւնը: Եւ ցոյց կը տանք, որ այն, որպէս յատկութիւն, վերագրելի է մտայնի բոլոր կառույցներին՝ հասկացութիւնից մինչեւ հայեցակարգ: Բայց որպէսզի ասուածն աւելի պարզ լինի, եւ յետագայ պարզաբանումները՝ յստակ, այստեղ հարկաւոր է տալ որոշ պարզաբանումներ՝ «ճշմարտութեան» վերաբերեալ:

Չնայած գրեթէ բոլոր փիլիսոփաներն են անդրադարձել ճշմարտութեան հիմնահարցին եւ փորձել այն լուծել, միեւնոյն է՝ մինչ օրս էլ «...փիլիսոփայութեան համար չկայ աւելի կեդրոնական խնդիր, քան ճշմարտութիւնն է»⁶: Առաւել յայտնի են փիլիսոփայութեան պատմութեան ընթացքում ձեւաւորուած՝ «ճշմարտութեան» նկարագրութեան չորս յարացոյց. կորեսպոնդենտական (ըստ որի՝ ճշմարտութիւնը մտքի համապատասխանութիւնն է իրականութեանը), կոհերենտական (ըստ որի՝ ճշմարիտ է այն միտքը, որը չի հակասում արդէն ձեռք բերուած ճշմարիտ գիտելիքին),

³ Տե՛ս, նոյն տեղում, էջ 99:

⁴ Տե՛ս, օրինակ, Капа - Мурза С., *Манипуляция Сознанием*, Москва, Алгоритм, 2005, էջեր 15 – 17, 139:

⁵ Մոնտեմ Մ., Փորձեր, երեւան, «Հայաստան», 1991, էջ 39:

⁶ Medina J., Wood D., General Introduction, Truth: engagements across philosophical traditions, Hoboken, Blackwell Publishing, 2005, p.1.

կոնվենցիոնալիստական (ըստ որի՝ պայմանաւորուածութեամբ արձանագրուած դրոյթները համարուում են ճշմարիտ), եւ պրագմատիկական կամ օգտապաշտական (ըստ որի՝ ճշմարիտ է այն գիտելիքը, որը օգնում է լուծելու նոր խնդիրներ եւ այդ իմաստով՝ բերում է օգուտ): Ինչպէս տեսնում ենք՝ նշուած չորս յարացոյցներում էլ էական դեր է խաղում համապատասխանութիւնը, ուստի ընդհանրացնելով կարելի է պնդել, որ ճշմարտութիւնը համապատասխանութիւն է:

Այսու՝ ճշմարտութեան հակոտնեան, լինելով անհամապատասխանութիւն (իրականութեանը, յայտնի այլ ճշմարտութիւնների, եւ այլն) ներկայանում եւ ընդունւում է ճշմարտութեանը փոխարինող՝ չթաքցնելով իր ոչ-ճշմարիտ լինելը:

«Սուտ»-ը (մանիպուլիացիան նոյնպէս), ճշմարտութեան հակոտնեայի նման ունի յաւակնային նպատակայնութիւն (էնտելեխիա), սակայն, ի տարբերութիւն ճշմարտութեան հակոտնեայի, չի բացայայտում իր ոչ-ճշմարիտ լինելը: Քաղաքական միջոցով, ճշմարտութեան հակոտնեայի ստուերում է ճշմարտութեան փնտրտուքի հնարաւոր պահանջը, սակայն, ի տարբերութիւն ճշմարտութեան հակոտնեայի, այն ոչ-ճշմարիտ է: Այսպիսով, «ճշմարտութեան հակոտնեայ»-ն այն անհամապատասխանութիւնն է, որը յաւակնում է լեգիտիմանալ եւ լեգիտիմանում է՝ որպէս ճշմարտութիւն, թէպէտ յայտնի է դրա ոչ-ճշմարիտ լինելը:

Ասուածը կարելի է հասկանալ Ժ.-Պ. Լեոտարի՝ գիտութեան կարգավիճակի լեգիտիմութեան նմանաբանութեամբ՝ միայն մէկ էական տարբերութեամբ: Յետարդիականութեան տեսաբանը պնդում է, թէ «...քանի որ գիտութիւնը չի սահմանափակւում միայն գործիքային օրինաչափութիւնների ձեւակերպմամբ, այլ փնտռում է ճշմարտութիւնը, ուստի այն պէտք է լեգիտիմացնի խաղի իր կանոնները: Իսկ որքանով, որ այն պահանջում է լեգիտիմացնող խօսույթը՝ սեփական կարգավիճակին յարաբերած, այնքանով դա անուանում է փիլիսոփայութիւն»⁷: Ինչպէս երեւում է, Լեոտարի համոզմամբ, գիտութիւնը հէնց ինքն է «լուծում» իր լեգիտիմութեան հարցը՝ իր կարգավիճակն ապահովող սեփական մասն անուանելով փիլիսոփայութիւն: Իսկ այս՝ ճշմարտութեան հակոտնեայի դէպքում, վերջինս լեգիտիմութիւն է ստանում արտաքին պատմոյթներից. պատմոյթներ, որոնք լեգիտիմացման են պարտադրում ոչ-ճշմարիտ ըմբռնուած հայեցակէտը:

Յատկանշական է, որ «լեգիտիմութիւն» հասկացութեան ներքոյ, շարունակելով Լեոտարին, հասկանում ենք նոյն քառասուն ու պատահական գործընթացը: Այն է՝ ինչ-որ բան ընդունելի է, եթէ այն այդպիսին է համարւում, ինչ-որ դասի պատկանող անձանց սահմանած, չոփորոշիչներին համապատասխանելու դէպքում⁸: Օրինակ՝ «Համակարգի աշխատանքային բնութագրիչների օպտիմիզացումը, դրա արդիւնաւէտութիւնը դառնում է լեգիտիմութեան չափորոշիչ...»: Այս ամէնը բխում է «...միեւնոյն «ընտրութիւնից», որն անուանւում է Արեւմուտք»⁹: Այսինքն՝ կայ մի սոցիալական տարածք (այս դէպքում՝ Արեւմուտքը), որը թելադրում է չափորոշիչներ, եւ եթէ ինչ-որ իրողութիւն չի համապատասխանում այդ չափորոշիչներին, ապա ընդունելի չէ: Իսկ հարցն այն մասին, թէ այդ չափորոշիչներն իրականութեան հետ ինչպիսի՞ յարաբերութիւններ ունենան, քննարկման ենթակայ է: Դրանք սկզբունքներ են, եւ եթէ դրանց հակասող հայեցակէտեր կան, ապա քննարկման՝ շտկման, փոփոխման եւ/կամ հեռացման են ենթակայ այս վերջինները:

Ճշմարտութեան հակոտնեան ունի իր տեսակները, որոնցից կ'առանձնացնենք

⁷ Лютар Ж. - Ф., Состояние Постмодерна, Санкт - Петербург, Алетея, с. 9.

⁸ Տե՛ս, նոյն տեղում, էջ 27-28:

⁹ Նոյն տեղում, էջ 28:

ու կը ներկայացնենք հնարաւոր երեքը.

- ա) արձանգորութեան անհարկի ընդլայնուածութիւն,
- բ) դետերմինանտի նենգափոխում,
- գ) տրամաբանական նոյնութեան օրէնքի խախտում:

Արձանգորութեան անհարկի ընդլայնուածութեան առկայութիւնը յղի է մեծ վրտանգներով. այդպիսի դատողութիւնը, չմասնաւորեցնելու դէպքում, կարող է հիմք հանդիսանալ՝ այնպիսի գործողութիւնների համար, որոնք լիովին հակադիր կը լինեն տուեալ նորմատիւ հայեցակարգին: Ժ. Կլեբբերսը նկատում է, որ Հիւսիս-ատլանտեան դաշնագրի 5-րդ յօդուածի համաձայն, ՆԱՏՕ-ի անդամ երկրները «...պարտաւորուում են կատարել այն, ինչ կը համարեն հարկաւոր...»: «Հասկանալի է, շարունակում է Կլեբբերսը, որ այսօրինակ պարտաւորութիւնը անդամ-երկրներին, իրենց որոշակի գործողութիւններում, թոյլ է տալիս բաւական լայն ազատութիւններ»¹⁰: Այսպիսով, Հիւսիս-ատլանտեան դաշնագրի սոյն նորմատիւ դատողութեան ծաւալային այս ընդլայնութիւնը թոյլ է տալիս՝ ցանկացած գործողութիւն եւ գործողութեան արդարացում: Ուրեմն, այս յօդուածը կա՛մ լիովին անիմաստ է, կա՛մ արձանագրուել է՝ իր հետեւում թաքցնելու համար այլ միտումներ, որոնք ուղիղ տեքստով արձանագրելու դէպքում, կարող էին բարդութիւններ առաջացնել: Ե՛ւ անիմաստութեան, ե՛ւ այլ միտման դէպքում՝ սոյն արձանագրութիւնը խիստ վտանգաւոր է:

Ինքնին հասկանալի է, որ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ներկայացուցիչները յստակ նկատել են վերը նշուած թերութիւնը, սակայն քանի որ այլ ընդունելի ձեւակերպում առկայ չի եղել (կամ այլ պատճառներով), նախընտրել են դրա լեգիտիմացումը:

Դրութիւնը նոյնն է նաեւ նկարագրողական հայեցակէտերի դէպքում. պաշտօնական Թուրքիայի իրականացրած՝ Հայոց ցեղասպանութիւն(ներ)ը ներկայացնում են արձանագրային այնպիսի մեծ ծաւալ ներառող դատողութիւններով, որի մասնաւորեցման ընթացքում, իրականութեանը հակադիր դատողութիւնը «լեգիտիմութիւն է» ստանում եւ հնարաւորութիւն ընձեռում՝ ստի ու կեղծիքի յաւելման համար: Թուրքական պաշտօնական եւ կողմնակալ պատմաբանները զարգացնում են մի վարկած, ըստ որի, Թուրքական իշխանութեան ներքոյ, հայերն ապրել են բաւականին բարեկեցիկ ու անվտանգ կեանքով՝ ե՛ւ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակահատուածում, ե՛ւ դրանից առաջ: Սակայն քանի որ հայերը դրսեւորում էին պետութեանը դաւաճանելու միտումներ, ապա «...պատերազմի տարիներին կառավարութիւնը հարկադրուած իրագործել է «դաւաճան» հայերի տեղահանութիւն եւ տարագրութիւն՝ ռազմաճակատի գծից հեռու «ապահով» վայրեր: Բայց ցաւալիօրէն, ճանապարհին՝ համաճարակների, քրդերի յարձակումների հետեւանքով տարագիրներն ունեցել են զոհեր, ընդ որում՝ պատերազմական վիճակով թելադրուած, ոչ պակաս կորուստներ են ունեցել նաեւ իրենք՝ Թուրքերը: Այսինքն՝ փորձ է արւում կենդանութիւն տալ երկուստեք զոհ լինելու հնացած վարկածին՝ դրանով իսկ ժխտել ցեղասպանութիւնը»¹¹: Փաստօրէն, ըստ Թուրքական մեկնաբանութեան, տեղի է ունեցել բնակութեան վայրի բռնի տեղափոխութիւն: Բռնի ոյժի կիրառման պատճառը եղել է հայերի «դաւաճան» վարքագիծը, իսկ օսմանեան կառավարութիւնը, լիովին օրինաչափ կերպով, կիրառել է բռնի ոյժ՝ իր իսկ օրինախախտ հպատակի նկատմամբ: Ուրեմն, հայերի նկատմամբ ոչ թէ տեղի է ունեցել ցեղասպանութիւն, այլ

¹⁰ Klabbbers J., An Introduction International Institutional Law, New York, Cambridge University Press, 2002 p. 29.

¹¹ Մելքոնեան Ա., Օսմանեան կառավարութեան ժողովրդագրական փառաբանութիւնը որպէս ցեղասպանութեան դրսեւորում ըստ Էրզրումի եւ Ալիսլայի նահանգների օրինակի, Թուրքափոսական եւ օսմանափոսական հետազոտութիւններ, Երեւան, «Զանգակ», 2002, էջ 39:

բնակութեան վայրի՝ «արդարացուած հարկադրական տեղափոխութիւն»։ Թուրքական կողմի այս խօսույթային ընթացքի համար տրամաբանական հիմք է հանդիսանում անհարկի (միտումնաւոր) ընդլայնուած՝ «տեղահանութիւն եւ տարագրութիւն» նկարագրութիւնը։

Գալուի դետերմինանտի նշենք, որ հասարակական եւ քաղաքական նպատակային բոլոր գործողութիւններն էլ ունեն իրենց դետերմինանտները։ Սակայն, մասնաւորապէս, քաղաքական խօսույթներում դրանք, միտումնաւոր, կամ փոխարինւում են ուրիշներով կամ փոխակերպւում, այսինքն՝ նենգափոխւում են։

Քաղաքական բոլոր գործողները յայտարարում են խաղաղութեան, ազատութեան, եւ այլ մարդասիրական գաղափարներ, բայց ողջ աշխարհում շարունակւում է հակամարտութիւնների սրացումն, ու դրանց թուի աճը։ Իսկ սա նշանակում է, որ քաղաքական «մարդասէր» գործողները կամ ոչինչ չեն անում, կամ անում են այն, ինչի մասին չեն ասում։ Այսինքն՝ նենգափոխւում են իրենց քաղաքական դետերմինանտները, որոնց տեքստային արտայայտութիւնը խիստ տարբեր է իրականից։ Այսպէս՝ Անկարան (պաշտօնապէս եւ ոչ-պաշտօնապէս) հետեւողականօրէն սատարում է Բաքուին։ Թուրքական գիւլենական շարժումը հսկայական միջոցներ է ծախսում տարածաշրջանում եւ այլուր։ Մոսկուան ոչ մի առիթ բաց չի թողնում (յաճախ էլ ինքն է առիթներ ստեղծում)՝ միջամտելու համար Կովկասեան պետութիւնների ներքին եւ արտաքին գործերին, ԱՄՆ-ն եւ Արեւմուտքն ընդհանրապէս՝ Իսրայէլա-Պաղեստինեան ու ողջ արաբա-մուսուլմանական աշխարհի խնդիրներին, եւ այլն։ Այս բոլոր մեծ գործողները, որպէս կանոն, հանդէս են գալիս ճշմարտութեան, արդարութեան, ազատութեան եւ, առհասարակ, ամէն հնարաւոր մարդասիրական նպատակների անունից։ Սակայն կատարուող գործողութեան հանրայնացուած նըպատակը, եւ կատարուող գործողութիւնից անհրաժեշտաբար բխող արդիւնքը, որը մատնուած է լուրթեան, խիստ տարբեր են միմեանցից։ Ասուածի լաւագոյն օրինակ է հանդիսանում Զ. Նեյի՝ «փափուկ իշխանութեան» կիրառութիւնը, ըստ որի, «... իշխանութեան հզօրութեան չափի ստուգումը, աւանդաբար՝ դրա հզօրութիւնն էր պատերազմում։ Այսօր, սակայն, իշխանութեան սահմանումը կորցնում է գինուորական ոյժի եւ նուաճման իր շեշտադրումը, որոնք նշում էին առաջներում։ Տեխնոլոգիայի, կրթութեան եւ տնտեսական աճի գործօններն աւելի նշանակալի են միջազգային իշխանութեան մէջ, մինչդեռ աշխարհագրական դիրքը, բնակչութիւնը եւ հումքը դառնում են նուազ կարեւոր»¹²։

Այսպէս, համաշխարհային մասշտաբով՝ լուրջ դերակատարութիւն ունի գլոբալացման գործընթացը։ Այն ենթադրում է, որ «...գլոբալ աշխարհում ֆինանսները, ապրանքները եւ մարդիկ...» պիտի ունենան տեղափոխուելու անխափան հնարաւորութիւն, եւ ամենուր մաքսերն ու յարկերը պէտք է լինեն «...ստանդարտ ու իրար նման»¹³։ Այս բաւական մարդասիրական պրագմատիզմն, իր գործադրման պահից ի վեր, չի դադարում համակողմանի քննադատութիւնների ենթարկուելուց։ Գլոբալացումը յաճախ անուանում են «արեւմատայնացում» կամ «ամերիկայնացում»՝ ընդգծելու համար, սոյն գործընթացին համընթաց, ամերիկեան արժէքների, ուղղակի կամ անուղղակի, պարտադրումը։ Գլոբալացման հայեցակարգն ունի եւ ջատագովներ, եւ անխնայ քննադատներ, սակայն ինչպիսիութեան իրական գնահատականը

¹² Nye J. S., Soft Power Source: Foreign Policy, No. 80, Twentieth Anniversary (Autumn, 1990), pp. 153-17, Published by: Washingtonpost Newsweek Interactive, <http://www.jstor.org/stable/1148580>, Accessed: 13-09-2016, 14:46 UTC, p. 154.

¹³ **Յովհաննիսեան Դ.**, Տարածաշրջանային Զարգացումներ. «Երեւ Ծովերի Տեսութիւն», Երեւ Ծովերի Համալիր, Վերլուծական տեղեկագիր, № 9, Երեւան, 2016, էջ 21-22:

դեռ չի տրուել (քիչ չեն, այսպէս կոչուած, կոնսպերուլոգները, որոնք սրանում տեսնում են համամարդկային դաւադրութիւն): Փաստն այն է, որ գլոբալացման բոլոր իրողութիւններն էլ համահարթեցման հսկայական քաղաքատարր են պարունակում, եւ այն հանրոյթները, որոնք ուզում են պահպանել իրենց մշակութային առանձնայատկութիւնները, չնայած հնարաւոր օգուտներին, մշտապէս տուժում են¹⁴: Այս գործընթացը, չնայած անկողմնակալ ներկայանալուն, միեւնոյն է՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութեան մի զգալի մասն է, եւ լիովին ինքնանպատակ լինել չի կարող: Սրանով, փաստացի, իրականանում է ԱՄՆ-ի ազդեցութիւնն իր սահմաններից դուրս: Մի իրողութիւն, որը բացառում է հաշուի առած չլինեն թէ՛ հայեցակարգի հեղինակները, թէ՛ դրան հաւանութիւն ու կենսագործում հաղորդած պաշտօնեաները:

Պաշտօնական Մոսկուան, գրեթէ միշտ, մեծ դերակատարութիւն է ունեցել հայ-թուրքական եւ դարաբաղեան հակամարտութիւններում: Ներկայումս ՌԴ-ն հանդիսանում է միջնորդ կողմ դարաբաղեան հակամարտութեան մէջ: Մի շարք մասնագէտների պնդմամբ, դարաբաղեան հակամարտութիւնը վերաճել է, այսպէս կոչուած, կոճակային հակամարտութեան (button conflict), որը տարածաշրջանը ղեկավարելու լաւագոյն գործիքներից է¹⁵: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, հէնց դարաբաղեան հակամարտութեան միջոցով է «...Ռուսաստանը միշտ փորձում պահպանել իր ազդեցութիւնը Հարաւային Կովկասում...»¹⁶:

Յայտնի է, որ ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ, Թուրքիան համաշխարհային հանրութեանը ներկայացնում է գերտերութեան յայտեր: Մասնաւորապէս՝ շատ է խօսւում «նէօ-օսմանիզմ» հայեցակարգի մասին, որի այսպիսի անուան կիրառմանը չնայած դէմ է արտայայտուել Ա. Դաւութօղլուն (Թուրքիայի նախկին արտաքին գործերի նախարար եւ արտաքին քաղաքականութեան «ճարտարապետ»)՝ Վերջինս, սակայն, իր ճառերից մէկում, ուղիղ տեքստով, ասում է. «Այո՛, մենք «նոր օսմաններ ենք»»¹⁸:

Դաւութօղլուն «Թուրքիայի արտաքին քաղաքականութեան տեսլականը» հարցազրոյց-յօդուածում թուարկում է մի շարք առաջնորդների հանդիպումներ, որոնք տեղի են ունեցել Թուրքիայի միջնորդութեամբ: Նա շեշտում է Իրանի եւ Եգիպտոսի առաջնորդների հանդիպումը եւ եզրակացնում, թէ «...եթէ այս լիդերները չհանդիպէին, Միջին Արեւելքում կարգ հաստատելու հնարաւորութիւնը շատ քիչ կը լիներ»¹⁹: Սրանով Դաւութօղլուն փորձում է լեգիտիմացնել Թուրքիայի «...ակտիւ քաղաքականութիւնը... տարածաշրջանում»²⁰. «Թուրքիան պէտք է ... կառուցողական դեր խաղայ շրջակայ միջավայրում՝ ապահովելով կարգ, կայունութիւն եւ անվտանգութիւն»²¹: Ահմեթ Դաւութօղլուն անդրադառնում է նաեւ 2007 թ.-ի Թուրքիայի կատարած

¹⁴ St' u, Scheuerman W., "Globalization", *The Stanford Encyclopedia of Philosophy* (Fall 2018 Edition), Edward N. Zalta (ed.), URL = <https://plato.stanford.edu/archives/fall2018/entries/globalization/>, p. 1.

¹⁵ St' u, Յովհաննիսեան Դ., Տարածաշրջանային Զարգացումներ. «Երեւ Ծովերի Տեսութիւն», Երեւ Ծովերի Համակարգ, Վերլուծական տեղեկագիր, № 9, Երեւան, 2016, էջ 27:

¹⁶ Shougarian R., Methodological Mistakes of International Mediation of Armenian-Turkish Relations, Երեւ Ծովերի Համակարգ, Վերլուծական տեղեկագիր, № 9, Երեւան, 2016, p. 83.

¹⁷ St' u, Սուրիասեան Ս., Թուրքիայի Արտաքին Քաղաքականութեան Առանձնայատկութիւնները Վրաստանում (2002-2016թթ.), Երեւ Ծովերի Համակարգ, Վերլուծական տեղեկագիր, № 9, Երեւան, 2016, էջ 139:

¹⁸ Аватков В., Неоосманизм. Базовая идеология и геостратегия Турции, Свободная Мысль, <http://svom.info/entry/458-neoosmanizm/>, п. 1.

¹⁹ Davutoglu A., Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, This essay is based on the transcript of a CNN Turk program with Prof. Davutoglu on January 2, 2008, Insight Turkey Vol. 10 / No. 1 / 2008, pp. 77-96, p. 84.

²⁰ Նոյն տեղում, էջ 82:

²¹ Նոյն տեղում, էջ 79:

գործողություններին իրաքում՝ որակելով այն, բացառապէս, պայքար ընդդէմ ահաբեկչութեան՝ ի դէմս Քրդական աշխատանքական կուսակցութեան²²։ Վերջապէս, Արտաքին գործոց նախարար Դաւութօղլուն իր եզրակացութեան մէջ յատուկ նշում է, որ «...Թուրքիան տարածաշրջանում նոր ի յայտ եկող գործորդ է եւ շատ զգայուն կը լինի այլ ... գործորդներին նկատմամբ»²³։

Թուրքիայի այսօրինակ դիրքորոշումը որակւում է՝ «նէօ-օսմանիզմ», որը ագրեսիայի այնպիսի դրսեւորում է, որ իր վրայ է վերցնում «...տարածաշրջանի եւ նոյնիսկ աշխարհի ճակատագրի պատասխանատուութիւնը»²⁴։ Եւ որքան էլ Թուրքիան աշխարհին ներկայանայ խաղաղութիւն հետապնդող եւ տարածաշրջանային մշակութային ազատութիւններ ապահովող գործորդ, միեւնոյն է՝ Թուրքիայի արտաքին իրական քաղաքականութեան դետերմինանտներն այլ են։ Դրանք արձանագրուած են «...փակ «Կարմիր գրքում» կամ, ինչպէս յաճախ այն անուանում են «գաղտնի սահմանադրութեան մէջ»։ Սրանում նկարագրուած են Թուրքիայի Հանրապետութեան հիմնական վտանգներն ու մարտահրաւէրները, սահմանուած՝ դրա թշնամիները եւ կողմնակիցները»²⁵։ Այս գաղտնի փաստաթուղթը լիարժէքօրէն շարունակում է Թուրքական ծաւալապաշտական եւ նուաճողական նկրտումների դիրքորոշումը։ Սա նէօ-օսմանիզմի յարացոյցի արձանագրութիւնն է, որի արմատները հասնում են մինչեւ Օսմանեան կայսրութեան ժամանակները։ Այս յարացոյցը «... իրենից ներկայացնում է Թուրքիայի ոչ-պաշտօնական արտաքին քաղաքականութեան դոկտրինան. «փափուկ ոյժի» միջոցով՝ համապատասխան տարածքներում ազդեցութեան ոլորտների ընդլայնում՝ ի հաշիւ տնտեսութեան, հումանիտար ազդեցութեան եւ վերագրային ոգու»²⁶։ Թուրքիայի՝ «արտաքին խաղաղարարի» իրական դետերմինանտը, որը ներկայումս արտայայտում են նէօ-օսմանիզմ տերմինով, ուղիղ շարունակութիւնն է «...պանթուրքիզմի եւ նէօ-պանթուրքիզմի, պան-իսլամիզմի եւ, նոյնիսկ, պան-թուրանիզմի»²⁷։ Ահա այս դետերմինանտների առկայութիւնն է ուղղորդում Թուրքիային, Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, յատուկ եւ ճկուն յարաբերութիւններ հաստատելու Ատրպէյճանի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Ուզբեկստանի եւ Թուրքմենստանի հետ²⁸։ Եւ եթէ պան-թուրքիզմի շրջանակը սահմանափակւում է ազգութեան սկզբունքով, ապա նէօ-օսմանիզմն, իր մէջ համադրելով նէօ-պանթուրքիզմը, պան-իսլամիզմը, Թուրքական եւրասիականութիւնը, իր ծաւալապաշտական գործունէութիւնները հասցնում է մինչեւ Աֆրիկայի հարաւային շրջաններն եւ այլուր²⁹։

Այս ամէնը փաստում է, որ ազատականութեան, արդարութեան, մարդասիրական օգնութեան, խաղաղութեան, եւ այլ նմանատիպ յայտարարութիւնների (հայեցակարգերից արտածուող) ներսում առկայ է տուեալ յայտարարութիւնն իրականացնողի արտաքին քաղաքական շահը՝ բուն դետերմինանտը։ Իսկ արտայայտուած մտքերը՝ լայն հանրութեանը լիովին այլ կողմ ուղղորդելու փորձ են։

Այս փաստը յստակ գիտակցում են նաեւ, վերը նշուած, պետութիւնների հետ քաղաքական յարաբերութիւնների մէջ գտնուող այլ պետութիւններն ու կազմակեր-

²² Նոյն տեղում, էջ 80։

²³ Նոյն տեղում, էջ 96։

²⁴ **Аватков В.**, Неоосманизм. Базовая идеология и геостратегия Турции, Свободная Мысль, <http://svom.info/entry/458-neoosmanizm/>, п. 1.

²⁵ Նոյն տեղում, պ. 2։

²⁶ Նոյն տեղում, պ. 3։

²⁷ Նոյն տեղում։

²⁸ Նոյն տեղում։

²⁹ Նոյն տեղում, պ. 4։

պոլիտիկաները, սակայն երկկողմանի լուծիլն է պահպանում բուն դետերմինանտի կապակցութեամբ: Եթէ կողմերից մէկը (բացառապէս՝ իր իսկ բուն դետերմինանտով պայմանաւորուած) բացայայտ խօսում է միւս կողմի իրական դետերմինանտի մասին, ապա այս վերջին կողմը նման խօսույթը որակում է՝ իբրեւ անհիմն մեղադրանք եւ սպառնում (կամ իրականացնում)՝ դադարեցնել համագործակցութիւնը:

Այսու՝ դետերմինանտի նենգափոխութիւնը ճշմարտութեան հակոտնեայի մի տեսակ է, որի մասին գիտեն բոլոր կողմերն էլ, սակայն թոյլ են տալիս դրա լեգիտիմութիւնը, որպէսզի շարունակուի համագործակցութիւնը:

Տրամաբանական նոյնութեան օրէնքի խախտման միջոցով ի յայտ եկող ճշմարտութեան հակոտնեան, թէրեւս, ամենատարածուածն է մարդկային գործունէութեան բոլոր ոլորտներում: Եւ սոյն վերլուծութեան շրջանակներում՝ հակոտնեայի այս տեսակը յատկապէս կարեւոր է, որովհետեւ այն լաւագոյնս ի ցոյց է դնում ճշմարտութեան հակոտնեայի էութիւնը:

Այսպէս, տրամաբանութեան գրեթէ բոլոր դասագրքերում կարելի է գտնել Արիստոտելի³⁰ նախանշած՝ «Նոյնութեան օրէնքը», որն իր ներկայիս ձեւակերպումը ստացել է յետագայ մշակումների արդիւնքում. «Տրամաբանութեան տեսակէտից ճիշդ կառուցուած, կանոնաւոր մտածողութեան մէջ իւրաքանչիւր միտք՝ կշռադատողութիւնների ընթացքում գործածուած ու գործածուող իւրաքանչիւր դատողութիւն նոյնական է ինքն իրեն»³¹: Այս՝ նոյնութեան օրէնքը, ենթադրում է նոյն հետեւողականութիւնը, եթէ խօսւում է ինչ-որ հասկացութեան կամ հայեցակարգի մասին՝ անկախ այն բանից՝ դա կիրառւում է խօսույթային տուեալ տարրի հեղինակը, թէ՛ մէկ ուրիշը: Այսինքն՝ եթէ, օրինակ, խօսւում է արդարութեան մասին, ուրեմն յարկ է հասկանալ, թէ «արդարութեան» ո՞ր ընթերցման հետ գործ ունենք տուեալ համատեքստում: Այդ միեւնոյն ըմբռնումը պէտք է հետեւողականօրէն շարունակուի մնալ նոյնը, քանի դեռ յստակ չի յայտարարուել, թէ յետ այդու փոխւում է նոյնանուն հայեցակարգի բովանդակութիւնը: Իսկ եթէ պարզւում է, որ գործ ունենք «արդարութեան» լիովին նոր ըմբռնման հետ, ապա հէնց այդ ըմբռնումով էլ պէտք է շարունակուեն կշռադատողութիւնները:

Այսպէս, առանձնակի քննարկման առիթ չկայ, որպէսզի պարզ լինի, որ արդարադատութիւն իրականացնող ցանկացած հիմնարկի գործունէութեան բուն նւապատակը արդարութեան իրականացումն ու դրա պահպանումն է: Սակայն երբեմն այնպէս է ստացւում, որ այս հիմնարկին պատկանող մարմինների լիովին իրաւաչափ գործողութիւնները յանգեցնում են տիպիկ անարդարութեան: Օրինակ՝ 2018 թ.-ի Մայիս-Սեպտեմբեր ամիսներին ՀՀ-ում հասարակական եւ, նոյնիսկ, քաղաքական լայն հնչեղութիւն էր ստացել ՀՀ մի քաղաքացու (կին) ձերբակալման հարցը, ով մի քանի անգամ մեղադրուել եւ դատապարտուել էր՝ գողութիւն կատարելու համար: Գողօնը, բոլոր անգամներում էլ, եղել էր «օրուայ մի կտոր հաց», իսկ քաղաքացին հաշմանդամ էր, ունէր չորս (մէկը՝ վատառողջ) երեխայ, որդին գտնւում էր ժամկէտային զինուորական ծառայութեան մէջ, եւ այս ընտանիքը, փաստացի, պայքարում էր սովամահ չլինելու համար: Մինչեւ վերջին դէպքը, դատարանը, կնոջը մեղաւոր ճանաչելով, դատապարտել էր ազատազրկման, սակայն պատիժը պայմանականօրէն չէր կիրառւել, այլ նշանակուել էր փորձաշրջան: Սակայն այս վերջին դէպքով՝ ամբաստանեալին սպառնում էր իրական ազատազրկում: Ուստի, ամբաստանեալի իրաւապաշտպանը պնդում էր, թէ «...Վճռաբեկ դատարանը որոշում կայացնելիս պէտք է հաշուի առնի, որ

³⁰ Сѣу, Аристотель, Метафизика, сочинения в четырех томах, т. 1, Москва, «Мысль», 1976, էջ 127:

³¹ Գէորգեան Յ. Ա., Բաղդասարեան Վ. Խ., Տրամաբանութիւն, Երեւան, Էդիթ Պրինտ, 2015, էջ 224:

Յասմիրկ Սարգսեանի ընտանիքում ծայրայեղ անհրաժեշտութեան վիճակն առաջացել է պետութեան կողմից իր պարտաւորութիւնները չկատարելու հետեւանքով»³²:

Այսպէս, կասկածի ենթակայ չէ, որ գողութիւնը պատժելի ու պարսաւելի է՝ ե՛ւ իրաւական, ե՛ւ բարոյական առումներով: Սակայն ակնյայտ է նաեւ, որ վերը նկարագրուած դէպքում, քաղաքացուն պատժելը կը լինի անարդար: Եւ պատահական չէ, որ «Մօտ 40 հասարակական կազմակերպութիւններ, անհատներ, լրագրողներ, 2 պատգամաւորներ՝ Լենա Նազարեանն ու Հայկ Կոնջորեանը եւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի պաշտօնակատարի տեղակալ Զարուհի Բաթոյեանն իրենց հերթին միջնորդագրեր են ներկայացրել՝ Յասմիրկ Սարգսեանին ներում շնորհելու խնդրանքով»³³:

Այս ամբաստանեալին, օրէնքի տարրին համապատասխան, դատապարտելը եւ պատժելը կը դիտուի ու կ'որակուի՝ արդար: Այն կը լինի նաեւ լեգիտիմ, հակառակ դէպքում՝ բոլոր յանցագործներն էլ կարող են շատ ծանրակշիռ պատճառաբանութիւններ ունենալ: Սակայն այս իրողութիւնը՝ որպէս արդար որակող դատողութիւնը կը լինի ճշմարտութեան հակոտնեայ, որը տրամաբանական նոյնութեան օրէնքի խախտման միջոցով երկու հակադիր իրողութիւններ նոյնացնում են միեւնոյն նշանակութեան՝ «արդարութիւն» հասկացութեամբ:

Հարցը, ինչպէս արդէն վերը նկատել ենք, չի սահմանափակուում մասնաւոր դէպքերով: Ծշմարտութեան հակոտնեայի այս տեսակը առկայ է նաեւ Մարդու իրաւունքներ հայեցակարգում եւ դրա նկատմամբ: Ալեն դէ Բենուան պնդում է, թէ «Մարդու իրաւունքների գաղափարախօսութիւնը, որը տեսականօրէն հիմնուած է հանդուրժողականութեան սկզբունքի վրայ, իրենում ներառում է ... ծայրայեղ անհանդուրժողականութիւն... Իրաւունքի հռչակագրերը ոչ այնքան սիրոյ հռչակագրեր են, որքան պատերազմի»³⁴: Ֆրանսիացի իրաւաբան-փիլիսոփան համակողմանի քննադատութեան է ենթարկում Մարդու իրաւունքների հայեցակարգը՝ դրանում, ի թիւս այլնի, մատնանշելով մի շարք հակասութիւններ եւ պարադոքսներ: Բենուան, օրինակ, ցուցադրում է յղութեան արհեստական ընդհատման հետ կապուած մի պարադոքս. «Եթէ համարենք, որ սաղմը դեռեւս մարդ չէ, ապա հասկանալի չէ, թէ ինչո՞ւ է հարկաւոր արգելել դրա նկատմամբ գիտափորձեր կատարելը: Իսկ եթէ համարենք, որ այն մարդ է, ապա հասկանալի չէ, թէ ինչպէ՞ս կարելի է արդարացնել արհեստական վիժեցումը»³⁵: Ալեն դէ Բենուան հաստատում է, որ Մարդու իրաւունքների գաղափարախօսութիւնը պահանջում է՝ յարգել մարդու արժանապատուութիւնը, իսկ «Մարդու արժանապատուութիւնը յարգել՝ նշանակում է յարգել բարոյական այն օրէնքը, որը կրում է նա»³⁶: Սակայն «Իրաւունքների գաղափարախօսութիւնը մարդկութեանը ենթադրում է եզակիական՝ ե՛ւ փաստացի, ե՛ւ իտէալում, այսինքն՝ ե՛ւ որպէս կեցութիւն, ե՛ւ որպէս պարտադրուածութիւն՝ ինչ-որ մի պոտենցեալ ճշմարտութեան ձեւում, որը լիովին արդարացնում է իրեն, եւ որը կը ներկայանայ մեզ միայն այն դէպքում, երբ լինի իրականացած»³⁷: Ուստի, պնդում է քննադատը, որ Մարդու իրաւունքների հայեցակարգը, «Փորձելով աշխարհի բոլոր մարդկանց պարտադրել բարոյականութեան մասնաւոր նորմ, փորձում է վերականգնել Արեւմուտքի մաքուր

³² Epress.am, Գողութիւնը՝ ծայրայեղ անհրաժեշտութիւն. որտեղ է թեւացել պետութիւնը դատապարտուած կնոջ գործում, e/<https://epress.am/2018/09/18/Գողութիւնը-ծայրահեղ-անհրաժեշտութիւն.html>

³³ Նոյն տեղում:

³⁴ Ален де Бенуа, По ту сторону прав человека В защиту свобод, Ион, Москва, 2015, с. 10.

³⁵ Նոյն տեղում, էջ 57:

³⁶ Նոյն տեղում, էջ 47:

³⁷ Նոյն տեղում, էջ 28:

խիղճը, որը թույլ կը տայ իրեն՝ կրկին ներկայանալ նմանակելի նմոյշի տեսքով եւ նրանց, ովքեր չեն ցանկանում իրեն հետեւել, մերկացնել՝ իբրեւ «բարբարոսների»³⁸: «Այսու՝ եթէ Մարդու իրաւունքը, նոյնիսկ, վերաբերում էլ է իրաւունքի ոլորտին, ապա այն, արդէն այս ձեւով, ոչ մի ընդհանրութիւն չունի այն բանի հետ, ինչ հասկացում էր «իրաւունք»-ի ներքոյ՝ այն ժամանակ, երբ դա հիմնադրուել է»: Հետեւաբար՝ «...հարցը այն է, թէ ինչո՞ւ է հարկաւոր՝ աւանդոյթների արգելումը...»³⁹:

Ալեն դէ Բենուան առաջարկում է ինչ-ինչ լուծումներ՝ փոփոխութիւնների եւ այլ միջոցառումների ձեւով: Սակայն, պահոյս, մեզ հետաքրքրում է միայն այն, որ Մարդու իրաւունքների հայեցակարգում առկայ թերութիւնները նկատել են, նաեւ, հէնց հեղինակները: Բայցեւայնպէս՝ այն լեգիտիմութիւն է ստացել եւ համաշխարհային մեծ հեղինակութիւն է վայելում:

Այսպիսով, ինչպէս վերը բերուած մասնաւոր դէպքի օրինակով, այնպէս էլ այս խիստ ընդհանրականի պարագայում, հաստատում է միեւնոյն հակոտնեայի առկայութեան փաստը: Այն է՝ ինքն իր մէջ մի շարք հակասութիւններ պարունակող հայեցակարգի կիրառումը արդար չէ: Սակայն քանի որ այն ստացել է լեգիտիմութիւն, եւ դրան համապատասխան գործելը, յաճախ, պարտադիր է, ուստի դրան հակադրուելը նոյնպէս արդար չէ: Այսինքն՝ առկայ է նոյնութեան օրէնքի խախտում, եւ յստակ գիտակցում է խախտման առկայութիւնը, սակայն շրջանառուող հայեցակարգը լեգիտիմ է, շատ դէպքերում էլ՝ գերակայ նորմատիւ ակտ:

Վերջապէս՝ այս երեւոյթը առկայ է փիլիսոփայութեան մէջ՝ ընդհանրապէս, իսկ քաղաքական փիլիսոփայութեան մէջ՝ մասնաւորապէս: Պլատոնի հիմնարար՝ «Պետութիւն» աշխատութիւնը նպատակադրում է՝ «կատարեալ» պետութեան կառուցարկումը, իսկ կատարեալ պետութեան էական ու գլխաւոր յատկանիշը, ըստ հեղինակի, արդարութիւնն է⁴⁰: Այս «կատարեալ» պետութեան այդպիսին լինելու համար, ի թիւս այլնի, Սոկրատեսը գրաքննութեան ինստիտուտի մի նմոյշ է մտայղանում, որի պահանջներից էր՝ երբեք չպատմել երիտասարդներին, թէ «... ինչպէս են աստուածները պատերազմում աստուածների դէմ, դաւեր նիւթում ու կռում»: Սոկրատեսը, «գրաքննութեանը» վերաբերող այս խօսքի ընթացքում, տալիս է հռետորական մի հարց՝ ասելով. «Զէ՞ որ դա չէ ճշմարտութիւնը»: Առաջին հայեացքից, կարելի է կարծել, որ Սոկրատեսը զբաղւում է թէոդիցիայով եւ, գտնելով, թէ աստուածների վերաբերեալ առկայ է ապատեղականութիւն՝ «հերձուածողութիւն», փորձում է «լուսաւորել» լսարանին: Սակայն նրա նպատակն այլ է. Սոկրատեսը պահանջում է՝ «խմբագրել» աստուածների մասին պատումները, որոնք կիրառուելու են պատանիներին՝ կատարեալ պետութեան ապագայ պահապաններին դաստիարակելու համար: Իսկ այդ խմբագրուած նիւթը պէտք է դառնայ մի գործիք, որն օգտակար ու նպատակաշարժար է՝ երիտասարդներին «սրտոտ» եւ իմաստութիւնը սիրող դարձնելու համար⁴¹:

Այսպիսով, վերը մէջբերուած, Սոկրատեսի կիրառած «ճշմարտութիւն» հասկացութիւնը խիստ իւրօրինակ նշանակութիւն ունի: Սոկրատեսն ի նկատի չունի մտքի համապատասխանութեան՝ զուտ տեսական մտակառոյցը, այլ մի այնպիսի, իւրայատուկ «ճշմարտութիւն», որը նոյնացում է ազնւութեան, արդարութեան, բարու, եւ

³⁸ Նոյն տեղում, էջ 10:

³⁹ Նոյն տեղում, էջ 72:

⁴⁰ Պլատոն, Պետութիւն, երկեր չորս հատորով, հատոր IV, Երեւան, «Սարգիս Խաչենց. Պրինքիպն. Ամսարես», 2017, էջ 159:

⁴¹ Տե՛ս, նոյն տեղում, էջ 76:

այլ առաքինությունների հետ՝ հիմնուելով կատարեալ պետութեանն ուղղուած գործնական նպատակայարմարութեան վրայ: Ասուածը հիմնաւորում են Սոկրատեսի այն պնդումները, ըստ որոնց, «...սուտն աստուածների համար անօգուտ է, իսկ մարդկանց օգտակար է որպէս դեղամիջոց...»⁴²: Պլատոնի (Սոկրատեսի⁴³) համոզմամբ՝ սուտը ցանկալի է նաեւ այն դէպքում (չհաշուած այլ դէպքերը), երբ հանդիսանում է՝ իբրեւ «...զսպող օգտակար միջոց»⁴³: Ուստի, եզրակացնում է Սոկրատեսը, «Մենք կը ստիպենք բանաստեղծներին հաստատել, որ կա՛մ այդ գործերը կատարել են ուրիշները, կա՛մ էլ, եթէ նրանք են կատարել, ապա աստուածների որդիներ չեն: ...Թոյլ չենք տա նաեւ համոզել պատանիներին, իբր ... հերոսները մարդկանցից աւելի լաւ չեն: ... Ահա թէ ինչու մենք պիտի դադարենք պատմել այդ առասպելները, որպէսզի դրանք չծնեն մեր պատանիների մէջ արատաւոր հակումներ»⁴⁴: Սոկրատեսը պնդում է, որ «... աստուած, իհարկէ, պարզ եւ ճշմարիտ է ինչպէս խօսքով, այնպէս էլ գործով, եւ ո՛չ ինքն է փոխակերպում, ո՛չ էլ խաբում է ուրիշներին՝ ո՛չ առերեւոյթ, ո՛չ խօսքով, ո՛չ նշաններ առաքելով, ո՛չ էլ երազում»⁴⁵: Սակայն նրան չի հետաքրքրում աստուածների՝ իրօք այսպիսին լինելը: Նա ցոյց է տալիս, թէ ինչպիսի՞ն պէտք է լինի աստուածներին վերաբերող պատումը, որպէսզի ծառայի կատարեալ պետութեան ստեղծմանն ու ամրապնդմանը: Սոկրատեսը, կանխատեսելով անցանկալի դէպքերը՝ յաւելում է նաեւ, որ եթէ, ամէն դէպքում, պահապանները լսեն աստուածներին չվայելող պատումներ, ապա «...պէտք է կա՛մ ընդհանրապէս չընդունել, որ դրանք աստծոյ գործերն են, կա՛մ էլ՝ եթէ աստծոյ գործերն են, գտնել իմաստը, որը հիմայ փնտռում ենք, եւ ասել, որ աստուած գործում է միայն արդարն ու բարին, իսկ նրանց, որոնց պատժում է, այդ կերպ օգուտ է բերում»⁴⁶: Որովհետեւ այս ամէնի նպատակն այն է, որ պահապանները «...լինեն աստուածավախ եւ աստուածային, որքան որ թոյլ է տալիս մարդկային բնութիւնը»⁴⁷: Այստեղից՝ Սոկրատեսի համար թոյլատրելի է ու նոյնիսկ պարտադիր՝ ոչ թէ իրականութեանը համապատասխանող միտք հաղորդելը, այլ «փնտռել», «գտնել» եւ «ասել» այն, ինչ կը համապատասխանի իր նպատակադրութեանը՝ դաստիարակել ոգեշնչուած պահապաններ, որոնց ոգեշնչման աղբիւր-պատումները կարող են նաեւ կեղծ լինել: Ըստ Սոկրատեսի «...ճշմարտութեան սահմանումը ճիշդ խօսելը ... չէ»⁴⁸. այն արդարութիւն գործելուն վերաբերող միտք է⁴⁹, իսկ «...արդարութիւնը մարդու առաքինութիւն...»⁵⁰ է, եւ «...արդարը բարի մարդ է»⁵¹:

Վերը շարադրուածից երեւում է, որ Պլատոնը, առնուազն յաճախ, նոյնացնում է մի շարք առաքինութիւններ՝ երբեմն դրանք վերառելով ճշմարտութիւն հասկացութեան մէջ: Փաստօրէն, Պլատոնի «ճշմարտութեան» ըմբռնման իւրայատուկութիւնը, կախուած նպատակից, թոյլ է տալիս՝ լեզուի մասին «ոչ-ճշմարիտ»-ը՝ որպէս ճշմարիտ: Պլատոնը դէմ չէր (այլ ջատագովում է), որ ճշմարտութեանը հակասող որոշ իրողութիւններ համարուեն ճշմարիտ՝ յանուն ինչ-որ այլ, աւելի բարձր «ճշմարտութեան»: Այսինքն՝ Պլատոնի քաղաքական փիլիսոփայութեան համակարգում առկայ է

⁴² Նոյն տեղում, էջ 94:

⁴³ Նոյն տեղում, էջ 87:

⁴⁴ Նոյն տեղում, էջ 98:

⁴⁵ Նոյն տեղում, էջ 87:

⁴⁶ Նոյն տեղում, էջ 83:

⁴⁷ Նոյն տեղում, էջ 88:

⁴⁸ Նոյն տեղում, էջ 12:

⁴⁹ Տե՛ս, նոյն տեղում, էջ 13:

⁵⁰ Նոյն տեղում, էջ 19:

⁵¹ Նոյն տեղում, էջ 20:

եւ կարեւոր գործառնութիւն ունի, նոյնութեան օրէնքի խախտման միջոցով առաջացող, ճշմարտութեան հակոտնեայի տեսակը:

Եւ Պլատոնը, այս առումով, միակը չէ: Յետ-պոզիտիւզմի հիմնադիր Կարլ Փոփերը իր «Բաց հասարակութիւնը եւ դրա թշնամիները» հիմնարար աշխատութեան մէջ խիստ քննադատութեան է ենթարկում մի շարք մտածողների, սակայն նրա գլխաւոր թիրախներն են՝ Պլատոնը, Հեգելը եւ Մարքսը: Փոփերի (եւ ոչ միայն Փոփերի) քննադատութիւններից շատերը կարող էին այստեղ ներառուած լինել՝ որպէս ճշմարտութեան հակոտնեայի ցուցադրման օրինակներ, սակայն մենք կ'անդրադառնանք միայն մէկին, որը վերաբերում է Գ. Վ. Ֆ. Հեգելին. հակոտնեայի ցուցադրութեան մի օրինակ, որը գրեթէ հէնց այդպիսին է որակւում Փոփերի կողմից:

Կ. Փոփերը նկարագրում է Հեգելի փիլիսոփայութիւնը՝ համաձայնելով, որ «... նոյնութեան (իդէնտիկութեան) փիլիսոփայութիւնը...» հեգելականութեան սիւններից մէկն է⁵²: Հեգելեան համակարգի այս հատուածում, ինչպէս եւ՝ դիալեկտիկայում, առաջնորդող գաղափարը հերակլիտեսեան «հակադրութիւնների նոյնութեան ուսմունքն է»⁵³: Ըստ Փոփերի, այս ուսմունքը մեծ հնարաւորութիւն է ստեղծում խորամանկելու համար: Իսկ Հեգելի ողջ խորամանկութիւնը «ծառայում է՝ արդարացնելու համար գոյութիւն ունեցող կարգը: Սրա գլխաւոր հետեւութիւնը բարոյական եւ իրաւական պոզիտիւզմ է, մի ուսմունք, ըստ որի, այն, ինչ որ՝ է, լաւ է, որովհետեւ չեն կարող լինել այլ չափանիշներ, բացի գոյութիւն ունեցող չափանիշները. սա այն ուսմունքն է, ըստ որի, հզօրը ճիշդ է»⁵⁴: Այս ուսմունքը, որն ըստ Կ. Փոփերի, կոչուած է արդարացնելու «Ֆրեդերիկ Ուիլիամի բացարձակ մենիշխանութիւնը»⁵⁵, հնարաւոր է բղխեցնել, վերը նշած, խորամանկութիւնից: Հեգելը նոյնացրել է Իտէալը Իրականի հետ՝ մինչ այդ նոյնացնելով Իտէան Բանականութեան հետ: Այս երկու «... հաւասարացումները կամ, աւելի շուտ, երկիմաստութիւնները միաձուլուելով»՝ ի յայտ է բերւում «Իրականը=Բանականին. ու սա թոյլ է տալիս Հեգելին՝ պնդել, որ այն ամէնն, ինչ բանական է, պէտք է իրական լինի, եւ այն ամէնն, ինչ իրական է, պէտք է բանական լինի, այսու՝ իրականութեան զարգացումը նոյնն է, ինչ բանականութեանը: Եւ որովհետեւ չի կարող գոյութեան մէջ լինել աւելի բարձր չափանիշ, քան Բանականութեան եւ Գաղափարի ամենավերջին զարգացումները, ուստի այն ամէնը, ինչ ներկայում իրական է կամ ակտուալ, գոյում է անհրաժեշտաբար եւ պէտք է լինի ինչպէս բանական, այնպէս էլ՝ լաւը»⁵⁶:

Քննադատը փաստարկում է, որ ըստ Հեգելի, գործնականում, այս «լաւը» հէնց Պրուսիականն է: Փոփերը, համաձայնելով Ա. Շոպենհաուերի հետ, գտնում է, որ նոյնութեան փիլիսոփայութիւնից, որպէս՝ «ենթարտադրանք», ի յայտ է գալիս նաեւ հեգելեան ճշմարտութեան հայեցակարգը, ըստ որի, «...այն, ինչ բանական է, անշուշտ, պէտք է համապատասխանի իրականութեանը, ուստի եւ՝ լինի ճշմարիտ...»:⁵⁷ Ըշմարտութեան զարգացումը տեղի ունի հէնց այնպէս, ինչպէս բանականութեան զարգացումը: Եւ այն, ինչ, տուեալ փուլում, համընկնում է բանականութեանը, ճշմարիտ է: Այս դատողութիւնների համադրութիւնը, եւ սրանց համադրութիւնը Հեգելի գործնական քաղաքականութեան հետ՝ Փոփերին թոյլ է տալիս պնդել, որ Հեգելի «...

⁵² Տե՛ս, Popper K. R., The open Society and Its Enemies, Princeton, «Princeton University Press», 2013, էջ 224:

⁵³ Նոյն տեղում:

⁵⁴ Նոյն տեղում:

⁵⁵ Նոյն տեղում:

⁵⁶ Նոյն տեղում, էջ 225:

⁵⁷ Նոյն տեղում:

ողջ ջանադրությունը ջատագովական նպատակ է հետապնդում»⁵⁸: Եւ այդ ջատագովությունը փաստարկում է, թէ «...այն ամէնը, ինչ ճշգրիտ է թուում լրամշակուած խելքին, պէտք է ճշմարիտ լինի»⁵⁹:

Այսպէս, Կարլ Փոփերը ցոյց է տալիս, որ անհրաժեշտական (նեցսիտարիստական) ճշմարտութիւնը կամ արդարութիւնը չի կարող լինել ճշմարտութիւն կամ արդարութիւն: Այսինքն՝ եթէ ինչ-որ բան այնպէս է, ինչպէս որ՝ է, դեռ չի նշանակում, որ այդպէս պէտք է լինի: Այլ հարց է, որ եղածից էլ չի բղխում, թէ ինչպէս պէտք է լինի, որ՝ չէ, սակայն այն, որ եղածը, բացի իր լինելիութիւնը՝ առանց այլ փաստարկի, լեզիտիմանում է՝ որպէս ճշմարիտ կամ արդար, ըստ Փոփերի, Հեգելի փիլիսոփայութեան յենասիւններից է: Հեգելեան փիլիսոփայութեան մէջ նոյնանում են արդարն ու այն անյայտը, որն անուանում է արդար, կամ ճշմարիտն ու այն անյայտը, որն անուանում է ճշմարիտ: Այսինքն՝ Կարլ Փոփերի պնդմամբ, նոյնութեան փիլիսոփայութեան մէջ խախտում է տրամաբանական նոյնութեան օրէնքը՝ միմեանց հակասող հայեցակէտերին միեւնոյն յատկանիշը վերագրելու ձեւով:

Վերջապէս, սոյն վերլուծութեամբ պարզաբանուող գաղափարը լաւագոյնս արտայայտուած է Ու. Չերչիլի մի հանրայայտ յայտարարութեան կապակցութեամբ: Ըստ որի, «...ժողովրդավարութիւնը կառավարման վատագոյն ձեւն է՝ չհաշուած այն մնացած ձեւերը, որոնք ժամանակ առ ժամանակ փորձուել են»: Չերչիլի պնդումից բխում է, որ ժողովրդավարութիւնը լեզիտիմացել է, որովհետեւ, կառավարման միւս ձեւերից, աւելի մօտ է արդարութեանը, ճշմարտութեանը եւ լաւին, սակայն սա դեռ չի նշանակում, որ այն արդար է, ճշմարիտ կամ լաւ: Ուստի՝ ժողովրդավարութիւնը, որպէս՝ «արդարութիւն» սեռային հասկացութեան ծաւալի մէջ ներառուող մասնաւոր տեսակ, ճշմարտութեան հակոտնեայի մի նմոյշ է⁶⁰:

Վստահաբար կարելի է պնդել, ճշմարտութեան հակոտնեան զգալիօրէն նման է, այսպէս կոչուած, **ճշմարտամօտութեանը**: Մի հայեցակարգ, որը ճշմարտութեան ներկայիս ճգնաժամային իրադրութեան պայմաններում, կարելի է համարել ընդունելի՝ համաձայն Կ. Փոփերի առաջարկի. ««Գուցէ ես սխալ եմ, եւ գուցէ դու ճիշդ ես, ու ջանքի առկայութեամբ, մենք կարող ենք մօտենալ ճշմարտութեանը (ընդգծումը մերն է - Գ. Յ.)»»⁶¹: Սոյն վերլուծութիւնից կարելի է եզրակացնել, որ իրաւա-քաղաքական խօսույթում ցանկացած ճշմարտամօտութիւն կիրառելի է՝ որպէս սկզբունք, սակայն միշտ պէտք է ի նկատի ունենալ, որ ճշմարտամօտութիւնը, որքան էլ մօտ լինի ճշմարտութեանը, դեռ ճշմարտութիւն չէ: Աւելին՝ որքան մօտ, այնքան աւելի վտանգաւոր:

⁵⁸ Նոյն տեղում:

⁵⁹ Նոյն տեղում:

⁶⁰ Դեմոկրատիայի՝ ճշմարտութեան հակոտնեայ լինելու վերաբերեալ, առաւել մանրամասն, տե՛ս, տողերիս հեղինակի յօդուածը, **Յակոբեան Գ.**, Դեմոկրատիայի փիլիսոփայական բնագիտութիւն. որոշ հիմնախնդիրներ եւ դրանց հնարաւոր լուծումները, «Վէմ» համահայկական հանդէս, ԺԱ (Ժէ) տարի, 2019, թիւ 2 (66), Ապրիլ-Յունիս, էջ 9-24:

⁶¹ Popper K. R., The open Society and Its Enemies, Princeton, «Princeton University Press», 2013, p. 431.

ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ (Հիմնադրութեան 90-ամեակին առթիւ)

Սրբոց Յակոբեանց տպարանի հիմնումէն մօտ մէկ դար անց, Երուսաղէմի Հայոց Վանքին մէջ գրական եւ մտաւորական կեանքը իր բարձրունքի վրայ կը գտնուէր՝ շնորհիւ ժամանակի ականաւոր գրասէր եւ իմաստասէր Եղիշէ Պատրիարք Դուրեանի, որու ներկայութիւնը միայն բաւական էր միաբանութեան շարքերուն մէջ ուսման հանդէպ սէր եւ հետաքրքրութիւն առաջացնելու համար:

Դուրեան մեծանուն Պատրիարքի քահանայական յիսնամեայ յոբելեանը նշելու առթիւ յանձնախումբ մը կազմուած էր իր աշակերտներէն եւ բարեկամներէն բաղկացած, որոնց փափաքն էր արժանի յոբելինական հանդէսով մը յարգանք ընծայելու եւ պանծացնելու Մեծ Ուսուցչին անունը եւ վաստակը: Յանձնախումբի անդամները յոբելեարի յիշատակը լաւագոյնս յաւերժացնելու համար մտայղացած էին նոր եւ փառաւոր Մատենադարան մը ունենալու գաղափարը, որ պիտի կրէր Դուրեան Մատենադարան անունը¹: Այս ցանկութիւնը ի կեանս կոչելու եւ հայկական Սփիւռքը սոյն նպատակով զօրաշարժելու համար ամենուր նուիրատուութեան յորդորով նամակներ կը ղրկուին, ինչ որ շատ արագ արձագանքի կ'արժանանայ աշխարհի տարբեր երկիրներու մէջ բնակող յայտնի եւ մեծատուն հայերու կողմէ: Շուտով մօտ 3,000 անգլիական ոսկի կը հաւաքուի, որը թէեւ մեծ, բայց անբաւարար գումար մըն էր այս ծրագիրը իրագործելու համար: Սակայն երբ նախաձեռնութեան մասին կը տեղեկանայ մեծահամբաւ եւ ազնուասիրտ Գալուստ Կիւլպէնկեանը, մեծահոգութեամբ յանձն կ'առնէ հոգալու շինութեան ամբողջ ծախքը, ի յիշատակ իր ծնողներուն՝ Սարգսի եւ Տիրուհւոյ: Իսկ հաւաքուած գումարը կ'որոշուի տրամադրել նոր գիրքերու տպագրական նպատակներու համար:

Եղիշէ Դուրեան պատրիարք ազդուելով բարերարի այս ազնուամիտ մեծահոգութենէն իր անուանը կառուցուելիք Մատենադարանի անունը կ'որոշէ փոխել Կիւլպէնկեան գերդաստանի անունով եւ 1929 թ.-ի Հոկտեմբերի 26-ին կը կատարէ հիմնարկէքի օրհնութեան կարգը, որու շինութեան ընթացքին դժբախտաբար չի կրնար հետեւիլ՝ անողոք հիւանդութեան եւ վաղահաս մահուան պատճառով: Պատրիարք սրբազանի մահուանէ վերջ՝ անոր հոգեսուն աշակերտներու անմիջական հսկողութեան եւ հոգատարութեան ներքոյ կառուցման աշխատանքները կը շարունակուին, եւ 1932 թ.-ին Սրբոց Թարգմանչաց տօնի օրը կը կատարուի անոր հանդիսաւոր բացումը:

Թէպէտեւ Երուսաղէմի վանքը հոյակերտ Մատենադարանով մը օժտելու եւ հարստացնելու ոգեշնչողը շարժանացաւ տեսնելու անոր բացումը, եւ Մատենադարանն ալ յետագային իր համեստութեան պատճառով չկրեց իր անունը, բայց անոր յիշատակը անբաժանելիօրէն կապուած է այս հաստատութեան հիմնադրութեան պատմութեան

¹ «Սիոն» ամսագիր, Նոյեմբեր, 1932, էջ 355:

հետ, որու անջնջելի կնիքը մարմարեայ ցուցատախտակով մը զետեղուած է Մատենադարանի ճակտին, հետեւեալ արձանագրութեամբ.

Գալուստ Կիւպէնկեան կառուցել տուաւ սոյն Մատենադարանը Առաքելական Աթոռին համար, իր ծնողներուն՝ Սարգսի եւ Տիրուհիի ամսեռ յիշատակին. ինչպէս նաեւ ի պատիւ Նորին Ամենապատուութիւն՝ Տ. Եղիշէ Դուրեան Արքեպիսկոպոսին. եւ Հայոց Պատրիարքին Երուսաղէմի, 1929:

Մատենադարանի առաջին եւ արժէքաւոր գիրքեր կազմուած էին Դուրեան Պատրիարքի անձնական գրադարանի հաւաքածոյէն եւ վանքի երեք փոքրիկ գրադարաններու գիրքերէն, որոնց թիւը մօտ 25.000 էր²: Այս գիրքերու կէսէն աւելին հայերէն լեզուով էին, իսկ մնացեալը Եւրոպական այլ լեզուներով: Մատենադարանի բացումը մեծ հետաքրքրութիւն կ'առաջացնէ Սփիւռքի եւ յատկապէս՝ Միջին Արեւելքի հայակական գաղութներուն մէջ, որովհետեւ իր մեծութեամբ եւ արժէքաւոր գիրքերու քանակով ան տարածաշրջանին միակն էր: Շուտով տարբեր կողմերէն կարելորդ գիրքեր կը ղրկուին Մատենադարանին՝ որպէս նուէր, իսկ այս գործընթացին յատկապէս կը նպաստէին Սրբոց Յակոբեանց միաբան հոգեւորականները, որոցմէ ամէն մին ճամբորդութեան ատեն կը ներկայանար որպէս այս հրաշալի հաստատութեան դեսպան մը եւ վերադարձին իրենց հետ կը բերէին տեղի հայկական գաղութի նշանաւոր եւ մտաւորական անձանց նուիրած գիրքերը: Եւ այս բոլոր նուիրատուութիւնները յատուկ շնորհակալութեամբ տարիներով նշուած են «Սիոն» պաշտօնաթերթին մէջ: Այս առթիւ կարելորդ է նշել նաեւ, որ Գալուստ Կիւպէնկեան, Մատենադարանի հիմնադրման օրերէն սկսեալ՝ 300 Պաղեստինեան ոսկիի օժանդակութիւն յատկացուցած էր Մատենադարանը նոր գիրքերով օժտելու, իսկ յետագային այդ գումարը կը կրկնապատկուէր: Սոյն նպատակին կը ծառայէր նաեւ այն 3000 հանգանակուած անգլիական ոսկին, որը նախապէս ծրագրուած էր Մատենադարանի շինութեան համար, իսկ մեծ բարերարին կողմէ շինութեան ամբողջ ծախքը ստանձնելէ վերջ, ժողովրդական այլ հանգանակուած գումարներու հետ միասին կը կառուցուի Դուրեանաշէն շահութաբեր շէնքը³, որու հասոյթով յետագային պիտի հոգացուէին նոր օգտակար եւ կարելորդ գիրքերու հրատարակութիւններ, եւ երանաշնորհ հոգելոյս պատրիարքի անունով ալ հրատարակութիւններու այդ շարքը պիտի կոչուէր «Դուրեան մատենաշար»:

Նոր Մատենադարանի շէնքը իր բոլոր յարմարութիւններով լիովին կը համապատասխանէր Եւրոպական այլ գրադարաններու չափանիշներուն, եւ նոյնիսկ անոր գիրքերու դարակները ապսպրուած էին Ամբրիկայէն՝ յար եւ նման Քարմէկիի⁴ գրադարաններուն մէջ գործածուածներուն: Թէեւ շէնքին կառույցը արդէն աւարտած էր 1931 թ.-ի Յուլիս ամսուն, բայց անոր բացումը կը կատարուի 1932 թ.-ի Հոկտեմբերին՝ Սրբոց Թարգմանչաց տօնին օրը, նուիրագործելով այդ օրը մեր գիր եւ գրականութեան հիմնադրին եւ առաջին ռահվիրաներուն տօնին խորհուրդով: Բացման արարողութեանը կը նախագահէր Երանաշնորհ Թորգոմ Պատրիարք Գուշակեան, որ անձնապէս մեծ ներդրում ունեցած էր Մատենադարանի կառուցման գործին մէջ՝ Եւրոպա պատուիրակ գտնուած միջոցին:

Ինչպէս յիշեցինք Մատենադարանը բացուեցաւ մօտ քսանհինգ հազար գիրքերով: Այդ գիրքերու կէսէն աւելին՝ տասն եւ չորս հազարը, կը պատկանէր Եղիշէ Դուր-

² Զամբերթէն Ա., Երուսաղէմ եւ Կիւպէնկեաններ, էջ 85:

³ «Սիոն» ամսագիր, Նոյեմբեր, 1932, էջ 356:

⁴ 20-րդ դարուն՝ ամերիկացի մեծահարուստ Անդրէաս Քարմէկիի նուիրատուութեամբ կառուցուած աշխարհի տարբեր երկրներու մէջ աւելի քան 3000 գրադարաններ, յայտնի են որպէս Քարմէկի գրադարաններ:

եան Պատրիարքի անձնական հաւաքածոյին, որոնք ընտրուած եւ հաւաքուած էին յատուկ բժախնդրութեամբ՝ մեծ տեղ եւ նշանակութիւն տալով այդ գիրքերու շինիչ բովանդակութեան: Յետագայ տասնամեակներուն՝ նուիրատուութիւններէն զատ, Դուրեան Պատրիարքի անձնական հաւաքածոյի վրայ բարդուեցան այլ նշանաւոր հոգեւորականներու գիրքերու հաւաքածոներ եւս, ինչպէս օրինակ՝ Թորգոմ Պատրիարք Գուշակեանի, Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի, Թորգոմ Պատրիարք Մանուկեանի, Նորայր Արք. Պօղարեանի եւ կարգ մը այլ հոգեւորականներու եւ անհատներու անձնական գրադարանի հաւաքածոներ: Այսօր գրադարանը ունի աւելի քան 120,000 գիրք:

Մատենադարանի գիրքերը բաժնուած են երեք հիմնական խումբերու: Առաջին եւ արժէքաւոր խումբը կը կազմեն հայերէն հնատիպ գիրքերը, որոնք տպագրուած են 1512-1900 թթ. Եւրոպայի, Միջին Արեւելքի, Մատրասի, Կալկաթայի, Նոր Զուլայի, Երուսաղէմի եւ էջմիածնի հայկական տպարաններուն մէջ: Այս գիրքերու առաջին շարքին վրայ կը գտնուին 1512 թ.-ին Հռոմի մէջ Յակոբ Մեղապարտի կողմէ տպուած առաջին հայկական գիրքը՝ «Պարզատումար»-ը, եւ 1666 թ.-ին Ամսթերտամի մէջ Ոսկան Վրդ. Երեւանցիի կողմէ տպուած առաջին տպագիր «Աստուածաշունչ» մատենան:

Երկրորդ կարեւոր հաւաքածոն հայկական պարբերաթերթերն են, որոնք իրենց մեծութեամբ երրորդն են Հայաստանի ազգային գրադարանի եւ Վիեննայի հաւաքածոներէն վերջ: Հաւաքածոն հարուստ եւ արժէքաւոր տեղեկութիւն կը պարունակէ Օսմանեան կայսրութեան, Յարական Ռուսաստանի եւ տարբեր երկիրներ բնակող հայերու ընկերային եւ քաղաքական կեանքի մասին: Իսկ որոշ պարբերականներ ալ Օսմանեան կայսրութեան մէջ տպագրուած են հայատառ թրքերէնով՝ հայերէն չգիտցող կամ հայերէնին լաւ չտիրապետող հայերու համար: Թերթերու շարքին մէջ իրենց կարեւոր տեղը կը զբաղեցնեն առաջին հայկական պարբերականը՝ «Ազդարար»-ը, տպուած 1794 թ.-ին, եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Սիոն» պաշտօնաթերթը, հիմնադրուած 1866 թ.-ին:

Եւ վերջապէս, երրորդ մեծագոյն եւ հիմնական հաւաքածոն բաղկացած է երկու ընդհանուր մասերէ, հայերէն եւ օտար գրականութենէ: Թէեւ այս խումբին պատկանող գիրքերը բազմաբովանդակ են, բայց հիմնական թեմատիկական ուղղութիւնները երեք են, հայագիտական, կրօնական եւ պատմական: Օտար գրականութեան որոշ հատուած մը յատուկ նուիրուած է ցեղասպանութեան թեմային եւ կարեւոր աղբիւրագիտական արժէք կը ներկայացնէ այս նիւթը ուսումնասիրող պատմաբաններու համար:

Շնորհիւ Կիւլպէնկեան գերդաստանի, եւ ի մասնաւորի ազնուահոգի Գալուստ Կիւլպէնկեանի՝ Մատենադարանի գոյութիւնը իր հիմնադրման օրէն մեծ բարիք եւ պարծանք մը եղած է ո՛չ միայն Սրբոց Յակոբեանց միաբանութեան, այլեւ բոլոր հայագէտներու, բանասէրներու եւ ողջ հայ հասարակութեան համար: Մատենադարանը իր բացառիկ եւ հազուագիւտ հաւաքածոներով, եւ արխիւային աղբիւրներով տարիներ շարունակ յոյժ կարեւոր կեդրոն մը եղած է եւ կը շարունակէ տակաւին ըլլալ տարասփիւռ հայութեան, ինչպէս նաեւ օտարազգի ուսումնասիրողներու համար: Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը կ'ուզենք յայտնել Կիւլպէնկեան հիմնադրամի հոգաբարձուներուն, որ երբեք Երուսաղէմի Հայոց վանքը եւ իրենց գերդաստանի անունը կրող ու յաւերժացնող յուշակոթող-մատենադարանը դուրս չեն ձգած իրենց ուշադրութենէն եւ հոգատարութենէն: Եւ շնորհիւ սոյն հիմնադրամի հովանաւորութեան՝ 2000-էն մինեւ 2007թ-ը տեւած նորոգութեան, այսօր Մատենադարանի շէնքը կը գտնուի բարեկարգ վիճակի մը մէջ, բայց ցաւօք, արդի աշխարհի քեֆնոլոժիի գլխապտոյտ առաջընթացի պատճառով դեռեւս անոր

հարուստ աղբիւրներ եւ գիրքեր հասանելի չեն համացանցի միջոցով օգտուող ուսումնասիրողներու համար, որուն իրագործումը մեզի համար առաջնահերթ է:

21-րդ դարու հիմնական նուաճումը՝ համացանցը, մարտահրաւէրներ նետած է կեանքի գրեթէ բոլոր ասպարէզներուն վրայ: Անոր առկայութիւնը աննախագէտ արագացուցած է մարդկային կեանքի բնական ընթացքը, եւ հետեւաբար նոր պայմաններ եւ պահանջներ կը թելադրէ ժամանակակից մարդուն: Գրադարանները նոյնպէս զերծ չեն մնացած համացանցի մարտահրաւէրներէն, եւ երեկուայ գրադարան այցելողն ու կարդացողը, այսօր իր սենեակին մէջ՝ համակարգիչի առջեւ նստած, համացանցէն կը գտնէ իրեն հետաքրքրող գիրքեր, որն էապէս կը նուազեցնէ գրադարան այցելողներու եւ անոր կենդանի արժէք ներկայացնող գիրքերու հետ առնչուողներու թիւը: Այսօրուայ հետազօտողներու համար գրադարանի մոտեքը ոչ թէ անոր դուռն է, այլ՝ համացանցի մէջ ներդրուած կայքէջերը: Այս գործընթացին ակնառու թերութիւններէն մին ալ այն է, որ համակարգիչը եւ համացանցը նոր սերունդին առջեւ կը բանան հետաքրքրութիւններու անսահման հորիզոններ, ինչ որ զգալիօրէն կը տկարացնէ նախկին ընթերցասէրներու կենդրոնացումը եւ սէրը՝ կենդանի ընթերցանութեան հանդէպ:

Առանց սակայն տարածուելու համացանցի առաւելութիւններն ու թերութիւնները քննարկելու շուրջ, մեր հիմնական նպատակն է ցոյց տալ այն մարտահրաւէրը, որուն առջեւ եւս Կիւլպէնկեան Մատենադարանը կեցած է:

Այսուամենայնիւ, Սիոնի բարձունքին թառած արդէն 90-ամեայ պատմութիւն ունեցող այս մտաւոր գանձարանը, որն իր մէջ ամփոփած է հատընտիր ժողովածուներու հաւաքածոյ մը, վեր է ժամանակային եւ նիւթական սահմաններէ, եւ հետեւաբար, վեր է նաեւ ժամանակի ամէն տեսակ մարտահրաւէրներու սպառնալիքէ: Ան միշտ ունի ներոյժը՝ իր շուրջ համախմբելու մտաւոր եւ հոգեւոր արժէքները գերադասող ազգին լաւագոյն զաւակները եւ զանոնք առաջնորդելու մեր Թարգմանիչ վարդապետներու եւ անոնց լուսաշաւիղ ճանապարհին հետեւած անձերու ուղիով:

ԳԷՈՐԳ ԱՔԵՂԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ



ՅՈՒՐԱԿԱՆՆԵՐ

ՄԹՆԱԶՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐ ՀԱՆՃԱՐԸ՝ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ (Ծննդեան 120-ամեակի առթիւ)

Ակսել Բակունցը գրական ասպարէզ է մտել հէքիաթի պէս՝ իր հետ բերելով զանգեզուրեան բնաշխարհի նախնական ու վայրի պատկերները, լեռներում ապրող պարզ ու անապական մարդկանց հոգու գեղեցկութիւնների ու լուռ ողբերգութիւնների պատմութիւնները: Նա առասպելի հերոսի պէս, ընդամէնը մի քանի տարուայ ընթացքում, սովորական գիւղթղթակցից դարձաւ հայ մեծ գրող, իր մեծութեան կենարար հիւթերը քաղելով հայոց բնաշխարհի գոյներից, հայոց պատմութեան ծալքերից, հայ ժողովրդի հոգեկան պատկերի խորքերից: Քչերը գիտէին, որ այդ յաջողութիւնը նախապատրաստուել էր կեանքի բովում, որ ջահել գիւղատնտեսն անցել էր դժուար ու փշոտ ճանապարհ, ապրել բուռն վերելքներ եւ դառն հիասթափութիւններ: Կեանքի ինչ-ինչ կողմերով էլ նման էր հանճարեղ Չարենցին, որից փոքր էր ընդամէնը երկու տարով, բայց հանգամանքների բերումով գրական գործը սկսում էր նրանից տասը տարի յետոյ:

Գուրգէն Մահարին իր «Ակսելեան քանդակներ»-ում նկարագրելով Բակունցին՝ գրում է. «Նա խորունկ էր ու հմայիչ, հանդարտ ու յստակ... Լիրիկ էր ոչ միայն իր գրքերում, այլեւ կեանքում: Մոլորութիւններ չունէր, եթէ չհաշուենք ծխախոտը: Խմում էր առիթից առիթ եւ հեռու էր առիթներ որոնելուց: Երբ բարձրանում էր տրամադրութիւնը, «չարութիւններ չէր անում»... Ամենամեծ «անկարգութիւնը», որ նա կարող էր թոյլ տալ, դա այն էր, որ փողոցում կը կռանար, կը վերցներ մի հողակոշտ եւ ագահաբար կը համբուրեր ասելով. «Ո՛չ մի հող այսպէս չի բուրում»...¹ Հայրենի եզերքի ու ժողովրդական տարերքի նկատմամբ այս բացառիկ սէրը նրա հոգում ծլարձակել էր դեռ մանկուց, որը յետոյ դարձաւ հզօր աշխարհագրացողութիւն՝ վարար հոսանք բերելով ստեղծագործական ներքին շարժմանը:

Իր գրոյցներից մէկում Աւետիք Իսահակեանը դառնալով Մարտիրոս Սարեանին, ասել է. «Կոմիտասի երգերի եւ քո գոյների կապակցութեամբ խօսում են իբրեւ այնպիսի հրաշքի մասին, որը անհնարին է արտայայտել խօսքով: Բայց, գիտե՞ս, իմ կարծիքով, դա այնքան էլ ճիշդ չէ: Հայաստանում կար մի գրող, որի բառերը երգում էին կոմիտասեան յանգով եւ փայլատակում էին քո կտաւների բոլոր գոյներով: Այդ գրողը Ակսել Բակունցն է»²:

Իսկապէս այդպիսին էր մեծն Բակունցը:

Հայոց բնաշխարհի եւ յուզաշխարհի գեղեցկութիւնների ու խորհուրդների, երազների ու տենչերի, աւանդութիւնների ու նորարար երկունքի մեծ նկարիչն ու երգիչն էր Ակսել Բակունցը, որի շնորհիւ հայ արձակ գրականութիւնը նուաճեց պարզութեան

¹ Տե՛ս Մահարի Գ., Երկերի լիակատար ժողովածու 15 հատորով. Հ. 9, Քանդակներ, Յուշեր, Ուղեգրութիւններ, «Անտարես» հր., Երեւան, 2016, էջ 256-257:

² Բակունց Ա., Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան, 1986, էջ 3:

եւ խտութեան, պատկերաւոր գեղեցկութեան եւ խոհական ընդգրկման եզակի մի բարձունք՝ ժամանակներից վեր յառնող եւ յաւերժի ուղին լուսաւորող ինքնատիպ մի գագաթ:

Ակսել Բակունցը ծնուել է 1899 թ. ընչազուրկ գիւղացի Ստեփան Թեւոսեանի բազմամարդ նահապետական ընթանիքում: Տասը երեխայ էին, տղաներից մէկն էր: Հօր տոհմական մականունը Բեգունց էր, որից էլ յետագայում առաջացել է Բակունց գրական անունը:

Երբ ծնուել է Բակունցը, հօր ալեքսանտրապոլցի ընկերները ընծաներ են ուղարկել եւ խնդրել, որ որդուն անուանի Ալեքսանտր՝ ի պատիւ իրենց քաղաքի: Գրողի հայրն այդպէս էլ անում է: Սակայն Ալեքսանտր անունը մնում է կէս ճանապարհին: Պատանեկան տարիներին Բակունցը խաղում է նորուեգացի դրամատուրգ Բեռնստեռնէ Բեռնսոնի «Նորապսակները» պիեսի հերոսներից մէկի՝ Ակսելի դերը, եւ ընկերներն Ալեքսանտրի փոխարէն սկսում են նրան Ակսել կոչել այնքան ժամանակ, մինչեւ Ալեքսանտր անունը մոռացութեան է տրուում, եւ գրողն ընդունում է Ակսել անձնանունը:

Նախնական կրթութիւնը ստացել է Գորիսի ծխական դպրոցում, որն աւարտել է 1910 թ. որպէս «յոյժ գովելի» աշակերտ եւ համագիւղացիների միջնորդութեամբ ընդունուել է ջմիաձնի Գէորգեան ճեմարան: Այստեղ նրա առջեւ բացւում է ուրիշ աշխարհ: Լսում է բանաստեղծ Յովհ. Յովհաննիսեանին, նշանաւոր հայագէտներ Աբեղեանին, Աճառեանին, Ղափանցեանին, Մանանդեանին, մեծ հետաքրքրութիւն է հանդէս բերում գիտելիքների տարբեր ճիւղերի նկատմամբ, յատկապէս հրապուրուելով իր ժողովրդի քաղաքական պատմութեամբ, գեղարուեստական գրականութեան յուշարձաններով եւ հարուստ լեզուի պաշարներով: Խորապէս ուսումնասիրում է հնադարեան-միջնադարեան մատենագիրների, բանաստեղծների, վարժապետների մատենաները, որոնք նրա առջեւ պարզում են ազգային մշակոյթի գանձերը³:

Աշխատանքային գործունէութիւնը Բակունցը սկսել է 1912 թ. Գորիսի գրադարանում, նաեւ՝ որպէս դասուսուցչ: Վաղ տարիներից թղթակցել է մամուլին: Ապա գրական առաջին փորձը՝ «Յիմար մարդը» ժողովրդական հէքիաթի մշակումը, 1913-ին տպագրւում է «Աղբիւրում», որը իր «Ինքնակենսագրութեան» մէջ Բակունցն անւանել է «շարութիւն» եւ այն համարել իր գրական մկրտութիւնը դէպի հայ արձակ գրականութիւն:

1915 թ. Շուշիի «Փայլակ» թերթում Գորիսի քաղաքագլխի եւ կառավարիչների դէմ տպագրած ֆէլիեթոնը նրա ձեռքակալութեան պատճառ է դառնում: 34-րդ օրը նրան ազատում են կալանավայրից՝ պայմանով, որ ուսուցչութեան մեկնի Զանգեզուրի հեռաւոր Լոր գիւղը: Տասնվեց տարեկան պատանին 1915-1916 թթ. դասաւանդում է Լորի դպրոցում, ապա վերադառնում է Գորիս՝ մէկ ու կէս ամիս դասաւանդում կեդրոնական վարժարանում:

1917 թ., երբ թուրքական ճակատում տեղի էին ունենում ծանր կռիւներ, Բակունցը ճեմարանական ուսանողների հետ մեկնում է էրզրումի ճակատ՝ որպէս շարքային: Ամբողջ մի տարի նա մասնակցում է կռիւներին եւ ճաշակում նահանջի բոլոր դառնութիւնները: Սարիղամիշ, Ղարս, Սուրմալու, կորուստների այս ուղին անջնջելի հետք է թողնում նրբազգաց զինուորի վրայ: Վերջապէս, 1918 թ. Մայիսին պատանի զինուորը մասնակցում է Սարդարապատի հերոսական ճակատամարտին: Չարենցի պէս նա էլ դառնում է հինաւուրց երկրի ողբերգութեան ականատեսը եւ մաքառումնե-

³ Տե՛ս նոյն տեղում, էջ 4:

րի մասնակիցը⁴:

Պատերազմական իրադրությունը առաջին խոր ճեղքուածքն է բացում Բակունցի հոգեկան աշխարհում եւ նրան թելադրում աւելի զգաստ հայեացքով նայելու անցողարձին: Այդ օրերի անմիջական տպաւորութիւններով գրում եւ «Ժողովուրդ» լրագրում տպագրում է «Աշտուր», «Անտառում», «Աղօթքը» պատմուածքները, որոնք, բոլորն էլ ժողովրդի կեանքից, լի մորմոքով ու թախիծով եւ շարենցեան «Յարդագողի ճամբորդների» երազներով:

1919 թ. Նոյեմբերից Բակունցն ուսանում է Թիֆլիսի պոլիտեխնիկումի գիւղատնտեսական բաժանմունքում, նաեւ պաշտօնավարում է տեղի՝ Մոսկուայի կոմիտեի որբերի գիմնազիայում: 1920-ի գարնանը մեկնում է Խարկով եւ մինչեւ 1923 թ. ուսումը շարունակում է գիւղատնտեսական ինստիտուտում: Խարկովում նա նաեւ աշխատում է, կազմակերպում դասախօսութիւններ, սերտ կապերի մէջ է մտնում հայութեան հետ: 1923-ի ամռանը կրկին վերադառնում է Հայաստան: Մի տարի Երեւանի սերմնաբուծարանում աշխատելուց յետոյ, մեկնում է Գորիս՝ գիւղատնտեսի պաշտօնով: Ապա սկսում է Բակունցի լրագրական բուն գործունէութիւնը:

1923-1925 թթ. «Մարտակոչ» եւ «Խորհրդային Հայաստան» օրաթերթերում լոյս են տեսնում նրա «Մեր գիւղերում», «Գաւառական նամականի», «Նամականի գիւղից» ակնարկաշարերը, որոնցում ներկայացուած է հայկական լեռնային գիւղերի իրական պատկերը: Այդ տարիներին մամուլում տպագրում են նաեւ նրա առաջին պատմուածքները («Միրհաւ», «Սաբու», «Ալպիական մանուշակ»), որոնք մտան «Մթնաձոր» ժողովածուի կազմի մէջ⁵:

1927 թ. տպագրում է «Մթնաձոր»-ը, որը Բակունցին բերում է մեծ հռչակ, ստեղծագործ երջանկութեան շատ պահեր, բայց եւ դառնութիւն: Նա շահում է բազում բարեկամներ եւ յամառ, մշտական հակառակորդներ: Ինչպէս երեւում է պատմուածքների սիւժէներից, Մթնաձորը մի այնպիսի աշխարհ է, ուր դեռեւս միմեանցից չեն անջատուել իրականութիւնն ու առասպելը, առօրեան ու լեգենդը, ուր մարդն ու արջը ապրում են կողք կողքի, ուր բնութեան եւ գիւղի միջեւ չկան էական տարբերութիւններ, բնութիւնը գիւղի մէջ է, գիւղը՝ բնութեան ծոցում⁶: Այդ ձորում Բակունցը տեսնում է յաւիտենական գեղեցկութիւններ, եւ այնպիսի դառն ցաւեր, որոնք նման են աշխարհի բոլոր ծայրերում ապրող մարդկանց ցաւերին:

«Մթնաձորի» բուն արժանաւորութիւնը պէտք է փնտռել մարդու եւ բնութեան, մարդու եւ հասարակական միջավայրի կապերի մէջ: Այս յարաբերութիւնների մէջ հեշտ է նկատել Բակունցի տաղանդի էական յատկանիշը՝ հակումը դէպի հոգեբանական վերլուծութիւնը, մի արժանաւորութիւն, որը սաղմնային ձեւով երեւաց «Գաւառական նամականի» շարքում, թանձրացաւ «Մթնաձորում», կատարելութեան հասաւ «Սեւ ցելերի սերմնացանում»:

«Մթնաձոր»-ից վեց տարի անց, 1933 թ. Յակոբ Կոչոյեանի ձեւաւորումով լոյս տեսաւ Ակսել Բակունցի միւս նշանաւոր ժողովածուն՝ «Սեւ ցելերի սերմնացանը», ուր նոր պատմուածքների կողքին տեղ գտան նաեւ մթնաձորեան մի քանի վերամշակում: Ժողովածուն ցնցող տպաւորութիւն գործեց ժամանակակիցների վրայ: Այստեղ նա գտնւում էր իր հազուագիւտ ձիրքի հնարաւորութիւնների բարձրութեան վրայ: Այս

⁴ Թամրազեան Հ., Երկեր, հ. Գ, «Նախի»», ԵՊՀ հրատարակչութիւն, Երեւան, 2010 թ., էջ 620-621:

⁵ Գասպարեան Գ., Ակսել Բակունց, «Քրիստոնէայ Հայաստան», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրօնական, մշակութային, լրատուական երկաթաթաթերթ, 2011, Մայիս Ա.:

⁶ Բակունց Ա., Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան, 1986, էջ 8:

գրքում նա դրսևորում է իր ձիրքի երեք գլխավոր յատկանիշները՝ նրբագեղություն, դրամատիզմ եւ բնականություն:

Տարիների հետ զօրանում էր նրա տաղանդը, բացւում էին ձիրքի նոր հնարաւորութիւնները: Նկատւում էր որոշակի հակում դէպի արձակի առաւել տարողունակ ձեւերը՝ վէպ, վիպակ, տարեգրութիւն: Այդպիսով նա ձգտում էր ստեղծել հայ գիւղի էպոպեան, ցոյց տալ 20-րդ դարի հայ գիւղի կեանքի բազմապիսի փոփոխութիւնները եւ ներքին զգացումը:

1928 թ. աւարտում է «Կարմրաքար» էպոպեայի առաջին հատորը, ուր վիպասանը մեծ ընդգրկումով պատկերում էր նախապատերազմեան գիւղի կեանքը: Ամէն ինչ այստեղ զարմանալի է, ամէն ինչ նուրբ ու կախարդող: Միւս երկու հատորներում նա պէտք է պատկերեր յետագայ իրադարձութիւնները: 1935 թ. գրում է «Կեորես» երգիծական տարեգրութիւնը՝ գաւառական քաղաքի սոցիալական հակասութիւնների մասին: Նոյն թուականին լոյս է տեսնում «Նղբայրութեան ընկուզենիները» սքանչելի վիպակը հայ եւ ատրպէյճանցի ժողովուրդների քաղաքական անցեալից: 1933 թ. հրապարակւում են «Նաչատուր Աբովեան» վէպի ծաւալուն հատուածները: Բակունցը գրում է սովետահայ շրջանի առաջին պատմական վէպը՝ ժամանակի աղմկոտ ճարտասանութեան մթնոլորտում, ուր տիրաբար ճնշում էին գործադրում գոեհիկ սոցիոլոգները՝ ժխտելով ազգ, հայրենիք, Հայաստան հասկացութիւնները, յարձակւում ճշմարիտ հայրենասիրութեան եւ պատմական անցեալի աւանդների վրայ: Նա բացառիկ ուժով վերստեղծում է պատմական տարբեր միջավայրերի եւ սոցիալական-քաղաքական կեանքի պատկերները, թափանցում Աբովեանի տառապանքի ու երազների աշխարհը, եւ Ն. Չարենցի պէս դառնում է իր ժողովրդի գոյութեան հոգեկան ու քաղաքական ակունքներին, հիւսում ազգային դժուար զարթոնքի ու վերածնութեան պատմութիւնը⁷:

Բակունցը խօսքի կախարդ էր, ոսկերիչ ու վարպետ, հոգու թարգման, բայց ցաւօք, այս հագուագիւտ յատկանիշները, որոնք հարստութիւն էին բերում հայ արձակին, լայնացնում նրա հոգեբանական եւ դիտողական հնարաւորութիւնները, ծուռ մեկնաբանութիւն ստացան ձախ դիրքերի վրայ կանգնած գրողների կողմից, դարձան իւրօրինակ թիրախներ: Ձախերն անճարակ էին գեղեցիկի ոլորտում, նրբագեղութիւնն ընկալում էին որպէս յեղափոխութեան ոգուն խորթ բան: Բացի այդ, Բակունցին մեղադրում էին անցեալի իտէալականացման, քարանձաւային հոգեբանութեան, նահապետականութեան գովքի մէջ: Դա տեւականօրէն մշակուած զրուպարտանք էր: Իրականում Բակունցը մերժում էր հին գիւղի դաժան կեանքը՝ ընդգծելով ողբերգականը: Նա ունէր միայն մի «մեղք». գրում էր գեղեցիկ, ստեղծում հոգեկան անտեսանելի անցումների եւ բնութեան շարժման նրբին, կախարդող պատկերներ, Վահան Տէրեանի պէս անվերջ յայտնագործում էր մարդկային հոգու անսպառ նրբաւորումները: Այդ զարմանալի սրուած տեսողութեան եւ հոգեբանական նրբութիւնների շնորհիւ նրա երկերում հայրենի բնութիւնը, մարդիկ, ողջ եզերքը երեւում էին անսպառ հմայքներով, յարատեւ գեղեցկութիւններով ու ներքին անվերջ շարժումով: Նրա Հայաստանը մարդկանցով, բոյսերով, բնութեան արարածներով խիտ բնակեցուած մի աշխարհ է, ուր երեւում են բոլոր ճամբաներն ու արահետները, լեռնային գետի յատակի նախշերն ու առնական բնութեան խստահայեաց եւ տարօրինակ ձեւերը, ուր լսւում է ժայռից գլորուող փոքրիկ աւազահատիկի շարժումը, որը յետոյ ստորոտում որոտում է ահեղաձայն: Այս զարմանալի հեղինակի հետ ընթերցողն էլ թեքւում է ամէն ծաղկի ու թփի վրայ, լսում լեռնային գետերի որոտը, զգում խոր

⁷ Տե՛ս Թամրազեան Հ., Երկեր, հ. Գ, «Նաիրի», ԵՊՀ հրատարակչութիւն, Երեւան, 2010 թ., էջ 667:

ձորերի ահը եւ բնութեան խորհրդաւոր ձայները⁸:

Ակսել Բակունցը ամենա-արդիական գրողներից մէկն էր, որը ամբողջ խորութեամբ տեսնում էր կեանքի տեղաշարժերը, սոցիալական վերելքը, հայկական գիւղի եւ առհասարակ հայ իրականութեան փոփոխութիւնները եւ այդ ամէնը հաստատում հոգեբանութեան միջոցով: Սակայն ստեղծագործական այդ բուռն վերելքի շրջանում, հէնց թռիչքի պահին նրա վրայ իջաւ բախտի ծանրագոյն հարուածը: 1936 թ. Օգոստոսի 9-ին շատ այլ գրչակիցների հետ ձերբակալուեց ու կալանաւորուեց Երեւանի բանտում նաեւ այս նուրբ արուեստագէտը, որի նմանները շատ հազուագիւտ են աշխարհ գալիս: Մեղադրանքը նոյնն էր, ինչ որ բոլորին՝ «հակայեղափոխական, հակախորհրդային, ահաբեկչական, ազգայնամոլական գործունէութիւն»: Բանտի խիստ կանոնակարգի պայմաններում 11 ամիս շարունակ Բակունցը ենթարկուեց ամէն տեսակի ստորացումների, անընդմէջ հարցաքննութիւնների, ամէնադաժան կտտանքների, առերեսումների: 11 ամիս շարունակ նա պարտաւոր էր ապացուցել իր անմեղութիւնը, անսահման նուիրուածութիւնը հայրենիքին⁹:

Սարսափի այդ մթնոլորտում կար մէկը, որ հաւատում էր Բակունցին, մի հանճարեղ մարդ, որը խիզախօրէն պաշտպանում էր հայոց երգը, բանտարկուած ընկերներին եւ Ակսել Բակունցին: Տնային կալանքի տակ, մոայլ մենութեան մէջ այդ հանճարը՝ Եղիշէ Չարենցը, գրում էր պաշտպանական խօսքեր, որոնք մարդկային վեհութեան եւ ասպետութեան ճիշէին՝ ուղղուած ներկային եւ գալիքին:

Օ, չեմ հաւատում, թէ Ակսելն անգամ,

Որ Եսաւի պէս, պժգնելի մի օր

Իր առաջնութեան իրաւունքը բորբ

Եղծի.- յանուն ինչ-որ քեմէի անձնական...

... Օ, չեմ հաւատում, որ անգամ ահից

Խելայեղ դարձած այրն այդ իսկապէս

Ելնի շողոքորթ, իբրեւ սրիկայ,-

Եւ շքեղ ոգով իր հանճարափայլ

*Գառնայ մաքրութեան մարգարէ մռայլ...*¹⁰

Այդ օրերին գրողն անարժան մարդկանց ուղղուած նամակներում փորձում է բացայայտել իր երկերի խորհուրդը եւ ներկայացնել իր սեւ ճակատագիրը: Սակայն, ամէն ինչ իզուր էր, ամէն փորձ՝ ապարդիւն: Թշնամիներին հետաքրքրում էր հաճարի արիւնը:

Մահուան մեկուսարանում Բակունցը խենթանում էր մայրենի կենդանի խօսքի կարօտից: Լսւում էր նրա սիրտ կտրտող աղերսանքը մահուան բանտից, ՀԿԲԿ կենտկոմի քարտուղար Ամատունուն եւ Ներքին գործերի ժողկոմիսարիատի լիազօր Մուղդուսուն 1936 թ. Հոկտեմբերի 6-ի նամակում նա գրում է. «Ինձ գրելու եւ կարդալու հնարաւորութիւն տուէք, ինձ գիրք ու մատիտ տուէք: Ինչ ժամանակով, որ անհրաժեշտ կը համարէք, ինձ ուղարկէք Հայաստանի որեւէ հեռու շրջան, գիւղ կամ խորհրդային տնտեսութիւն, միայն թէ լսեմ կենդանի խօսք, միայն թէ կարողանամ աշխատել եւ պատմութեան ու կուսակցութեան դատաստանի առջեւ ներում վաստակեմ: Ես

⁸ Տէ՛ս նոյն տեղում, էջ 666:

⁹ Տէ՛ս Գաապարեան Գ., Ակսել Բակունց, «Քրիստոնեայ Հայաստան», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրօնական, մշակութային, լրատուական երկաթաբաքեր, 2011, Մայիս Ա.:

¹⁰ Թամրազեան Հ., Երկեր, հ. Գ, «Նաիրի», ԵՊՀ հրատարակչութիւն, Երեւան, 2010 թ., էջ 676:

Խորհրդային Հայաստանի լաւագոյն արձակագիրն էի («Պրաւգա»), հայ խորհրդային գրականութեան կառքին լծուած քեղածին էի, այժմ թողէք, որ մնամ Խորհրդային Հայաստանի դռան հաւատարիմ շունը»¹¹:

Ի՞նչ պահից յետոյ է նա գրել այս տանջող խոհերն ու փշաքաղող աղերսանքը: Այն պահից յետոյ, երբ ասեղներ են խրել եղունգների տակ, ծխախոտներ են մարել մաշկի վրայ, երբ անվերջ ջրի կաթիլներ են իջել գլխին՝ մահուան մեկուսարանում, թէ՛ երբ երկար-երկար մութը լոյսից չէր տարբերում, եւ տնքում էր տանջահար մարմինը շարշարանքներից յետոյ: Ո՞րն ասես: Այս տողերը նա գրել է 1936 թ. Հոկտեմբերին: Եկաւ սեւ վերջաբանը¹²: Նա ապրեց միայն երեսունութ գարուն, ստեղծագործեց հազիւ մի տասնամեակ:

1937 թ. Յուլիսի 7-ին, 25 րոպէանոց հարցաքննութիւնից յետոյ Բակունցը դատաւարտուում է պատժի առաւելագոյն չափի՝ գնդակահարութեան: Դատաւճիռն ի կատար է ածուում յաջորդ օրը՝ 1937 թ. Յուլիսի 8-ին: Մի քանի ամիս յետոյ, 1937 թ. Նոյեմբերի 27-ի լոյս 28-ի գիշերը ձիասայլով անյայտ ուղղութեամբ տարան նաեւ Զարենցի տանջահար մարմինը: Այսպէս աւարտուեց մեր դարի մեծագոյն ոճիրներից մէկը, մի աղէտ, որը պատկանում է ոչ միայն հայ ժողովրդին, այլեւ ողջ աշխարհին, քանի որ դա մտքի լոյսի, եւ խղճի սպանութիւն էր, որն, ինչպէս միշտ, այդպէս էլ մնաց անպատիժ...

... Ու հիմա, երբ տարիների մէջ-մառախուղից յիշում ենք նրան, պատկերանում է նա մեզ իր իմաստուն, խորաթափանց հայեացքով եւ մանկական իր յստակ ժպիտով: Նա՛ էր լուսաւոր հանճարը զանգեզուրեան մութ ձորերի, որոնք լուսաւորուած են նոր լոյսերով նրա 120-ամեակի այս օրերին, երբ նա մեզ հետ է յաւերժ ապրող իր թողած գրական շողշողուն ժառանգութեան յաւերժական հարստութեամբ: Մեզ հետ է նա՛, հայկական լեռնաշխարհի հզօրաթեւ արծիւը, սեւ ցեղերի վաստակաւոր սերմնացանը, մեզ հետ է նա, ինչպէս ինքն էր կոչում իրեն՝ Ալեքսանտր Բակունց, որդի Ստեփանի, ի գեղջէն Գորիս¹³:

ՆԵՐՍԵՏ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ



¹¹ Նոյն տեղում, էջ 678:

¹² Նոյն տեղում:

¹³ Տե՛ս Մահարի Գ., Երկերի լիակատար ժողովածու 15 հատորով, Հ. 9, Քանդակներ, Յուշեր, Ուղեգրութիւններ, «Անտարես» հր., Երեւան, 2016, էջ 261:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՈՍԿԻ ԴՂԵԱԿԸ

Դարեր առաջ, Վանայ ծովու եզերքին՝ դղեակ մը կար մեծ ու գեղեցիկ էր ան, ոսկի էին անոր պատերը, ամէն մէկ պատուհանէն լուծք մը գոմէշ կրնար առանց նեղուելու ներս մտնել: Մշտադալար պարտէզներ կոհակ-կոհակ կ'իջնէին դարաստաններէն դէպի վարերը, մինչեւ ծով, որ զմրուխտ ակի մը պէս կը շողար լեռներու ծոցին: Պարտէզի վարդենիներուն վրայ սրտի պէս արիւնոտ ծաղիկներ կը վառէին: Թռչունները հազար գոյնով էին հոն, կ'երգէին այնքան անուշ, կախարդելու չափ ձմեռուան վհուկը, որ չէր համարձակեր հոն մտնել:

Բայց անոնցմէ աւելին՝ գեղեցիկ էր ոսկի մագերով իշխանուհին: Անոր աչքերէն կայծակներ կը փախէին, շրթներէն նուռ կը կաթէր, իսկ մագերէն ծովի պէս լոյս կը վազէր: Կարելի չէր ըսել թէ ամպերը ձգեր էին զինք թէ լեռը ծնած էր զայն: Իսկ իշխանը ցօղի մէջ լուացուած ոսկիի նման էր: Անոր աչքերը խորունկ էին ու փայլուն, հոգիներուն վրայ զով համբոյրի մը պէս դրոշմուող: Պալատին մէջ անոնք չէին զգար իրենց առանձնութիւնը, որովհետեւ կը սիրէին իրար, եւ ժամանակը որ ծանր է ու պահանջկոտ երջանկութեան հաշուոյն, անզօր էր իր ստուերովը կշռելու անոնց ուրախութիւնը:

Քով քովի էին միշտ, լճակներու հայելիին դիմաց, աղբիւրներու սիրտին եւ ծովեզր տանող ճամբաներուն: Զոյգ թռչուններ, շարժուն հոգիները ըլլային կարծէք այդ վայրերու խորհուրդին: Երբ անոնց գլուխները հանգչէին ծառերու բունին՝ կամ մարգերու կուրծքին, երկինքէն կախուած շքեղ օրօրոցի կը վերածուէր պարտէզը: Անոնք կը սիրէին իրար, եւ սէրը սպասումն էր աստուածներու խոստումին, այն հեռաւոր էակին, որ մեր ծնունդէն մինչեւ մահ կը քալէ մեր մէջէն՝ տանելու համար մեզ իրեն: Ամէն գարնան իրենց ներսը կը շատնար իրենց ներսը տրոփը բնութեան մեծ ձայնին, բուխքը անպատմելի խորհուրդին, որ մտածումին մէջէն բոլոր երիտասարդ զոյգերուն անձրեւ մը ինչպէս կը ծաւալի, յօրինելու անհուն ոստայնը կեանքին, որմէ բողբոջ մը քնքուշ՝ մանկիկն է մօրը արգանդին:

Լրացած էր իններորդ ամիսը՝ եւ կատարուած խոստումը աստուածներուն: Ուրախութեան սարսուռով կը բացուէին պալատին ծանր դռները, ծառերը մարգարիտներ կը հագնէին եւ թռչուններու երգով կը յորդէր շրջավայրը: Մանչ մըն էր եկողը, աղուոր ու անուշ, որուն օրրանին քով անոնք իրար կը գտնէին եւ կը լեցուէին իրարմով, իրենց մարմիններէն ալ անդին: Այժմ անոնք կ'ուզէին մոռնալ այն ամէնը՝ որ սահող վայրկեանին բերկրանքը չունէր:

Իշխանուհին ծնունդէն առաջ, հանդերձեր էր նորածինին սատափ օրրանը: Մետաքսները բերուած էին Արեւի երկրէն, եւ գոյնզգոյն դիպակները Հարաւէն, հիւսւած կարծէք պարիկներուն մատներով: Իշխանը նորածինին համար պատրաստած էր երեք նժոյգներ, ճերմակ, սեւ եւ կարմիր: Անոնցմէ առաջինը իշխանիկը իր ուսերուն առած պիտի վազէր ծովերու վրայէն՝ եւ անոր պիտի չկրնար հասնիլ եօթ գլխանի հրէշը: Եկորողը՝ հովերուն հետ պիտի մրցէր, բռնելու համար եօթ պարիսպներով քաղաքի իշխանուհին, երբ այս վերջինը որսի ելլէր: Իսկ երրորդը՝ զինքը պիտի կրնար

հասցնել դեռ արեւը մայր չմտած, եօթ լեռներէն անդին թառող ոսկեհաւին, որուն երգը կը բուժէր տրտմութիւնն ու մահը հոգիներուն:

Երջանիկ էր իշխանը եւ զուարթ՝ իշխանուհին:

*

Տղան կը մտածէր, տասը գարուններ եկած ու լեցուցէր էին իր մանկութիւնը քաղցրութեամբ եւ շնորհով: Իշխանը կ'ուզէր որ իր զաւակը մարդոց ամէնէն քաջն ու իմաստունը ըլլար: Անոր համար ան իր պալատը կանչեց աշխարհի բոլոր մեծ եւ անուանի գիտունները, դպիրներն ու ասպետները: Անոնք եկան իշխանիկին բերելու մարդերու գիտութիւնը եւ աստուածներու գաղտնիքը:

Պալատ բերուած էր Հարաւի մեծ մոզը, որուն մօրուքը մինչեւ ծունկերը կ'իջնէր եւ որուն իմաստութիւնը չունէր չափ: Ան կը խոստանար իշխանիկին սորվեցնել աստղերու թիւը, հովերուն շարժումներն ու աստուածներու իմաստութիւնը:

Հիւսիսէն եկող ասպետը կը խոստանար իշխանիկը ընել մեծագոյն նետաձիգը, որ պիտի կարենար զարնել թռչունը իր թռիչքին՝ եւ պտուղը իր անկիւնին մէջ: Անոր հարուածէն ոչ ոք պիտի կարենար բուժուիլ: Անիկա ձի նստած պիտի վազէր հովերուն հետ եւ պիտի սուրար երկինքի երեսէն թռչող ասուպի նման:

Լողորդը, Արեւելքի մեծ ծովերուն, որ կրնար իր բազուկներու թափին տակ սանձել կատաղութիւնը ալիքներուն եւ սուրալ աւելի արագ քան շանաձուկը ովկեանին, պիտի մարզէր պայազատը, որ ան փրփուրի պէս կենար ջուրերու խորութեան վրայ եւ կոհակներու կուրծքին:

Վարդերու երկրէն կանչուած մեծ բանաստեղծը, որ գիտէր գաղտնիքը թռչուններու լեզուին եւ ծաղիկներու հմայքին, որուն քնարին տակ աստղերը բոց, եւ հոգիները թեւ կ'առնէին, եկած էր իշխանին բերելու անմեռ կախարդանքը աստուածներու գիտութեան եւ մարդերու երազին:

Երջանիկ էր իշխանը եւ ուրախ իշխանուհին:

Տարիները յաջորդեցին տարիներու: Շինուեցաւ հասակը իշխանիկին, բայց անոր դէմքը, իղձերու կրակէն կը մնար տրտում: Իրիկունները երբ սոխակը կ'երգէր պարտէզներուն մէջ եւ վարդերը արցունք կը թափէին, իշխանիկը կը դողար անձրեւահար ոստի մը պէս: Անոր մորթը տակաւ մեղրի գոյն կը ստանար եւ աչքերուն բիւրերը ներս կը քաշուէին, տերեւներուն տակ ծուարած մանուշակի պէս: Հեռուն դղեակէն անդին, լերան կողին, աղուոր գիւղակը կարմիր ցօղի մը պէս ինկած էր անտառի շուքին: Հոն էր իր սիրած աղջիկը, կակաչի մը պէս բացուած իր ցողունին:

Ամէն առտու իշխանիկը ձիով կ'ելլէր դղեակէն, եւ անոր ետեւէն լեռներու մենութեան մէջ նշխարի նման կը ծաթէր աղջիկը: Անոնք իրար կը համբուրէին շագանակներու անտառին մէջ եւ ամէն անգամ փուշ մը կ'ինար անոնց շրթունքներուն մէջտեղը: Աղջիկը թեթեւ էր աշտանակի մէջ գամուած ոսկի ծաղիկի պէս, իսկ իշխանիկը քաղցր ու մեղամաղձոտ, որուն սիրտէն լուսաւոր ու տաք ալիք մը կը բարձրանար, եղերական բոցի նման: Անոնք իրար կը պատմէին այն բոլորը՝ զոր մինակութիւնը կը ներէր: Իրիկուան դէմ, երբ ծառերու տարեւները արին կուլային, անոնք թեւ-թեւի կը դառնային մեծ պարոյրը, որ դեղին գէտի մը պէս կը շրջանակէր կանանչ անտառը:

Յաճախ կը քալէին անլուսին իրիկուններով, երբ մուլթը երեսներուն դիմակ կը հագցնէր, անոնցմէ՝ որոնց պէտք ունեցած ենք բոլորս մեր կեանքի որոշ պահներուն: Անոնք կը քալէին թեւ-թեւի, երբ բլուրներէն սեւ ճիշդ կ'անցնէր շարագուշակ բուին, պատռուող ճերմակ թուղթի մը պէս, որուն վրայ անտես գիրերով նշուած էր կարծէք ճակատագիրը բոլոր անկարելի ու դժբախտ սէրերուն:

Իշխանիկին ծնողքը որոշեր էին իրենց զաւկին հարս բերել ծովերէն անդին ապրող թագաւորին աղջիկը, որուն համար կը պատմէին թէ աւելի գեղեցիկ էր քան կապույտ ամպը ինկած վերջալոյսի շուրերուն: Բայց տխուր էր իշխանիկը, ան այժմ կը շրջէր լեռներու վրայ, անտառներուն խորը, իր սրտին մէջ բռնած սիրոյ ալիքը: Անոր մարմնին շուրջ կը կը ծածանէր ծիրանի պատմութեանը, կարծէք կարմրած արիւնովը իր մորթուած սիրոյն: Բայց ո՞վ է կրցէր պատուել ճակատագրին վարագոյրը, իջեցնելու համար մարդերու հսկայ տառապանքին՝ երբ անոնց հոգին ամէն օր չհատնող երգի մը պէս թրթռացեր էր ինքն իրեն եւ ապրեր զգացումներու ամենէն եղբրականն ու չմեռնողը: Սէրը թունաւոր ծաղիկ մըն է մահուան բաժակին վրայ բացուած:

Ժամանակ մը վերջ, իշխանն ու իշխանուհին զարմանքով նկատեցին թէ ճերմկեր էին իշխանիկին մազերը: Անոր պատանիի բազուկներէն ինկած էր ընդմիշտ աղեղը եւ անոր հոգիէն՝ անվերադարձ նետերը բոլոր փափաքներուն: Անիկա աւերակն էր մայրենի սիրոյն եւ մոխրակոյտը հայրենի փառասիրութեան: Այսպէս կը վարուինք մենք յաճախ մեր ամենէն աղուոր երազներուն հետ, խեղդելով զանոնք մեր մատներով: Բայց առանց պատիժի ոսկին չի թափիր հողերու ցեխին եւ երկինքի բիւրեղէն շինուած քերթուածը արեւի համբոյրին:

Իշխանիկը չէր ուզեր այլեւս ապրիլ, քանի որ չէր կրնար իր կողքին ունենալ այն էակը, զոր երազէր ու սիրեր: Վերջապէս զգալով որ մահը մօտեցած է, փոքրիկ գերեզման մը փորել տուաւ դղեակին պատին տակ եւ հրամայեց ամենէն ճարտար քանդակագործին որ սեւ մարմարով շինէ արձանը անոր՝ զոր այնքան սիրած էր: Եւ երբ մեռաւ իշխանիկը, ուզեց որ իր սիրածին արձանը դնեն իր գերեզմանին՝ որպէսզի անոր ոտքերը յաւիտենապէս հանգչէին իր սիրտին վրայ:

Ո՞վ բոլոր դարերու մեծ սիրողներ, դուք մահուան կը դառնաք երբ ձեր սիրտը, մեծ փորձէն վերջ, կը պարպուի իր ստաշխէն ու երկնատուր բոյրը փնտռելէ, եւ գտնելէ յուսահատ՝ մարտերու պարտէզէն կը հեռանաք գլխիկոր: Ու մեծ պատարագէն վերջ, անմխիթար գիշերին մէջ կը հաւատաք թէ սիրոյ աստուած մը երկնքի դռները պիտի բանայ ձեր աչքերուն: Ո՞ր սիրողը չմորթեց իր տարփանքի աղաւնին եւ անոր արիւնոտ վերադարձը չսպասեց: Ո՞վ ճակատագիր բոլոր մեծ ու խորունկ սէրերուն:

ՀՌԻՐԾԱՄ

(«Սիոն», 1977, ԾԱ. Տարի, Մայիս-Յունիս, Թիւ 5-6, Էջ 133-135)



ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՄԵՆՔ ԷՋՄԻԱԾԻՆ ՄԸ ՈՒՆԻՆՔ

Աստուածային գործերը զարմանալի խորհուրդ մը ունին, բարձր՝ երկինքի նման եւ խորունկ միանգամայն: Այդպիսի գործ մըն էր Միածինին էջքը ի Վաղարշապատ:

Այնքան ազգեր կային երկրի վրայ՝ մեծ եւ հզօր, բայց Միածինը իշաւ փոքր եւ տկար ազգի մը մօտ: Ո՞վ իջեցուց Միածինը իր երկնային կայանէն վար, քարքարուտ երկրի մը գիրկը. ինչպէ՞ս պատահեցաւ այդ անակնունելի հրաշքը:

Պարզ է այս հարցումին պատասխանը՝ Ս. Գրիգոր: Իր անտանելի շարշարանքները, մէկը միւսէն աւելի սարսուզեցիկ, ցնցեցին Միածին երկնանիստ գահը: Ան տեսած էր շատ մարտիրոսներ, բայց Գրիգոր կը գերազանցէր բոլորը: Տեսած էր իր առաջին Վկային՝ Ստեփանոսի քարկոծումը եւ ոտքի կանգնած, որպէսզի քաջալերէ զայն իր հաւատքին մէջ: Գրիգորի բազմատեսակ տանջանքները արժանի էին աւելի բարձր գնահատութեան: Մանաւանդ որ Գրիգորի հետեւորդները պիտի կոչուէին դարէ-դար տոկալու ահաւոր տանջանքներու եւ աննկարագրելի տառապանքներու:

Եւ ահա Միածինը ոսկեղէն ուռնակ մը ձեռքին կ'իջնէր Վաղարշապատ, լոյսի շողեր ցանելով ամէն կողմ, զարնելով իր կռանը գետնին, սանդարամետը սարսեցնելով, դժոխքի դռները կը տապալէր. «Հո՞ս պիտի շինէք, «կ'ըսէր», իմ Եկեղեցին»:

Հրամանը աստուածային էր, որուն առջեւ խրոխտ թագաւորն ալ պիտի խոնարհէր: Աստուածահիմն եկեղեցին անխախտ հիմեր կ'ուզէր: Հզօր թագաւոր էր Տրդատ. ելաւ Արարատ լեռ, ութը հսկայ ժայռեր պոկեց, դրաւ իր կռնակին եւ բերաւ Վաղարշապատ: Նոր Եկեղեցիին հիմերը պատրաստ էին:

Բարձրացաւ շէնքը, եւ Աստուած գալով հաստատուեցաւ իր Տունը: Ըսելով Գրիգորին. «Հոս դի՛րքու Աթոռդ, եւ իբրեւ իմ փոխանորդս տէր եղի՛ր այս ժողովուրդին»:

Յուզուեցաւ Գրիգոր. «Ես տկար մարդ մըն եմ», ըսաւ, «Ի՞նչպէս կրնամ պաշտպանել այս ժողովուրդը»: Արցունքի կաթիլներ ինկան աչքերէն: Հրեշտակները փութացին իսկոյն, չթողուցին որ Գրիգորի արցունքները գետին իյնային, դրին զանոնք մաքուր կանթեղի մը մէջ եւ տարին երկինք:

«Դուն տկար չէս», ըսաւ Միածինը, «Աստուծոյ զօրութիւնը տկար համարուածներու միջոցաւ է որ կը հրաշագործէ: Բայց որպէսզի քու ժողովուրդդ ապահով զգայ՝ ահաւասիկ Տրդատի թուրը պահապան կը դնեմ Արագածի գագաթին, քու արտասուաշող կանթեղիդ մօտ, եւ անոնք կը մնան այնտեղ յաւիտենապէս՝ իմ յաւիտենական լեռներուս նման»:

Միածնահիմն Տաճարին շաղախները հազիւ չորցած, անոր ամրութիւնը փորձելու համար եկաւ Մաքսիմին կայսրը. «Այդ Տաճարը իմ արքիս մէջ փուշ մըն է», ըսաւ հեթանոս բռնակալը, «Մէջտեղէն պիտի վերցնեմ զայն»: Առաւ իր բանակը եւ սկսաւ յառաջանալ դէպի Վաղարշապատ. բայց չկրցաւ հոն հասնիլ. Տրդատի Թուրը եւ անոր ետին կանգնած հայ զօրքերը շարաշար կռիւցին զինք, եւ բռնակալը հեռացաւ գլխիկոր:

Թագազարդ ուրիշ գլուխ մը հեռուէն կը դիտէր այս տիտանեան պայքարը, որ մեծապէս կը շահագրգռէր զինք: Միտքը պղտորած վիճակ մը ունէր: Խանգարուած էր քունը: Խռովայոյզ երազի մը յորձանքը պարուրած էր զինք: Աչքերը լայն բացած մէկ վար կը նայէր բարձրացող փողիին, մէկ վեր կը նայէր կուտակուող ամպերուն: Յանկարծ կանգ առաւ, իր աչքերը գամուեցան երկինքին, հոն նորանշան լոյս մը նշմարեց, քառաթեւ ձեւ ունէր այն, եւ թրակերպ ծայր, լուսաշող գիրեր շարուեցան անոր շուրջ եւ յուզումով կարգաց` «Ասով պիտի յաղթես»:

Շատ մրցակիցներ ու հակառակորդներ ունէր ան, մօտ էր բաղխումի օրը: Հրամայեց որ Հռովմէական բանակի դրօշակներուն վրայ այդ նշանը դրոշմեն: Սկսաւ պայքարը հակառակորդներու հետ, սաստիկ էր պատերազմը, բայց երկնային այդ նշանին զօրութիւնը ապահոված էր Կոստանդիանոսի յաղթանակը: Տրդատի Թուրէն ժայթքած բոցավառ կայծերը սահմանուած էին հրդեհելու Հռովմէական կայսրութիւնը ծագէ-ծագ, նոր արշալոյս մը պարգեւելով տառապող մարդկութեան:

Հրաշալի վառ լոյսը կը շողար Արագածի գագաթին եւ իր ճառագայթները կը ըրկէր մինչեւ հեռաւոր հորիզոններ: Հոգեւոր էր այդ լոյսը եւ կ'առաջնորդէր հոգիի մարդոց: Տարիները կ'անցնէին շարան-շարան: Եւ ահա օր մը հոգիի մարդ մը ելաւ մէջտեղ, Մաշտոց կը կոչէին զայն, ուխտի ելաւ դէպի Արագած, լուսաւորչի կանթեղէն ջահ մը վառեց ու իջաւ վար: Լուսաւոր ջահը ձեռքին շրջեցաւ Հայաստան աշխարհը հիւսիսէն հարաւ եւ արեւելքէն արեւմուտք, ամէն տեղ բոցավառեց իմացական լոյսի կանթեղներ, Հայաստանը վերածելով շողշողուն ազամանդի:

Այդ անգին ազամանդը պէտք ունէր պաշտպանութեան: Մաշտոց գտած էր միջոցը, երեսուն եւ վեց մարտկոցներ կազմեց եւ զետեղեց իր երկրին սահմաններուն վրայ: Ազամանդը բարձրանշոյլ կը շողար, անոր աննման փայլքը նախանձոտ եւ ընչաքաղց բռնաւորներու քունը կը փախցնէր:

Ելաւ Յազկերտ, «Ես մոխիրներու տակ պիտի թաղեմ Լուսաւորչի կանթեղը», ըսաւ: Վարդան, հրեղէն սուրը ձեռքին, «Ձեռք կրնար», ըսաւ, «Հոգեւոր լոյսը կարելի չէ մարել մոխիրներու կոյտերով»: Յամառեցաւ Յազկերտ, յառաջ քշեց իր փիղերը, որոնք զարնուեցան Մաշտոցեան մարտկոցներուն եւ փլան կորակոր: Վարդանի հոգին սեւեռեցաւ անմահութեան կնիքով ոսկեծղի մատեանի մը էջերուն:

Ելաւ Գղիհոնը, ամբարտաւանութեամբ պարծենալով կ'ըսէր, «Ես Հայոց զօրքը նետիս կոթովը կը ցրուեմ»: Լսեց Վահան, Տրդատի կայծակէ թուրը ձեռքն առաւ, հեղ մը նայեցաւ վեր` Ս. Էջմիածնի Կաթողիկէին, խաչակնքեց երեսը, խոյացաւ անարգ դաւաճանին վրայ, եւ նիզակի մէկ հարուածով` լերդախոց տապալեց զայն անկենդան: Վահանի անունը անջնջելի տառերով արձանագրուեցաւ Հայոց Ոսկեմատեանին մէջ:

Ելաւ Մսրամելիք, Հայոց ազգը լուծի տակ դնել կ'ուզէր: Իմացաւ Դաւիթ, խլեց կայծակէ թուրը, վազեց բռնաւորին դէմ եւ զգետնեց զայն: Ապա դարձաւ ետեւ, հեռուն լոյս մը կը շողար, Արագածի կանթեղն էր: Դաւիթի անունը երգի փոխուեցաւ, անմահական վէպ մը յաւերժացուց իր փառաւոր յիշատակը:

Եկաւ Ճէնկիզ Խան իր արիւնարբու հորդաներով, քանդեց ու այրեց, բայց Հայութիւնը դիմացաւ ամէն տառապանքի, իր Լուսաւորչին պէս, եւ ողջ դուրս եկաւ մահուան անդունդէն:

Եկաւ Լէնկթիմուր իր խուժղուժ հորդաներով, այրեց ու քանդեց, ջարդեց ու կոտորեց, բայց Հայ ժողովուրդը տոկաց ամէն տանջանքի, իր Լուսաւորչին պէս, եւ վերստին ապրեցաւ, շինեց ու շէնցուց Հայաստան աշխարհը:

Եկաւ Շահ Աբաս իր անողոք զօրքերով, գերեց քշեց Այրարատի Հայութիւնը, անորդի դարձուց Մայր էջմիածինը, բայց Հայ ազգը դիմացաւ իր Լուսաւորչին պէս, վերակերտեց իր տունը եւ ծաղկեցուց իր այգին:

Նոր դար՝ նոր աղէտ. Լուսաւորչի թոռները դեռ պիտի տառապէին իրենց նախահօր նման: Ահաւոր էր լուրը. Հայուն գոյութեան վտանգը կը սպառնար: Անդրանիկ յիշեց Տրդատի Թուրը, ձեռք առաւ զայն, հեծաւ իր սպիտակ ձին եւ իջաւ ասպարէզ: Կայծակէ թուրը կը շողար հրացայտ, կրակ կար Անդրանիկի աչքերուն մէջ, ոսոխները ընկրկեցան: Անդրանիկ ետին դարձաւ, երկնքի եւ երկրին միջեւ կանթեղ մը լոյս կ'արձակէր. Լուսաւորչի կանթեղն էր, յաւիտենական խորհրդանիշը Հայուն հաւատքին եւ անմեռ կենդանութեան: Անդրանիկի անաղարտ անունը պարուրուեցաւ լոյսերով:

Մենք էջմիածին մը ունինք, որուն վերեւ կը պլպլայ Լուսաւորչի Կանթեղը եւ կը շողշողայ Տրդատի Թուրը: Դարեր կու գան, դարեր կ'երթան, էջմիածինը կ'ապրի իր քարեղէն գոյութեամբ եւ հոգեղէն զօրութեամբ: Անոր լուսաշող ճառագայթները սահման ու արգելք չեն ճանչնար, կը թափանցին ամէն տեղ ուր որ Հայ կայ, եւ կը ցուցնեն այն ճամբան որ կը տանի դէպի անմահութիւն:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ՊՕՂԱՐԵԱՆ

(«Սիոն», 1977, ԾԱ. Տարի, Մայիս-Յունիս, Թիւ 5-6, Էջ 130-132)

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Առանց վտանգի յաղթողը՝ առանց փառքի յաղթանակած կ'ըլլայ:

Արձակուած նետը, խօսուած խօսքն ու անցած պատեհութիւնները ետ չեն գար:

Երկար լեզուն կը կրճատէ կեանքը:

Լեզուն կակուղ միս է՝ բայց ի՛նչ ոսկորներ կը փշրէ:

Լեզուն աւելի մեծ բանականեր կը ջնջէ՝ քան սուրը:

Խօսիլը՝ ցանել է, իսկ միտք ընելը՝ քաղել:

Տառապանքն ալ իր հաճոյքն ունի:

Ոտքդ կրնայ սահիլ, բայց լեզուդ երբեք պէտք չէ սահի:

Վրէժխնդրութեան պառճառած գոհունակութիւնը կարճատեւ է, մինչդեռ ներողամտութեան պատճառած ուրախութիւնը մշտատեւ:

Լեզուին մէջ թոյն ունեցողը, չի կրնար մեղր թքնել:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՍԱԼԱՔԱՐԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

27 Մայիս, 2019-ին Քրիստոնեայ սրբավայրերու պատասխանատու Յոյն, Ֆրանչիսկան եւ Հայ, երեք համայնքներու պետերը, դարձեալ ի մի եկան Ֆրանչիսկաններու Ս. Փրկիչ վանքին մէջ, ստորագրելու վերջնական համաձայնագիրը Ս. Յարութեան Տաճարի սալաքարերու նորոգութեան, Օսմանեան ժամանակաշրջանէն մնացած կոյուղիներու փոփոխութեան, անձրեւաչուրերու ճամբան փոխելով արգիլել որ ջուրերը գան ու հաւաքուին Քրիստոսի Գերեզմանին տակ, սպառնալով անոր անվտանգութեան, եւ ապա արգիականացնել ելեքտրական եւ հեռաձայնային սիսթեմները, այսպէս Տաճարը մաքրելով տեղ-տեղ երեւցող թելերէ եւ խողովակներէ:

Սակայն պարտ ու պատշաճ պիտի ըլլար նախ խօսիլ եւ տալ հակիրճ նկարագրականը Ս. Յարութեան Տաճարին, որ իր մէջ կը ներառէ Գողգոթան, Քրիստոսի խաչելութեան վայրը, Պատանատեղին՝ ուր խաչէն վար առնուած մարմինը մեր Փրկչին ընդունեց օծումը իւղաբեր կիներուն, եւ ապա Գերեզմանը՝ ուր Աստուածորդուն մարմինը պիտի մնար երեք օրեր, եւ ապա Յարութիւն առնէր:

Քրիստոնեայ աշխարհի պաշտամունքին արժանացած այս Սրբավայրը կառուցուած է Դ. դարուն, Մեծն Կոստանդիանոսի կողմէ: 1099-ին, Ալ-Հաքիմ, Ֆաթիմեան մոլեռանդ խալիֆային կողմէ հիմնադրուած պիտի կործանէր, սակայն 1099-ին խաչակիրներ անոր պիտի տային հիմնական վերանորոգութիւն, ի մի ամփոփելով անշատ սրբավայրերը: Ներկայ Տաճարը այսօր իսկ տակաւին խաչակիրներու կողմէ վերաշինուած տաճարին մնացորդն է: 1808 թուականին հրդեհը կու գար քայքայելու արդէն իսկ թուցած կառուցը շէնքին իսկ մօտ 20 տարիներ ետք Ս. Երկիրը ցնցող մեծ երկրաշարժը պիտի գար վտանգաւոր ճեղքեր բանալու Տաճարը վեր բռնող սիւներուն եւ գմբէթին վրայ: Պաղեստինի Անգլիական խնամատար կառավարութիւնը հիմնուելով Անգլիացի ճարտարապետ՝ Հարվիի տեղեկագրին վրայ, փայտեայ եւ երկաթեայ մոյթերով (նեցուկ) ամրացուց Տաճարին վնասուած մասերը:

Պաղեստինեան ներքին քաղաքական պայմանները կու գային արգելք հաղիսանալու Տաճարի վերանորոգութեան հարցին, մինչեւ 1953 թուական, երբ Յորդանանի բարեխնամ կառավարութիւնը, իբրեւ խնամատար եւ վերահսկիչ Սրբատեղիներու, իր կարգին հաստատելով անհրաժեշտութիւնը վերանորոգութեան գործին, ուղեց ունենալ կարծիքը Սրբատեղեաց յանձնախումբի երեք մարմիններուն, որոնք որոշեցին վերջնական քննարկման ենթարկել Տաճարը եւ ճշդելու եթէ հիմնական նորոգութիւնը անհրաժեշտութիւն էր կամ տակաւին կարելի էր սպասել: Յարանուանութեանց կողմէ հրաւիրուած ճարտարապետներ եկան այն նոյն եզրակացութեան, որ նախապէս Անգլիացի, Իտալացի եւ Յոյն մասնագէտներ յանգած էին, Տաճարը կարիքը ունէր անմիջական ուղադրութեան եւ հոգատարութեան:

1961 թուին երեք ազգաց ճարտարապետները չորս գլխաւոր մասերու բաժնեցին Ս. Յարութեան նորոգութեան գործը.

Ա.- Գմբէթի ամրացում:

Բ.- Ս. Գերեզմանի կառույցի ամրացում:

Գ.- Ս. Յարութեան Տաճարի մուտքի արտաքին մասը, եւ

Դ.- Նորոգութիւնները սկսելէ առաջ, որոշուեցաւ քննել Տաճարին հիմերն ու ընդլատակեայ ջուրի ճամբաները:

Առնուած չորս որոշուած կէտերէն, միայն առաջինն ու երրորդը արժանացան լուրջ եւ մասնագիտական ուշադրութեան, մինչ Ս. Գերեզմանը կը մնար անորոշ վիճակով, ինչպէս նաեւ չորրորդ կէտը՝ ընդլատակեայ ջուրի նոր ճամբաներու բացումը:

Այդ թուականէն ասդին անցած են մօտ 50 տարիներ, եւ միայն երեք տարիներ առաջ էր, երբ Սրբատեղեաց երեք համայնքները որոշում առին Փրկչական Սուրբ Գերեզմանը ենթարկել հիմնական նորոգութեան եւ փառք Ամենակալին, այդ ծրագիրը իրագործուեցաւ, եւ այժմ կը մնար ընդլատակեայ ջուրերու հարցին լուծումն ու Տաճարին արդէն կոտրտած սալաքարերու նորոգութեան հարցը, որուն համար ալ Սրբատեղեաց գլխաւոր պետերը՝ Յունաց եւ Հայոց Պատրիարքներն ու Ֆրանչիսքեան Միաբանութեան Քիւսթոտը, ընթացիկ տարւոյս Մայիս 27-ին հանդիպեցան եւ ի ներկայութեան խումբ մը լրագրողներու՝ ստորագրեցին համաձայնագիր մը լուծելու Տէրունական Գերեզմանին տակ հաւաքուող անձրեւաջուրի հարցն ու սալաքարերու նորոգութիւնը:

Սոյն համաձայնագիրը կը բաղկանայ երկու մասերէ.

Ա.- Ուսումնասիրել եւ վերջնական լուծում մը գտնել Ս. Գերեզմանին տակ հաւաքուող անձրեւաջուրերը ձեւով մը հեռացնելու, ելեքտրական եւ հեռախօսային նոր գիծեր տեղաւորել գետնին տակ, ինչպէս նաեւ ունենալ վերջնական գինը այս մեծ եւ ծախսալից ձեռնարկին: Եւ տարի մըն ալ յատկացնել ամբողջացնելու այս ծրագիրը:

Ս. Յակոբեանց Զինուորեալ Միաբանութիւնը առաջին անգամը չէ, որ հարկին տակ կը գտնուի իր նախնիքներէն իրեն ժառանգ մնացած Սրբավայրերու իրաւական պահպանութեան հարկին առաջ: Հոս կ'արժէ նշել ի պատիւ Հաստատութեան հոգեւոր զինուորներուն, թէ ինչպէս անցեալին նոյնպէս եւ այսօր անոնք կ'ընեն իրենց լաւագոյն կարելին շարունակելու այս գործը գիտակցօրէն եւ լրջութեամբ:

Անշուշտ դիւրին չէ եղած զոհողութեան եւ նուիրումի այս գործը, սակայն բոլոր անոնք՝ որոնք քիչ թէ շատ ծանօթ են Ս. Քաղաք՝ Նրուսաղէմի եւ Սրբատեղեաց պատմութեան, կրնան վկայել թէ հրաշքի համազօր ջանքեր է որ կը թափուին դիմագրաւելու ամենօրեայ դժուարութիւնները: Անշուշտ այդ հրաշքին մեծ մասը մեր ժողովուրդի սէրն է իր հոգեւոր եւ ազգային սրբութիւններու եւ արժէքներու նկատմամբ, իսկ ամենակարեւորը՝ Հայր Աստուծոյ հրաշագործ զօրութիւնը, որ մեզ երբեք չէ լքած:

Փա՛ռք ու պատիւ մեր երախտաշատ նախնիքներուն, որոնք մեզի կտակեցին այս անփոխարինելի հոգեւոր գանձը, ու հիմա կարգը մերն է ընելու գերագոյնը, իրականացնելու Սուրբ Տեղեաց հետ առնչուած համաձայնութիւնները, որպէսզի մենք եւս մեր կարգին մեր յաջորդներուն փոխանցենք այս թանկագին ժառանգութիւնը, որովհետեւ այս՝ կրօնական կամ ազգային պարտականութիւն մը ըլլալէ առաջ փառք է եւ պատիւ:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՅԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԺԱՌԱՆԳԱԴՈՐԱՅ

ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

2018-2019

Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան,
Հուսարարապետ Սուրբ Աթոռոյ,
Հոգեշնորհ Հայրեր,
Բարեշնորհ Սարկաւագներ եւ Ուրարակիրներ,
Յարգելի ուսուցիչներ,
Սիրելի ուսանողներ եւ յարգելի ներկաներ,

2018-2019 ուսումնական տարին ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի համար վայրկեաններ անց անցեալ պիտի դառնայ եւ որպէս բարի յիշողութիւն պիտի միանայ մէկ եւ կէս դարէ աւելի պատմութիւն ունեցող այն հարուստ ժառանգութեան, որ մեզի փոխանցուած է հոգեւոր կրթօճախիս կողմէ անցեալ դարերու եւ տասնամեակներու ընթացքին:

2018-2019 ուսումնական տարեշրջանի աւարտին մեր կրթօճախն ունի 35 ուսանող. 28-ը կ'ուսանին Վարժարանին եւ 7-ը՝ Ընծայարանին մէջ: Յուլիս ամսուն եւս մէկ ուսանող Ամերիկայի Միացեալ Նահանգներէն պիտի միանայ Ընծայարանի աշակերտներուն: Դժբախտաբար, 2018-2019 ուսումնական տարուան մէջ ո՛չ մէկ շրջանաւարտ ունեցանք:

Հոգեւոր մեր կրթօճախն ունի 16 դասախօս. 10-ը՝ աշխարհական եւ 6-ը՝ հոգեւորական: Վարժարանէն եւ Ընծայարանէն ներս դասաւանդուած առարկաներուն ընդհանուր թիւը քսանհինգ է: Եթէ համեմատելու ըլլանք նախորդ ուսումնական տարուան հետ, պիտի նկատենք, որ 2018-2019 ուսումնական տարեշրջանի առարկայացանկին մէջ մէկ-երկու, բայց կարեւոր փոփոխութիւններ կատարուած են՝ 2 նոր առարկաներու յաւելումով: Վարժարանի Բ. դասարանի ուսանողներուն Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեանի կողմէ դասաւանդուեցաւ «Տօնք Հայ Եկեղեցւոյ», իսկ Ընծայարանի ուսանողներուն «Հայրաբանութիւն» առարկաները:

2018-2019 ուսումնական տարուայ ընթացքին կազմակերպուեցան ուխտագնացութիւններ դէպի Գալիլիոյ սրբավայրերը, Թաբոր լեռ, Սբ. Խոզրիպայի եւ Սբ. Գերասիմոսի վանքերը, Երիքով, Փորձութեան Լեռ, ինչպէս նաեւ պտոյտներ՝ Պէյթ Կովրիմ եւ Սուխնէ: Ուսանողներուն ամառնային հանգիստը լաւագոյնս ապահովելու համար նախատեսուած են պտոյտներ նաեւ Յունիս եւ Յուլիս ամիսներու ընթացքին:

2019-ի Մարտ 14-17 օրերուն, Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեամբ եւ Վարժարանիս դասախօսներէն Տիար Արշակ Բանուչեանի օգնութեամբ, Վարժարանէն ներս

հյուրընկալեցինք հայրենի մեր իշխանութեան պաշտօնական պատուիրակութեանը՝ Հայաստանի Կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սպորտի նախարարը եւ փոխ-նախարարը, Հայաստանի Պաշտպանութեան փոխ-նախարարը, Հայաստանի Ազգային Ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահը եւ Գիտութեան, կրթութեան, մշակույթի, սփիւռքի, երիտասարդութեան եւ սպորտի հարցերու մշտական յանձնաժողովի նախագահը: Հանդիպումն ունեցաւ կարեւոր եւ օգտակար նշանակութիւն, քննարկուեցան հայրենի մեր պետութեան կողմէ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի կարգավիճակի եւ վկայականներու իրաւական ճանաչման, ինչպէս նաեւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Հայաստանի Կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սպորտի նախարարութեան հետ համագործակցութեան հարցեր: Ուրախութեամբ պիտի յայտնեմ, որ արդէն իսկ ունինք վերոյիշեալ հանդիպման առաջին պտուղները: Համաձայն տարւոյս Յունիս 4-ին ՀՀ Կառավարութեան կողմէ Ազգային Ժողով ներկայացուած օրէնքի, Ժառանգաւորաց Վարժարան ընդունուած անձը՝ որպէս միջին մասնագիտական կրթութեան ուսանող, մինչեւ իր ուսման աւարտը, այսինքն՝ չորս տարի ՀՀ իր անձնագրի հետ առնչուող խնդիր այլեւս պիտի չունենայ: Սոյն օրէնքը Յունիս 13-ին, ՀՀ Նախագահի կողմէ ստորագրուելէ ետք Յունիս 20-էն սկսեալ գործածութեան մէջ պիտի դրուի: Ընթացքի մէջ է նաեւ Ընծայարանին Բարձրագոյն Ուսումնական Հաստատութեան կարգավիճակ շնորհելու հարցը, որը, յոյս ունինք, մինչեւ յաջորդ՝ 2019-2020 ուսումնական տարուայ աւարտը ի կատար պիտի ածուի:

Յարգելինե՛ր,

Իմ որդիական երախտագիտութիւնը կը յայտնեմ Առաքելական Սուրբ Աթոռոյ Գահակալ, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօրը՝ անձնապէս մեր եւ Վարժարանիս հանդէպ իր հայրական վերաբերմունքի, ինչպէս նաեւ՝ տարբեր առիթներով խըրախուսանքի եւ քաջալերանքի համար:

Կ'ուզեմ խորին շնորհակալութիւն յայտնել Լուսարարապետ Սրբազան Հօր Մայրավանքի եւ Սուրբ Յարութեան Տաճարի մէջ ժամերգութեանց եւ Պատարագներու ընթացքին իր մշտական ներկայութեան եւ մեր սաներուն պարգեւած բարի ժպիտին համար:

Շնորհակալութիւն ձեզ, սիրելի՛ Հայր Թէոդորոս, Հայր Գէորգ, Արթուր, Ռաֆիկ, եւ Աշոտ Սարկաւազներ, որպէս հոգեւորականներ Վարժարանին մէջ դասաւանդելու եւ մեր ուսանողներուն փոխանցած ձեր բարի խօսքերուն եւ խորհուրդներուն համար:

Գնահատանքս կը յայտնեմ մեր աշխարհական դասախօսներուն՝ անոնց մաղթելով քաջառողջութիւն եւ առաւել համբերատարութիւն: Կ'աղօթեմ եւ կը մաղթեմ, որ Աստուած գալիք ուսումնական տարուան մէջ առատացնէ ձեր սէրը մեր ուսանողներուն հանդէպ:

Մեր շատ սիրելի ուսանողներուն կը մաղթեմ, որ մշտապէս գործածեն այն ամբարած գիտելիքները եւ հոգեւոր մեծ փորձառութիւնը, որ վաստակած են վերջին 9-10 ամիսներու ընթացքին, տարբեր սրբատեղիներու մէջ ժամերգութեանց, թափօրներուն եւ Սուրբ Պատարագներուն իրենց ամենօրեայ մասնակցութեամբ:

Երանի՛ ձեզ, սիրելի ուսանողներ, քանի որ ունիք այն հոգեւոր ներուժը, որ Սրբոց Յակոբեանց Մայրավանքի եւ Սուրբ Յարութեան Տաճարի մէջ Աստուծմէ ձեզի կը տրուի: Կ'ակնկալեմ, որ դասախօսներուն հանդէպ մշտապէս յարգալից եւ սիրալիր ըլլաք եւ գնահատէք ձեր ամէն վայրկեանը, որ կ'անցընէք Վարժարանի պատերէն ներս: Յիշեցէ՛ք Աւետարանի խօսքերը, որ կըսէ՝ «Բազումք են կոչեցեալք եւ սակաւք՝

ընտրեալք»։ Այո՛, շատերը կը կանչուին, բայց քիչերն են, որ կ'ընտրուին։ Պիտի ուզէի, որ ձեզմէ իւրաքանչիւրն այդ քիչերէն մէկը ըլլար, որպէսզի ինչ որ այսօր հոս ամբարէք, վաղը կարենաք ուրիշին երջանկութեան պատճառ դառնալ՝ ձեր ունեցածէն անոնց բաժին հանելով եւ տալով։

Յաւարտ խօսքիս, յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ երեք դասախօսներու՝ Պրն. Պետիկ Լէփէճեանին, Օր. Ֆրանսուօի Աւագեանին եւ Տիկ. Սամար Մուսարսային, Վարժարանին մէջ իրենց երկարամեայ աշխատանքի եւ համագործակցութեան համար։ Նոր ուսումնական տարուան մէջ խիստ զբաղած ըլլալուն պատճառով երեք դասախօսներն ալ իրենց յօժար կամքով կը թողուն Վարժարանը։ Ուստի՝ անոնց կը մաղթենք առողջութիւն եւ կենաց արեւշատութիւն։

Թող Աստուած ամուր պահէ եւ պահպանէ Սուրբ Աթոռը, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը յաւիտեանս յաւիտենից։

ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Խօսք մը կրնայ կռիւի եւ նոյնիսկ պատերազմի դուռ բանալ, իսկ խաղաղութեան դառնալու հազար խօսքն անգամ քիչ է։

Պատիւը նման է թանկարժէք քարին, որուն վրայ փոքրագոյն բիծն անգամ կը նուազեցնէ արժէքը քարին։

Միտքը միշտ սրտին զոհն է. ամէն անոնք որոնք իրենց միտքը լաւ գիտեն, չեն ճանչնար իրենց սիրտը։

Ազատութեան արժանի չէ այն անձը, որ իր հակառակորդներուն չի կամենար այնքան ազատութիւն, որքան իրեն։

Կեանքը վարդ մըն է՝ որուն իւրաքանչիւր թերթը պատրանք է, իսկ իւրաքանչիւր փուշն ալ՝ իրականութիւն։

Յիմարին խրատ տալը կը նմանի կոյրին հայելի տալուն։

Հովը կը մարէ մոմը, բայց կը բորբոքէ խարոյկը։

Անկարելի է ձանձրացնել կին մը, անոր հետ զրուցելով իր լաւ բնաւորութեան եւ գեղեցիկ արտաքինի մասին։

Թոյլին նկատմամբ տարած յաղթանակը հաւասար է պարտութեան։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ

Ս. Ծննդեան տօնի հոգեպարար արարողութեանց ընթացքին ի Բեթղեհէմ եւ ի Յորդանան գետ, հայ հաւատացեալ եւ ազգասէր ազգային մը՝ Տիար Յարութիւն Այվազեան, որ իր ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն հետ ուխտի եկած էր Սուրբ Երկիր, 600 000 տղարի իշխանական նուիրատուութիւն մը ըրաւ Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի:

Պրն. Այվազեան՝ տեսնելով համայն Քրիստոնէութեան կեդրոնին մէջ Երուսաղէմի Պատրիարքութեան դերն ու առաքելութիւնը, անդիմադրելի զգացումը ունեցաւ ի Սիոն յիշատակ մը կանգնելու իր սիրելիներուն եւ իրեն համար:


Նուիրատուն՝ որ տիպար հայորդի մըն է, սնած եւ ծլած հաւատացեալ ծնողաց՝ իրաքահայ Գրիգոր եւ Մարիամ Այվազեան ամուլին ընտանիքին մէջ, ծնած է Իրաք եւ 1968 թուականին գաղթած է Միացեալ Նահանգներու Գալիֆորնիա նահանգը, ուր հետեւած է ուսման եւ շրջանաւարտ եղած է որպէս քիմիագէտ: Կեանքի պայմաններու բերմամբ ան նախընտրած է կալուածական առուծախի գործով զբաղիլ եւ այդ ասպարէզին մէջ ձեռք բերած է մեծ յաջողութիւն: Իր գաղութին մէջ շօշափելի նուիրատուութիւններ ըրած է ազգային այլ եւ այլ նպատակներու համար:

Պրն. Յարութիւն Այվազեան արժանի է բոլորիս անվերապահ գնահատանքին, որուն անունը պիտի յաւերժ մնայ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սրբատեղեաց պատմութեան մէջ:

Պրն. Այվազեան իսկական ժառանգը կը հանդիսանայ անցեալի երախտաշատ եւ երանելի բարերարներուն - հայազգի թագաւորներու, իշխաններու, իշխանուհիներու եւ հաւատացեալ մեծատուններու, որոնց առատաձեռն նուիրատուութեան կը պարտինք այսօր սուրբ Աթոռոյս եւ ազգիս Հայոց վայելած ընդարձակ իրաւունքները Սուրբ Տեղեաց մէջ: Այդ իրաւունքները տեւականապէս պահելու եւ պաշտպանելու համար պէտք ունինք Պրն. Այվազեանի նման գիտակից անձնաւորութիւններու նեցուկին: Թող Տէրը անոր ինքնաբոլիս օժանդակութեան դիմաց վարձահատոյց ըլլայ:

Այս առիթով Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան, իր սրտի շնորհակալութեան խօսքին մէջ նաեւ կոչ կ'ընէ բոլորին հետեւելու Պրն. Յարութիւն Այվազեանին եւ իր նմաններուն օրինակին որ օգնութեան հասնին մասնակցելու Երուսաղէմի սրբատեղեաց շինարարութեան եւ բարեգարդութեան գործին՝ միջազգային այս շատ կարեւոր քաղաքին մէջ:

«Երանի՛ անոնց որ յիշատակ ունին ի Սիոն»:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄ «ԱՐՄԱՏՆԵՐ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

19 Յուլիս, 2019-ին, Երուսաղէմի Հայ գաղութի երիտասարդները այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Այցի ընթացքին տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով մը, որու ընթացքին գնահատելով եւ արժեւորելով Երուսաղէմի հայկական դարաւոր ներկայութեան պատմական փաստը եւ հայ ազգի ունեցած խոր հոգեւոր կապը այս Սուրբ Երկրին հետ, Հայկական հաստատութիւններուն եւ անոնց իրաւունքներուն պաշտպան կանգնելու մտօք, հոգեւոր, մշակութային եւ ազգային արմատներուն հաւատարիմ մնալու եւ զանոնք զարգացնելու տեսլականով բանաձեւուեցաւ եւ կազմաւորուեցաւ գաղութի երիտասարդներէն բաղկացեալ Յանձնախումբ մը, եւ որոշուեցաւ զայն անուանել «ԱՐՄԱՏՆԵՐ» շեշտելու համար կապը մեր ակունքներուն հետ եւ այդ ուղղութեամբ պատրաստելու գիտակից եւ արթուն սերունդներ:

«ԱՐՄԱՏՆԵՐ» Երիտասարդաց Յանձնախումբը պիտի զբաղի գաղութէն ներս առկայ զանազան խնդիրներու քննութեամբ.

* Սուրբ Երկրի քաղաքական եւ ընկերային խառն իրավիճակ

* Սաղիմահայութեան թուի նոսրացում:

* Սաղիմահայութեան ներգաղութային ստեղծուած անհանդուրժողական վիճակ:

* Սաղիմահայերու հատուածի մը անտարբերութիւնը գաղութին, եկեղեցիին, Պատրիարքութեան եւ այլ արժէքներու հանդէպ:

* Հայ երիտասարդութեան կրթական, տնտեսական եւ ընկերային աննպաստ իրավիճակ:

Վերոնշեալ խնդիրները պատճառ հանդիսացան սոյն Յանձնախումբը կեանքի կոչելու, որուն նպատակն է. աշխատիլ պահպանելու եւ զարգացնելու հայկական ինքնութիւնը եւ ներկայութիւնը Երուսաղէմի մէջ:

Իր նպատակին հասնելու համար, «ԱՐՄԱՏՆԵՐ» Յանձնախումբը առաջին հերթին պիտի գործէ հետեւեալ ուղղութեամբ՝

ա.- Մշակութային - աշխուժացնել հայկական մշակութային կեանքը եւ այդ գործին ներմուծել գաղութի անդամները, յատկապէս երիտասարդութիւնը: Նաեւ, հայկական հարուստ մշակոյթը մատչելի դարձնել քաղաքի եւ ինչու չէ, երկրին մէջ բնակող այլ համայնքներուն:

բ.- Ընկերային - ստեղծել տնտեսապէս բարենպաստ յարմարութիւններ գաղութի երիտասարդութեան համար յոյս ներշնչելու եւ քաջալերելու անոնց հաստատուիլ այս երկրին մէջ եւ իրենց ծառայութիւնը բերել գաղութին բարգաւաճման գործին: Նաեւ աշխատիլ Սաղիմահայութեան կեանքի մակարդակի բարձրացման ուղղութեամբ:

«Սիոն» «Արմատներ» Երիտասարդաց Յանձնախումբի գործունէութեան կը մաղթէ յաջողութիւն եւ յարատեւութիւն:

ԱՅԼԵՒԱՅԼՔ**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 104-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ**

23 Ապրիլ, 2019-ին, Երեկոյեան ժամը 7-ին տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 104-րդ տարելիցին նուիրուած ջահերով երթ Ս. Յակոբեանց Մայր Տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի: Երթին մասնակից էին թէ օտարներ եւ թէ Հայեր, ովքեր պատառնեցին եւ դրօշակներով քալեցին դէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, ուր կատարուեցաւ «Բարեխօսութեան կարգ»: 20:15-ին ջահերով երթը շարունակուեցաւ դէպի Հայոց Յեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ մոմավառութիւն:

24 Ապրիլ, 2019-ին, Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Հոգշ. Տ. Ներսէս Աբղ. Ալոյեանի ձեռամբ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Յաւարտ Ս. Պատարագի, հոգեւորականաց դասը եւ ժառանգաւոր սաներ թափօրով եւ շարականի երգեցողութեամբ դէպի Եղեռնի յուշարձան քալեցին, ուր Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի հանդիսապետութեամբ կատարուեցաւ «Բարեխօսութեան կարգ»: Ապա Հ.Յ.Մ.-ի անունէն ներկաներուն իր խօսքը փոխանցեց Տիար Յակոբ Ծոնազեան: Ելոյթ ունեցաւ նաեւ իսարյէլեան «Մերեց» ձախակողմեան կուսակցութեան նախկին առաջնորդ եւ Իսրայէլի նախկին կառավարութեան անդամ՝ Տիար Եսիր Յապան:

Նոյն օրը Երեկոյեան ժամը 19:30-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս: Օրուան բանախօսն էր՝ Տիար Մկրտիչ Հայրապետ: Ոգեկոչման յուշահանդէսին ելոյթ ունեցան Հ. Ե. Մ.-ականներ եւ Հ. Մ. Ը. Մ.-ականներ: Յուշահանդէսը իր լրումին հասաւ Լուսարարապետ Սրբազան Հօր փակման աղօթքով:

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ**ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԽՕՍՔԸ ՀԱՅՈՑ****ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 104-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ**

Մարդկային հոգիի հայեացքը կը սրբուի եւ աչքը կը զօրանայ, նայելով ետ՝ անցեալին: Եւ երեւակայեցէ՛ք որքա՛ն աւելի պիտի զօրանար դիտելու եւ դատելու մեր կարողութիւնը եթէ միայն կարենայինք դրական յետադարձ հայեացք մը նետել մեր պատմութեան երբեմնի սխրալի էջերուն, արիւնի եւ աւերի դարերուն վրայ, բերելու եւ պատշաճեցնելու մեր անմահ նախնիքներու ոգին եւ սկզբունքները ներկայ մեր պայմաններուն: Եւ երբեք մի՛ մոռնաք, որ մեր ժողովուրդը իր փրկութիւնն ու ապահովութիւնը միշտ գտած է իր նախահայրերու այդ ոգին սիրելով, սրբացնելով եւ անցնելով, ահա այս է պատգամը մեր սրբացեալ նահատակներուն: Եւ արդէն ի՞նչ է Հայ ժողովուրդի դարաւոր պատմութիւնը եթէ ոչ անհուն թափօր մը նահատակներու եւ սուրբերու:

Երանի՛ր թէ մեր ժողովուրդի գոյութեան եւ գոյատեւման, այսպէս ըսած մերօրեայ

«նախանձախնդիրները», կոչը եւ կաղ ազդակներու ապաւինելու փոխարէն գիտնալին լսել տակաւին անդենականէն լսողոյ անմահ բանաստեղծին կոչն ու թելադրանքը. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ոյժի մէջ է...», ու մէկգի դնեն իրենց ժամանակավրէպ ամբարտաւան, եսասիրական հաշիւները, հարթելու իրար միջեւ իրենց իսկ յարուցած հարցերն ու դժուարութիւնները եւ մղուած իրաւ ու դրական ազգասիրութենէ ամփոփուին մեր իսկ հիւանդկախ եսասիրութեան իբր հետեւանք փճանալու սկսած մեր ազգի երբեմնի հաստաբուն ու խրոխտ ծառին շուրջ: Ահա, ա՛յս է միակ պատգամը մեր նահատակներուն, իւրաքանչիւր Ապրիլ 24-ին:

Մեծ Եղեռնի այս մութ եւ տխուր օրերուն, թշնամին զանազանութիւն չդրաւ մեր ժողովուրդի զաւակներուն միջեւ: Ան խտրութիւն չդրաւ մեր ժողովուրդի զաւակներուն դաւանանքին ու գաղափարականին միջեւ եւ մահուամբ միացուց բոլոր հայերը:

Ուրեմն այսօր ալ, 104 տարիներ ետք մեր ազգային բնաջնջման թուականէն, այլեւս ժամանակն է, որ կեանքը միացնէ մեզ, որպէսզի ի վիճակի ըլլանք մեր դէմ փորձուած Յեղասպանութիւնը ճանչցնել աշխարհին, որովհետեւ այն է կեանքը մեր Սուրբ Նահատակներուն:

ՈՒՏԱԳՆԱՅՈԹԻՒՆ ԴԷՊԻ ՊԱՐՈՆՏԵՐ՝

ՅԻՇԱՏԱԿԻ ՊՈՒՐԱԿ

18 Մայիս, 2019-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Դարիպեանի, Միաբանութիւն եւ Սաղիմահայեր կատարեցին ուխտագնացութիւն դէպի Պարոնտէր կալուածին վրայ հիմնուած Հայոց Յեղասպանութեան նուիրուած «Յիշատակի Պուրակ»: Պուրակի խաչքարին առջեւ նախ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքներու, միաբաններու, սպասաւորներու, երախտաւորներու եւ բոլոր հայ ննջեցեալներու հոգիներու հանգստութեան համար, ապա Գերշ. Սրբազան Հայրն իր սրտի խօսքը փոխանցեց ներկաներուն: Ուխտագնացութեան վերջաւորութեան ներկաներուն մատաղ բաժնուեցաւ:

ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՇՐՋԱՆԱԿԱՐՏԻՅ ՀԱՆԴԷՍ

Շաբաթ, 8 Յունիս, 2019-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Ս. Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Բաժնի Ամալերջի հանդէսը, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Դարիպեանի եւ ի ներկայութեան Հոգեշնորհ Հայրերու, ծնողներու եւ հանդիսականներու հոծ բազմութեան: Հանդէսին յայտագիրը կը բաղկանար երկու մասերէ: Առաջինը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգի եւ Թարգմանչաց շարականի («Որք զարդարեցին») երգեցողութեամբ, զոր կատարեցին Շրջանաւարտները: Երեկոյի ընթացքին շրջանաւարտ սաներ հանդէս եկան իրենց սրտի շնորհակալական խօսքերով: Ապա վարժարանի փոխ-տեսուչ՝ Տիար Միհրան Տէր-Մաթոսեան ներկայացուց 2018-2019 ուսումնական տարուայ կրթական տեղեկագիրը: Հանդիսութեան վերջաւորութեան Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ՝ Բարշ. Նարեկ Սրկ. Աբրահամեան շնորհակալական խօսքեր ըսաւ բոլոր ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն, եւ յատկապէս Լուսարարապետ Սրբազան Հօր՝ իր հայրական

վերաբերմունքին համար: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը, յանձնեց Շրջանաւարտներու վկայականներն ու առաջադէմ աշակերտներուն մրցանակները: Մրցանակներու բաշխումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր պատգամը փոխանցեց Շրջանաւարտներուն: Երեկոն փակուեցաւ «Պահպանիչ»-ով եւ «Հայր մեր»-ով:

ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

11 Յունիս, 2019-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամաւերջի հանդէսը: Հանդիսութեան բացման խօսքը վստահուած էր Ընծայարանի ուսանողներէն՝ Բարշ. Գէորգ Սրկ. Անտոնեանի, ապա երեկոյի ողջ ընթացքին Ժառանգաւոր սաներ հանդէս եկան ասմունքով, մեներգերով ու խմբերգերով, ինչպէս նաեւ դաշնակի գեղեցիկ կատարումներով: Հանդիսութեան վերջաւորութեան, Լուսարարապետ Սրբազան Հայրը յանձնեց Վարժարանի եւ Ընծայարանի առաջադէմ աշակերտներու մրցանակները: Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը ներկաներուն փոխանցեց իր պատգամը: Երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս Օրհներգով եւ «Պահպանիչ»-ով, ապա ներկաներ պատուեցան հիւրասիրութեամբ:

ՕԾՈՒՄ Ս. ՀՈՒՓՍԻՄԷՒ ՄԱՏՐԱՆ ՆՈՐԱՀԱՍՏԱՏ ԽՈՐԱՆԻ Ի Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ

21 Յունիս, 2019-ին, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ՝ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաներ յետ երեկոյեան ժամերգութեան մեկնեցան Ս. Հրեշտակապետաց Վանք: Լուսարարապետ Սրբազան Հօր եւ առընթերակայ հայր սուրբերու՝ Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեանի եւ Տ. Շնորհք Աբղ. Պալոյեանի զգեստաւորուելէն ետք, ձեռամբ՝ Լուսարարապետ Սրբազան Հօր, օծուեցաւ Ս. Հռիփսիմէի մատրան նորահաստատ խորանը: Նոր խորանը տեղադրուեցաւ նուիրատուութեամբ եւ ծախիւք՝ Մոսկուաբնակ Տիար Անդրոնիկ Զանգիրեանի, իսկ մատրան տանիքը եւ պատերը նորոգուեցան Պատրիարքութեան միջոցներով՝ Ս. Հրեշտակապետաց Վանուց Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանի անմիջական հսկողութեան ներքեւ, ի վայելումն մեր ժողովուրդին: Թող օրհնեալ ըլլայ կամքը Ամենակալ Աստուծոյ որ մեզ արժանացուց այս օրուան, ծառայելու Իրեն եւ սպասարկելու Իր Տան:

ՀԵՄ-Ի 64-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԽԱՐՈՅԿԱՀԱՆԴԷՍ

12 Յուլիս, 2019-ին, Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ներկայ գտնուեցան Պէյթ Ճալայի Տալիթա Քումի բնակավայրին մէջ ՀԵՄ-ի Երուսաղէմի մասնաճիւղի կողմէ կազմակերպուած 64-րդ Խարոյկահանդէսին: Երեկոյի ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը մրցանակներ յանձնեց Բանակումի յաղթողներուն եւ նուիրեալ անդամներուն: Ապա ներկաներուն փոխանցեց իր սրտի խօսքն ու պատգամը՝ մաղթելով նորանոր յաջողութիւններ:

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԽՕՍՔԸ ՀԵՄ-Ի 64-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԽԱՐՈՅԿԱՀԱՆԴԵՍԻՆ

Սիրելի Հ.Ե.Մ.- աղաններ

Մարդ մը պարտեզի մը մօտեն անցած, կը նշմարէ թէ պարտեզին տէրը նստած տեղէն պարտեզը կը ջրէր: «Ի՛նչ ծոյլ մարդ է», կը խորհի անցորդը, սակայն երկու քայլ վերջ յանկարծ կը տեսնէ, որ մարդը անդամալուծ էր, եւ անուակառքի վրայ նստած: Ան կ'անդրադառնայ որ արագ եզրակացութեան հասած էր, ինչ որ ճիշդ չէր:

Պիտի ուզէի այս երեկոյ երկու կէտերու մասին խօսիլ, որոնք կրնան ազդել մեր նոր սերունդի երիտասարդներու նկարագրին:

Ա.- Տէր եղէ՛ք ձեր մտածումներուն եւ խօսքերուն: Նախ մտածեցէ՛ք, յետոյ խօսեցէ՛ք: Ինչպէս Հայկական առածը կ'ըսէ. «Տասը չափէ՛, մէկ կտրէ՛»: Եւ այս մէկը կու գայ ինքնաճանաչումէ, ինքզինքնիդ պիտի գիտնաք: Յոյն իմաստասէր Թալէս կ'ըսէ, «Աշխարհի ամենադժուար բանը ինքնաճանաչումն է, իսկ ամենադժուարը՝ ուրիշը արհամարհել»: Ինքզինք լաւ ճանչցող մարդը զօրաւոր կ'ըլլայ, մինչ ուրիշը արհամարհողը՝ ինքն է բուն տկարը:

Բ.- Ժամանակին յարգը գիտցէք եւ մի՛ վատնէք զայն: Աշխարհի վրայ մարդիկ միլիառաւոր տողարներ կը ծախսեն, լայն ճամբաներ, կամուրջներ եւ փապուղիներ կառուցելու, տարուած մէկ մտահոգութենէ, պարզապէս որպէսզի մարդիկ ժամանակ շահին, 1-2 ժամ քշելու փոխարէն 15-20 վայրկեանէն իրենց ուզած տեղը հասնին եւ այս ժամանակ շահիլ է: Իմաստուն մարդ մը ըսած է, «Այնքա՛ն պիտի ուզէի մուրացկան մը ըլլալ, եւ գլխարկս ձեռքս աղաչէի մարդոց, որ իրենց յումայէտս վատնուած ժամանակը, հո՛ն, գլխարկիս մէջ դնէին»:

Ուրեմն, սիրելի Հ.Ե.Մ.-աղաններ յիշեցէ՛ք այս երկու կէտերը եւ փորձեցէ՛ք դուք ձեզի օգնել, այդպէսով ալ ձեր անմիջական շրջանակին օգնելու համար:

ԽՈՒՄԲ ՄԸ ՀՐԵԱՆԵՐՈՒ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

16 Յուլիս, 2019-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Պատրիարքարան այցելեցին եւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցան Իսրայէլի Խորհրդարանի անդամ եւ Երուսաղէմի Հին Քաղաքի՝ Հրէական Թաղամասի բնակիչ՝ Տիար Իցիսակ Փինտրուս, Ռաբբի՝ Տէյվիտ Ռօզըն, Ոստիկանութեան սպաներ եւ Երուսաղէմի միջ-մշակութային կեդրոնի տնօրէն՝ Տիար Խակի Ակմոն Շնիր եւ իր քարտուղար՝ Մերալ Սթէյն:

Հանդիպման ընթացքին անոնք, նախ Պատրիարք Սրբազան Հօրմէ ներողութիւն խնդրեցին Յունիս 8-ին կատարուած միջադէպի՝ Հրեայ ծայրայեղականներու ժառանգաւոր սաներու վրայ յարձակման համար եւ տեղի ունեցաւ քննարկում, թէ ինչ միջոցներ կարելի էր ձեռք առնել ապագային այսօրինակ միջադէպեր կանխելու համար:

ՍԻՈՆ



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 6 Ապրիլ. Սրբոց Մանկանց Քառասնից Որք ի Սեբաստիայ կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նըկարին առջեւ շտկուած Սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող:

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տընօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս:

Կիրակի, 7 Ապրիլ. Ե. Կիրակի Քառասնորդաց: Դատաւորին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Լուսարարապետ Սրբազան Հօր, երկրորդ մուտքէն ետք, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, օրուան Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Պարեո Մ. Վրդ. Երէցեան: Պատարագէն վերջ Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 12 Ապրիլ. Նախատօնա-

կին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 13 Ապրիլ. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ Զարչարանաց եւ Մտանելոյն ի Վիրապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գրիգոր Մ. Վրդ. Մագսուտեան:

Կիրակի, 14 Ապրիլ. Զ. Կիրակի Քառասնորդաց: Գալստեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Միաբան Հայրեր ինքնաշարժով մեկնեցան Նոր Երուսաղէմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Գրիգոր Մ. Վրդ. Մագսուտեան:

Չորեքշաբթի, 17 Ապրիլ. Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 18 Ապրիլ. Աւետումն Ս. Աստուածածնի: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան:

Երեկոյեան ժամը 7-ին Մայր Տաճարի մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց վերջին «Հանգստեան» ժամերգութիւնը:

Ուրբաթ, 19 Ապրիլ.- Առաւօտեան ի Ս. Յակոբ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Արեւագալի» վերջին ժամերգութիւնը:

Շաբաթ, 20 Ապրիլ.- Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, մեր Վերնամատրան մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս:

Կիրակի, 21 Ապրիլ.- Ծաղկազարդ: Առաւօտեան ժամը 6:15-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան հայոց Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ: Թափօրականք ի ձեռն ունէին ձիթենեաց եւ արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները:

Վանք վերադարձին, հայոց թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ զխորհուրդ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք վանքի շրջափակէն ներս կատարուեցաւ թափօր:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դռնբացէք»-ի արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Վարագոյրներու բացման մաս-

նակցող բարեպաշտ հաւատացեալներուն անունները կարդաց Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան: Կատարուեցաւ հանգանակութիւն՝ Ազունիէի Ազգային բուժարանին ի նպաստ:

Երեքշաբթի, 23 Ապրիլ.- Աւագ Երեքշաբթի: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Ըստ սովորութեան Սրբ. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս:

Չորեքշաբթի, 24 Ապրիլ.- Յիշատակ Սրբոց Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթաց Հայոց Յեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Աղոյեան: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւնը թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեց դէպի Ապրիլեան զոհերու յուշարձան, ուր տեղի ունեցաւ ոգեկոշման արարողութիւն:

Հինգշաբթի, 25 Ապրիլ.- Աւագ Հինգշաբթի (Յիշատակ վերջին ընթրեաց): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Կիլիկեան միաբան Տ. Կոմիտաս Արք. Օհանեան: «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան ճառը՝ գերազանցօրէն վեհ եւ շինիչ խրատներով լեցուն:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Ուտնլուայի» սրտագրաւ կարգը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ներկայ էին օտար բարձրաստիճան հիւրեր, որոնց կարգին Անկլիքան եպիս-

կոպոսը, որ վերջաւորութեան շուրջառով եւ ջաթալթազ ի գլուխ բարձրացաւ Աւագ խորան եւ Աւետարանէն հատուած մը կարդաց Անգլերէնով:

Ժամը 5-ին, փոքր թափօր մը գլխաւորութեամբ Տ. Պարեա Ծ. Վրդ. Երէցեանի այցելեց Քրիստոսի զոյգ բանտերը: Ս. Ծառին առջեւ Աւետարանի ընթերցումէն ետք քարոզեց վանուց բակը լեցնող ժողովուրդին՝ խօսելով Յիսուսի մատնութեան, դատաւարութեան եւ Պետրոսի ուրացման դէպքերու մասին, ինչպէս նաեւ տուաւ վանքին պատմականը, ապա թափօրը մեկնեց Ս. Փրկիչ (Բ. բանտ Քրիստոսի), ուր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

Գիշերուան ժամը 7-12, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»: «Փառք ի բարձունս»-էն ետք Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ «Յայսմաւորքի Ամպիրոնէն» քարոզեց Մեծի Տանն Կլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտաւորաբար ժամանած Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:

Ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի քո Քրիստոս»-ի խնկարկութիւնը:

Ուրբաթ, 26 Ապրիլ. Աւագ Ուրբաթ (Յիշատակ Չարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեառն): Կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը: Հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 27 Ապրիլ. Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Չատկի): Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ Թարգման Տ. Տիրան Աբղ. Յակոբեանի ձեռքէն:

Ժամը 11-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, Հ.Ե.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներով եւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութիւն, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանգիստութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դրան կնքումէն: Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեան, Յունաց Ամեն. Տ. Թէոփիլոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան յետոյ դուրս տըրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամաստան պատըշգամին մէջ իր տեղը գրաւող Լուսարարապետ Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած խուռներամբազմութիւնը ամենազգի ուխտաւորներուն: Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեաւ» շարականը: Լուսահան հայր սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը:

Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները:

Վանք դարձին, դարձեալ սկաուտներու նուագախումբով առաջնորդուած, թափօր կազմուեցաւ, լուսահան՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեան շուրջառազգեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Գերեզմանէն լոյսը ի ձեռին թափօրին մէջտեղէն քալելով: Դաւթի Բերդին մօտ Լուսարարապետ Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան: Շարականներ երգելով եւ զանգահարութեամբ մուտք գործեցին Մայր Տաճար:

Լուսարարապետ Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատկական Աւետարանը եւ «Պահպանիչ»-ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւնը Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Ուկրանիոյ թեմի Առաջնորդ՝ Տ. Մարկոս

Եպս. Յովհաննիսեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Նախատօնակ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը: Ապա, Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւն:

Կիրակի, 28 Ապրիլ.- Զատիկ Յարութեան Տեառն: Կէս գիշերէն ետք ժամը 2:45-ին Մայրավանքի մեծ զանգը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Ապա միաբան հայրեր եւ ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իջան Սուրբ Գերեզմանի շրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռադարձ թափօրով Գերեզմանի եւ Պատանատեղւոյն շուրջ: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան», իսկ Ս. Գերեզմանին առջեւ «Խաչի քո Քրիստոս» բաժինի երգեցողութիւնը:

Առաւօտեան ժամը 7-ին Լուսարարապետ Սրբազան Հայրը Միաբան Հայրերու հետ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, եւ կարճ դադարէ ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան Տ. Վարուժան Արք. Հէրկէլեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Վանք դարձին հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեալ» շարականը երգելով Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան:

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական մեծահանդէս «Անդաստան»-ին:

Երկուշաբթի, 29 Ապրիլ.- Բ. օր Ս. Զատիկի: Յիշատակ մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան,

քարոզեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագի վերջաւորութեան Պատրիարք Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նաեւ Միաբան Հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ» ուխտաւորաց բարի ճանապարհ մաղթելու համար: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազանը բոլորին նշխար բաժնեց:

Երեքշաբթի, 30 Ապրիլ.- Գ. օր Ս. Զատիկի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

Շաբաթ, 4 Մայիս.- Յիշատակ գըլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 5 Մայիս.- Նոր Կիւրակէ (Կրկնազատիկ): Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Լուսահան Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

Շաբաթ, 11 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը, մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 12 Մայիս.- Աշխարհա-

մատրան (Կանաչ Կիւրակէ): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան Տ. Վարուժան Արք. Հէրկէլեան: Ս. Պատարագի վերջաւորութեան պատարագիչ Սրբազան Հայրը նախագահեց Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին:

Կիրակի, 19 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագեց եւ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Շաբաթ, 25 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Կիրակի, 26 Մայիս.- Տօն Երեւման Ս. Խաչին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիւրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր, եւ հանդիսապետեց «Անդաստանի»-ի արարողութեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որուն վերելք գետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Շաբաթ, 1 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 2 Յունիս.- Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան» եւ Երեկոյեան ժամերգութիւն:

Չորեքշաբթի, 5 Յունիս.- Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գըլ-

խաւորութեամբ Միաբան Հայրեր բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ կառուցուած վրանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեցէ»-ի եւ Հսկման կարգերը եւ ապա Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները:

Հինգշաբթի, 6 Յունիս.- Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտուն Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»: Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուեցաւ «Անդաստան»:

Շաբաթ, 8 Յունիս.- Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Դեւոնդ Վրդ. Յովհան-նիսեան:

Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 9 Յունիս.- Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Շաբաթ, 15 Յունիս.- Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝

Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»-ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 16 Յունիս.- Հոգեգալուստ: Առաւօտեան ժամերգութեան աւարտին հանդիսապետութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ «Անդաստան» ի Ս. Յակոբ: Ապա Միաբանութիւնը Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Փրկիչ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեց մատուռէն ներս, ուր եւ մատուցուեցաւ օրուան Ս. Պատարագը: Ժամարարն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որ Պատարագի ընթացքին կարդաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը: Պատարագի վերջաւորութեան նախագահութեամբ Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեանի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:

Կէսօրէ ետք, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր այցելեցին վերջին ընթրեաց վերնատունը: Օրուան դէպքին պատմական վայրը կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն:

Շաբաթ, 22 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դլխադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Կիրակի, 23 Յունիս.- Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Կէսօրէ ետք, Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 24 Յունիս.- Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտ-

ւեցան ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի մատրան նորած սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Ուրբաթ, 28 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Շաբաթ, 29 Յունիս.- Ս. Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն ի վիրապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Աղոյեան:

Նոյն օրը երեկոյեան, Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Գերաշնորհ Լուսարարապետ Ս. Հայրը, ապա «Տէր ողորմեա» երգուեցաւ ծնրագիր:

Կիրակի, 30 Յունիս.- Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: «Հայր Մեր»-էն առաջ «Հայրապետական մաղթանք»-ին նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 6 Յուլիս.- Ս. Մեծին Ներսիսի եւ Խաղայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 7 Յուլիս.- Գ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Ուրբաթ, 12 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 13 Յուլիս.- Գիւտ Նշխարաց

Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 14 Յուլիս.- Դ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ քաղաքիս արեւմտեան բաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Չորեքշաբթի, 17 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հինգշաբթի, 18 Յուլիս.- Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Շաբաթ, 20 Յուլիս.- Սրբոցն Տրդատայ Թագաւորին եւ Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովիդիստոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Նոյն օրը երեկոյեան Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց

Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 21 Յուլիս.- Դիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ուրբաթ, 26 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 27 Յուլիս.- Սրբոց երկոտասան Առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի երեքտասաներորդ Առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 28 Յուլիս.- Զ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Բարեկենդան Վարդավառի պահոց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Ուրբաթ, 12 Ապրիլ. Երուսաղէմի Ասորւոց նոր Եպիսկոպոս՝ Գերշ. Տ. Գաբրիէլ Տահո կատարեց իր պաշտօնական մուտքը Ս. Յարութեան տաճար: Գերաշնորհ Սրբազանը դիմաւորուեցաւ Հին քաղաքի՝ Եաֆայի դարպասին առջեւ, եւ Սուրբ Երկրի քրիստոնեայ միւս յարանաւանութեանց ներկայացուցիչներու ուղեկցութեամբ առաջնորդուեցաւ դէպի Ս. Յարութեան տաճար: Ս. Գերեզման ալցելութենէ ետք, Ասորւոց նոր Եպիսկոպոսը պատուուեցաւ հայոց տեսչարանին մէջ, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ս. Յարութեան տաճարի մեր տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեան: Ապա Ասորւոց նոր Եպիսկոպոսը առաջնորդուեցաւ իրենց վանք, ուր տեղի ունեցաւ գահակալութեան յատուկ արարողութիւնը եւ հիւրասիրութիւն: Սոյն արարողութեանց Պատրիարքութեանս կողմէ ներկայ գտնուեցան Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան եւ Ս. Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Երեքշաբթի, 16 Ապրիլ. Երուսաղէմի մէջ ԱՄՆ-ի դեսպանատան «Պաղեստինեան գործերու» վարիչ՝ Տիար Մայք Հանկին ալցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հնդկաման ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը Տիար Հանկինի յանձնեց ԱՄՆ պետքարտուղար՝ Տիար Մայք Պոմպէյի նուէրը, որ քանի մը շաբաթ առաջ

ալցելած էր Ս. Յարութեան Տաճարն:

Ուրբաթ, 19 Ապրիլ. Երուսաղէմի Ասորւոց նոր Եպիսկոպոս՝ Գերշ. Տ. Գաբրիէլ Տահո կատարեց իր առաջին պաշտօնական ալցը Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան եւ Աւագ Թարգման Տ. Տիրան Աբղայ Յակոբեան: Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով Ասորւոց Գերաշնորհ Սրբազանը Եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ Երուսաղէմի Եպիսկոպոս նշանակուելուն առիթով, անոր նուիրեց Եպիսկոպոսական ասա մը:

Երկուշաբթի, 22 Ապրիլ. Կէսօրուան ժամը 12-ին, Հայաստանէն, Բիւրաւան գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ղազար Քհնյ. Պետրոսեան ընկերակցութեամբ Արժ. Տ. Համազասպ Քհնյ. Գրիգորեանի ուխտաւորներու խումբով ալցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երեքշաբթի, 23 Ապրիլ. Առաւօտեան ժամը 11:00-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր, Զատիկական շնորհաւորութեան գնաց Ֆրանչիսկեան Քիւսթոտին, ապա ժամը 11:30-ին Լատինաց Ամենապատիւ Պատրիարքին եւ Միաբանութեան:

Նոյն օրը երեկոյեան Զատիկական

տօներու առիթով Կ. Պոլիսէն Սուրբ Երկիր ժամանած ուխտաւորներ Սեւան Կ. Սրկ. Արաբօղլուի առաջնորդութեամբ այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երեքշաբթի, 30 Ապրիլ.- Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան, Պատրիարք Սրբազան Հայրը այցելեց Իսրայէլի նախագահի պալատ եւ հանդիպում ունեցաւ նախագահ՝ Տիար Ռուվէն Ռիվլինի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Յորդանան գետին քով գտնուող հայապատկան կալուածի եւ այլ թեմաներու շուրջ հարցեր:

Նոյն օրը, Երուսաղէմի Եբրայական Համալսարանին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցին նուիրուած յուշ-երեկոյ, որու ընթացքին բացման խօսքով հանդէս եկան յուշ-երեկոյի կազմակերպիչ՝ Պրօֆ. Ռուբէն Ամիրտայ, Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս՝ Տիար Յուլակ Մոմճեան եւ Համալսարանի ռեկտոր՝ Պրօֆ. Բարակ Մեդինա, իսկ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան ներկայութեամբ փոխանցեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր ողջոյնի խօսքը:

Չորեքշաբթի, 1 Մայիս.- Ս. Յարութեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 9:15-էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան Ջատկուայ շնորհաւորանքի եկան Ֆրանչիսկեան Քիւսթութը՝ իր միաբաններով: Ժամը 10:15-ին, Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան շնորհաւորելու եկան նաեւ Լատինաց Պատրիարքական Փոխանորդը՝ իր միաբաններով, եւ Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Ուրբաթ, 3 Մայիս.- Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, Զատ-

կական շնորհաւորանքի գնաց Սուրբ Երկրի մէջ Հայերու հետեւակ՝ Ասորի, Ղպտի եւ Հապէշ եկեղեցիներուն:

Երեքշաբթի, 7 Մայիս.- Զատկական տօներու առիթով, Լատինաց Պատրիարքական փոխանորդ՝ Գերշ. Տ. Փիեր-պաթիսթա Արք. Փիցաբալա իր միաբաններով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 9 Մայիս.- Իսրայէլի Անկախութեան 71-րդ տարեդարձին առիթով, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը հանդիպեցաւ Իսրայէլի նախագահ՝ Տիար Ռուվէն Ռիվլինի հետ, ապա ներկայ գտնուեցաւ նախագահական պալատին մէջ տրուած հիւրասիրութեան:

Չորեքշաբթի, 15 Մայիս.- Զատկական տօներու առիթով Պատրիարքարան այցելեց եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Ս. Երկրի Պապական Նուիրակը: Հանդիպման ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը հայկական լանջախաչ մը նուիրեց Պապական Նուիրակին, իսկ վերջինս 2019 թուականի պապական մետալիոնը՝ Պատրիարք Սրբազանի:

Հինգշաբթի, 16 Մայիս.- Ռամալայի նոր զինուորապետ՝ Տիար էլատ Կորէնիի պաշտօնը ստանձնելու արարողութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Դիւանապետ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 18 Մայիս.- Սուրբ Երկրի Քիւսթութը՝ Հայր Ֆրանսեսկո Փաթօն այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ Ս. Յարութեան Տաճարի յատակի նորոգութեան հարցը:

Երկուշաբթի, 20 Մայիս.- Իսրայէլի մէջ Հարաւային Ամերկայի պետութիւններէն Արժանթինի, Մէքսիքոյի, Պրագիլի,

Պերուլի եւ Զիլիի դեսպանները միասնաբար այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Պատրիարքարանին, Երուսաղէմի Հայ համայնքին եւ Սուրբ Երկրի մէջ քրիստոնեայ համայնքին վերաբերող հարցեր:

Երեքշաբթի, 21 Մայիս. Աշխարհի հնագոյն քաղաք՝ Երիքովի զինուորապետը այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ Յորդանան գետի ափին գտնուող հայկական կալուածին հարցը:

Նոյն օրը, Մոսկուայէն Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Սարոյեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 3 Յունիս. Իսրայէլի նախագահ՝ Տիար Ռուվէն Ռիվլին, հաւատարիմ մնալով 2015-ին հաստատած Զատկական տօներու առիթով քրիստոնէական որեւէ համայնքի այցելելու իր սովորութեանը, այցելեց Ֆրանչիսքեաններու Սուրբ Փրկիչ վանք՝ շնորհաւորելու Սուրբ Երկրի քրիստոնեայ բոլոր համայնքներու Սուրբ Զատիկը:

Չորեքշաբթի, 5 Յունիս. Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Իսրայէլի նախագահ՝ Տիար Ռուվէն Ռիվլինի տիկնոջ՝ Նեխամա Ռիվլինի թաղման արարողութեան:

Ուրբաթ, 7 Յունիս. Առաւօտեան ժամը 11-ին, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմէն Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Կարապետեան ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Շաբաթ, 8 Յունիս. Առաւօտեան ժամը 10-ին, Պաղեստինի Աստուածաշնչական Ընդհանուր տնօրէն՝

Տիար Նաշաթ Ֆիլմոն այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 13 Յունիս. Երեկոյեան ժամը 7-ին, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Տիրան Աբղ. Յակոբեանի, ներկայ գտնուեցան Իտալական Ընդհանուր Հիւպատոսարանի կողմէ կազմակերպուած Իտալիայի Ազգային օրուան նուիրուած երեկոյին:

Երկուշաբթի, 17 Յունիս. Երեկոյեան ժամը 6-ին, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Իսրայէլի մէջ Հոլանտայի դեսպան՝ Տիար Beschoor Plug-ի կողմէ կազմակերպուած ընդունելութեան:

Հինգշաբթի, 20 Յունիս. Երուսաղէմի մէջ Մեծ Բրիտանիոյ Ընդհանուր Հիւպատոսարանի կողմէ Թագուհի էլիզապէթ Բ.-ի 93-րդ տարեդարձին առիթով տրուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան եւ Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Երեքշաբթի, 25 Յունիս. Զիլիի նախագահ՝ Տիար Սեպաստիան Պիներա այցելեց Ս. Յարութեան Տաճար: Տաճարի մուտքին ան դիմաւորուեցաւ Ս. Յարութեան տաճարի փոխ տեսուչ՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի եւ միւս յարանուանութեանց փոխ-տեսուչներու կողմէ եւ առաջնորդուեցաւ Ս. Գրեգման:

Չորեքշաբթի, 26 Յունիս. Նիւ Եորքէն եւ Նիւ Ճըրսիէն ուխտաւորներ այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Կիրակի, 30 Յունիս. Յուդայի եւ Սամարիոյ նոր կառավարիչ՝ Տիար Ռասան Ալիանի պաշտօնը ստանձնելու արարողութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Երեքշաբթի, 2 Յուլիս.- Ամերիկայի Անկախութեան օրուայ առթիւ Երոսաղէմի մէջ ԱՄՆ դեսպանատան կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գրտնուեցաւ Ս. Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 14 Յուլիս.- Ֆրանսայի Անկախութեան օրուայ առթիւ Երոսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր հիւպատոսարանի կողմէ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան եւ Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Երեքշաբթի, 16 Յուլիս.- Առաւօտեան ժամը 9:30-ին Պատրիարքարան այցելեցին եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցան Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան եւրոպական տարածաշրջանային գրասենեակի տնօրէնի պաշտօնին համար Հայաստանի Հանրապետութեան կողմէ առաջադրուած թեկնածու՝ Տօթթոր Թաթուլ Յակոբեան եւ 2016 թուականին Հոլիվուդի «Լաւազոյն գեղարուեստական ֆիլմ» մրցանակին արժանացած Արցախեան պատերազմին

նուիրուած «Թեւանիկ» շարժապատկերի հեղինակ՝ Տիար Ճիւան Աւետիսեան: «Թեւանիկ» շարժապատկերը երեկ հեղինակին կողմէ ցուցադրուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի փոքր սրահին մէջ:

Երկուշաբթի, 22 Յուլիս.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Ֆրանսայէն Տաճարական Ասպետներ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Կիրակի, 28 Յուլիս.- Երեկոյեան ժամը 4-ին, Մեքսիքոյի Միջազգային Յարաբերութիւններու տնօրէն՝ Օր. Սոնիա Առաքելեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երկուշաբթի, 29 Յուլիս.- Առաւօտեան ժամը 10-ին, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան ներկայ գտնուեցաւ Իսրայէլի նախագահական պալատին մէջ խորուածիոյ նախագահ Տիկին՝ Kolinda Grabar-Kitarović-ի դիմաւորութեան արարողութեան:



ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդեսը հիմնադրվել է 1866-ին, պաշտօնաթերթին է Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան և լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ զատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ այլ բնոյթով նիւթեր:

Յօդուածները կ'ընդունուին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով, նախընտրաբար 10-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ (Word 2007-2010), երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt: Յղումներու տառատեսակը եւս պէտք է ըլլայ՝ Sylfaen, տառաչափը՝ 10 pt:

Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուններէ ներս, Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին և նախասիրութեան:

Յօդուածներ եւ այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկւին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

Մ. Գ. ԾԱԼԵԱՆ

Հոսաաւորչի կանթեղը

110

ԱՐՈՒԵՍՏ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Երուսաղէմի առաջին լուսանկարիչը

111

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇՈՏ ԳԱԼՍՏԵԱՆ

Արեւելահայ գեղարուեստական վաւերագրութեան
ժանրի հիմնադները

113

ՌՈՒԶԱՆՆԱ ԳԱՐԳԱՆՅԵԱՆ ԵՒ ՎԱԼՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ժողովրդա-խօսակցական դարձուածքները
հայերէնում եւ անգլերէնում

124

ԳՐԱԿԱՆ

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Կարապետ Արքեպիսկոպոս Պալատեցու
«Ծանուցումն ի վերայ Գլխադրին» երկը

129

ԱՐԹՈՒՐ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Ծնողապանութեան հոգեբանական հիմնախնդիրը՝
ըստ Բաֆֆու «Սամուէլ» պատմավէպի

133

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Ճշմարտութեան հակոտնեաների տեղն ու դերը
իրաւա-քաղաքական խօսույթում

139

ՅՈՒԵԼԵԱՆՆԵՐ

ԳԷՈՐԳ ԱՔԵՂԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարան
(Հիմնադրման 90-ամեակին առթիւ)

152

ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Մթնածորի լուսաւոր հանճարը՝ Ակսել Բակունց
(Ծննդեան 120-ամեակի առթիւ)

156

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՀՈՒՐԾԱՄ

Ոսկի դղեակը 162

ՆԱՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՕՂԱՐԵԱՆ

Մենք էջմիածին մը ունինք 165

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՅԵԱՆ

Սուրբ Յարութեան Տաճարի սալաքարերու նորոգութիւն 168

ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Տարեկան տեղեկագիր ժառանգաւորաց Վարժարանի
եւ Ընծայարանի 2018-2019 170

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարեպաշտական նուիրատուութիւն մը Առաքելական Ս. Աթոռոյս 173

Կազմաւորում «Արմատներ» երիտասարդաց յանձնախումբի 174

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Հայոց Յեղասպանութեան 104-րդ տարելից 175

Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք
Սրբազան Հօր խօսքը Հայոց Յեղասպանութեան 104-րդ տարելիցին 175

Ուխտագնացութիւն դէպի Պարոնտէր՝ «Յիշատակի պուրակ» 176

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Շրջանաւարտից հանդէս 176

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամալերջի հանդէս 177

Օծում՝ Ս. Հռիփսիմէի մատրան նորահաստատ խորանի
ի Ս. Հրեշտակապետաց 177

ՀԵՄ-ի 64-րդ Բանակումի Խարոյկահանդէս 177

Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք
Սրբազան Հօր խօսքը ՀԵՄ-ի 64-րդ Բանակումի Խարոյկահանդէսին 178

Խումբ մը հրեաներու այցը Պատրիարքարան 178

ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒՆ ՆԵՐՍԷՆ

Եկեղեցականք - Բեմականք 179

Պաշտօնականք 186

Յօդուածագիրներու ուշադրութեան 190

Ծաղկազարդ



*Զատիկի «Անդաստան» վանքի մեծ բակին մէջ
հանդիսապետութեամբ Ամենապատիւ Պատրիարք Ս. Զօր*



Աւագ Ուրբաթ: Կարգ Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի



*Ասորւոց նոր եպիսկոպոս՝ Գերշ. Տ. Գաբրիէլ Տահոյի
պաշտօնական մուտքը Ս. Յարութեան Տաճար*



*Իսրայէլի Խորհրդարանի անդամ եւ Երուսաղէմի Հին Քաղաքի՝ Հրէական Թաղամասի
բնակիչ՝ Տիար Իցիսակ Փինտրուսի, Ռաբբի՝ Դաւիթ Ռօզէնի, Ոստիկանութեան
սպաներ եւ Երուսաղէմի միջ-մշակութային կեդրոնի տնօրէն՝ Տիար Խակի Ակմոն
Շնիրի եւ իր քարտուղար՝ Մերաւ Սթէյնի աչցը Պատրիարքարան*



Իսրայելի Անկախութեան 71-րդ տարեդարձին առիթով Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը հանդիպեցաւ Իսրայելի Նախագահ Տիար Ռէուվէն Ռիվլինի հետ



Իսրայելի Նախագահ Տիար Ռուվէն Ռիվլին Ջատկական տօներու առիթով այցելեց Ֆրանչիսկեաններու Սուրբ Փրկիչ վանք՝ շնորհաւորելու Սուրբ Երկրի քրիստոնէայ բոլոր համայնքներու հոգեւոր պետերուն



«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՍԻՈՆ»-ի խմբագրությունը կը փորձէ ամբողջացնել և արդիականացնել բաժանորդներու ցանկը: Բաժանորդագրուեցէ՛ք Նոր շրջանի «ՍԻՈՆ»-ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցաւ և կամ այցելելով մեր կայքէջը:

Հաճեցէ՛ք ներքեւի կտրոնը յստակ և գլխաւոր տառերով ամբողջացնել և փութով մեր
E-mail: sionjournal@yahoo.com հասցէին ղրկել:

ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ

Անուն, Մականուն. _____

Տիտղոս. _____

Կազմակերպութիւն. _____

Հասցէ. _____

Կայքէջ. _____ E-mail address _____

Տարեկան բաժանորդագրութիւն՝ \$150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance as soon as possible. You can also write to our E-mail: sionjournal@yahoo.com.

Name, Surname. _____

Title. _____

Organization. _____

Address. _____

Annual Subscription \$ 150 USD

Send your checks to: Armenian Patriarchate of Jerusalem P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

E-mail: sionjournal@yahoo.com

